

899.962.1

2-120.

31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1.

Հայաստանի Գրադարան:

Ա. ՅԱԳՍԵԼԻ

„ՍԻՐԻՐԱԿԱՆ“

Կոմ. 4 գործ.



65

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



1908 թվական

899.962.1

4-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

1-2
2

899.962.1
У - 12

10 NOV 1911

„Ս Ի Բ Ի Ր Ա Կ Ա Ն“

899.962.1
У - 124.

Կոմերիս 4 զործ.


ՀԵՂ. ԱԻ. ՅԱԳՍՐԵԼՈՒ

65

Թարգմանութիւն վրացերէնից

ԳԵԴԵՆ ՍԻՐԱՆԵԱՆՑԻ

Зарисано в инвентарной ...
на стр. 153 № 2057/32865



ԹԻՖԼԻՍ

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԻՑ. 7.
1908

Настоящая пьеса, подъ загл. „Ссылный“ разрѣшена г. Главно-
начальствующимъ для представлѣнія на сценахъ края. Сентября
4 дня 1904 г. Тифлисъ.

Предсѣдатель Комитета. *Гакель*



42/8-78

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայ բեմի վերջին տասը տարուայ արած յառաջադիմութիւնը դաւառում, նրա ապագայ զարգացման մեծ գրաւականն է:

Ձր կայ հայաբնակ մի փոքր քաղաք կամ մի մեծ գիւղ, որտեղ տարեկան մի քանի ներկայացումներ տեղի չունենան. իսկ մեծ քաղաքներում կան և ժողովրդական թատրոններ, որոնք բուն ժողովրդական հոգի են կրում:

Որքան որ ծանր է առհասարակ ժողովրդի կրթութեան գործը, նոյնքան էլ մեծ է և ժողովրդական թատրոնի կրթիչ նըշանակութիւնը:

Ինչպէս որ ամեն մի գիտութիւն ունի իւր զարգացման աստիճանները, այդպէս էլ թատրոնական գեղարուեստն է աստիճանաբար զարգանում. հասարակութեան խաւերը, միշտ զանազանազանվում են իրարից որոշ հայեացքներով և ուղղութեամբ, ուստի և նրանց մատակարարվող սնունդը միևնոյնը չի կարող լինել: Հէնց այդ հիման վրա էլ պէտք է ի նկատի ունենալ, որ ժողովրդական թատրոնը մեծ գործ է և պէտք է զգուշութեամբ վերաբերուել այդ բանին:

Թատերասէրները չպէտք է յանձն առնեն խաղաղալու այնպիսի բարդ պիէսներ, որոնց բովանդակութիւնը անմատչելի է ժողովրդին, այլ պէտք է բաւականանան 1 կամ 3 գործ. պարզ բովանդակութեամբ պիէսներով:

Այդ տեսակէտը առաջնորդ ունենալով, սիրողները խումբը պէտք է խուսափի բարդ և ուժեղ դրամաներ ներկայացնելուց, որովհետև ուրախ բովանդակութիւն ունեցող կոմեդիաները սիրողները միշտ կը խաղան աւելի աջող, քան թէ որեւէ լուրջ դրամա, որը պահանջում է սիրողներից որոշ հմտութիւն, փորձառութիւն, և տեխնիկական վարժութիւն. բացի դրանից կոմեդիաներ ներկայացնելը բեմասրահական տեսակէտից աւելի հեշտ է և աւելի

պարզ, որովհետեւ բարդ և մեծ դեկորացիաներ չէ պահանջում, մի րան որ գաւառում շատ դժուար է ձեռք բերվում. կօմեդիաների և առհասարակ թեթեւ պիէսների գործողութիւնները կատարվում են ըստ մեծի մասին հասարակ սենեակում կամ պարտիզում:

Աչքի առաջ ունենալով այս իրողութիւնը և այն, որ թատերասէրները միշտ պիէսների կարիք են ունենում, միտք յղացաւ մեր մէջ պարբերաբար առանձին գրքոյկներով պիէսներ հրատարակել «ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» վերնագրով:

Ի նկատի ունենալով գաւառական բեմի սիրողների վերոյիշեալ պայմանները, մենք սկզբումը կը տանք թեթեւ, ինքնուրոյն, թարգմանական և փոխադրած պիէսներ. իսկ ժամանակի ընթացքում երբ ժողովրդական բեմը կը զարգանայ և աւելի պահանջ կը գաղցվի կարելի է տալ աւելի բարդ և կլասիք պիէսներ:

Ձեռնարկելով այս ծանր գործը և չը խնայելով մեր եռանդն ու փորձառութիւնը, խնդրում ենք թատերասէրներից և յարգելի հասարակութիւնից օժանդակել մեզ թէ պիէսներով և թէ խորհուրդներով, որը կընդունենք մեծ շնորհակալութեամբ:

ԳԵՂԷՈՆ ՄԻՐԱՂԵԱՆ



ԱԿԱՆՏԻ ՅԱԳԱՐԷԻ

ԱՌԿՍԷՆՏԻ ՅԱԳԱՐԵԼԻ

1857—1902

Հայ հասարակութիւնը շատ քիչ է ծանօթ մեր դրացի վրաց դրամատուրգների հետ, այդ պատճառով առաջին գրքոյկում տալիս ենք Աւ. Յագարելու «Սիրերական» կոմեդիան, որը համարւում է նրա գրութեան մէջ լաւագոյնը:

Աւ. Յագարելին գիւղական քահանայի որդի էր. նա սահմանափակ կրթութիւն ունէր, բայց բնութիւնից օժտուած էր ձիրքով և իւմօրով:

Նա բուն ժողովրդի զաւակ լինելով, նուիրեց իրեն, ըստ չափու կարողութեան, նոյն այդ ժողովրդի բարքերի ուսումնասիրութեանը, իրեն զեկավար ունենալով՝ հին շկօլայից—Գ. Էրիսթովին և Զ. Անտօնովին, իսկ նոր շկօլայից Գ. Սունդուկեանցին:

Այո, Աւ. Յագարելին Գ. Սունդուկեանցի յաջող հետևողն է, կարելի է ասել՝ նրա տաղանդաւոր աշակերտն էր:

Լինելով ուրախ, վառվռուն երիտասարդ և աչքի առաջ ունենալով Գ. Սունդուկեանցի «Կակուլիներին» և Գ. Էրիսթովի «Կնիազներին», սա կապում է այս երկու միջավայրը և 1879 թ. աշնանը հանդէս է գալի վրաց հասարակութեան առաջ իր անդրանիկ գրութեամբ՝ «Ինչ տեսել ես, էլ չես տեսնի», որի մէջ շատ աջող նկարագրում է մի շարք «ղարաշուխալու» կիստօների տիպեր, իսկ միւս կողմից ճորտութեան իրաւունքներից չը հրաժարուող կնիազի տիպը:

Վրաց հասարակութիւնը և մամուլը ողջունեցին սրա երևան գալը և պիէսը արժանացաւ մրցանակաբաշխութեան:

Յաջորդ տարին Աւ. Յագարելին տուեց իր երկրորդ գրութեամբը՝ «Մաթիկօ» անունով դրաման, բայց այս պիէսը առաջինից թոյլ էր և հասարակութեան կողմից էլ սառն ընդունելութիւն գտաւ:

Աւելի փորձառութիւն ձեռք բերելով, միւս տարի տուեց «Խանութ» կոմեդիան. սրա հերոսունու պրօպօստիպն է Գ. Սուն-

դուկեանցի «Ստաթարալայի» խամփերին: Այս պիէսը մեծ աջողութիւն գտաւ վրաց բեմի վրա և նոյն իսկ յայտնի է և հայ հասարակութեանը:

Մնացած գրուածքներից աւելի աչքի ընկնողն է «Սիրիբա-կան» կոմեդիան, որը տեխնիկայի կողմից աւելի բարձր է միւս-ներից. այս պիէսում Մազուլեանի տիպը յիշեցնում է Զիմզի-մովին, իսկ Պետօն՝ Կակուլուն:

Հանգուցեալի վերջին գրուածքը—«Ծիածան» կոմեդիան, որի մէջ ուզում էր նկարագրել վրաց ինտելիգենցիան, ունեցաւ նոյն անյաջողութիւնը, ինչ որ Գ. Սունդուկեանցի «Ամուսիններ» պիէսը:

Մէկ խօսքով Ա. Յագարելին չը հեռանալով Գ. Էրիսթովից, ըստ չափու կարողութեան մօտենում է Գ. Սունդուկեանցին. սա մտնում է նոյն խաւերը, սրա պիէսի գործող անձնաւորութիւն-ները նոյն շրջանիցն են, թէև սրա հերոսները մարմնացած տի-պեր չեն, իսկ գրուածքներն էլ բարձր նկարագրող բարձր կո-մեդիաներ:

Ա. Յագարելին վրաց թատերական գրականութեան մէջ նշանաւոր, պատուաւոր տեղ է բռնում. սա նշանաւոր քայլ արեց զէպի առաջ թատերական գրականութեան մէջ՝ մտցնելով իր պիէսներում կոմեդիայի նոր պայմանները և նա այդ կողմից վրաց թատերագրութեան մէջ առաջին պիտներն է հանգիստանում:

Ա. Յագարելին, բացի ինքնուրոյն գրուածքներից, ունի և բազմաթիւ լաւ թարգմանութիւններ և աշուղ փոխադրութիւններ ռուսերէնից, որոնք ինքնուրոյն գրուածքներից չեն զանազանում:

Սրա հեղինակութիւնների և թարգմանութիւնների լեզուն վերին աստիճանի սահուն և կոկիկ է. սրա գրուածքների աղը իմօրով լիքը բառախաղն է. սա յայտնի էր և իբրև տաղանդա-ւոր ֆելետոնիստ:

Ա. Յագարելու գրուածքների շնորհիւ վրաց հասարակու-թիւնը աւելի սերտ կապով կապուեց թատրոնի հետ, սրա շնոր-հի՝ թատրոնը աւելի խորը արմատ գցեց ժողովրդի սրտի մէջ և դարձաւ ազգային հիմնարկութիւն:

Վրաց զբամառուրդներից ոչ մէկը չի վայելել Յագարելու նման ժողովրդականութիւն և այդ պատճառով էլ նրա անունը կենդանի կը մնայ վրաց հասարակութեան և թատերական գրա-կանութեան մէջ:

Գ. ՄԻՐՈՂԱՅԱՆ

«Մ Ի Բ Ի Ր Ա Կ Ա Ն»

Կ օ մ. 4 գործողութեամբ Ա. Յագարելու

Թարգմանութիւն վրացերէնից

Գ Ե Դ Է Ո Ն Մ Ի Ր Ա Ղ Ե Ա Ն Յ Ի

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Տրիփոն Բաղդանիշ Մազուլեան, իջարագար 50 տարեկան.

Թազազուլ, սրա կինը, 38 տարեկան.

Նարգիզ, սրանց աղջիկը, 18 տարեկան.

Իպպօլիտ Պօլիեկտովիչ Բլէսով, փաստաբան, 35 տարեկան.

Եօվանէ, ուստաբաշի, սիրիբական, 60 տարեկան.

Քալի, սրա կինը, 45 տարեկան.

Նիկօլ } սրանց որդիքը 25 տարեկան

Վարօ } 24 տարեկան

Ստեփան Մակարիչ, Վարօի ամուսինը, Մազուլեանի ընկերը, 35 տարեկան.

Կավկալեցի Պետօ, Նիկօլու բարեկամը, քաղքի տղայ, 27 տարեկան.

Մաշօ, Մազուլեանի աղախինը, 20 տարեկան.

Արտէմ, զուքնի աշկերտ, 15—16 տարեկան.

Անցքը պատահում է Թիֆլիսում.

1 և 3 գործողութիւնները կատարւում են Մազուլեանի տանը, իսկ 2 և 4, Նիկօլու տանը:

«Մ Ի Բ Ի Ր Ա Կ Ա Ն»

Կօւմ. 4 գործ.

Առաջին անգամ ներկայացրել են թատերասերները Թիֆլիսի ժողովարանում, խմբի ընծիսօր Գ. Միրադեանցի ըննեֆիսին, 1905 թ. փետրվարի 20.

Տրիփոն Բաղդանիչ Մազութեան	Պ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Թաղազուլ, սորա կինը	Տ. ՅԱԿՈԲԵԱՆ
Նարգիզ, սրանց աղջիկը	Տ. ՄԱՄՈՒԼԵԱՆ
Իսպիտ Բլէսով, փաստաբան	Պ. ՇԻՐԻՆԵԱՆ
Եօվանէ, սիրերական	Պ. ԳԱԼՍՏԵԱՆ
Քալի, սրա կինը	Տ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Նիկօլ	Պ. ՎԱՆՇԻՐ
Վարօ	ՕՐ. ԲՈՒԶՈՒԿՈՒՐԻ
Ստեփան Մակարիչ, Վարօի ամուսինը	Պ. ՂՈՒՇԶԵԱՆ
Կավկազեցի Պետօ, Նիկօլի բարեկամը	Պ. ՄԻՐԱՂԵԱՆ
Մաշօ, Մազութեանի աղջիկը	ՕՐ. ԲԷԳԻՋԱՆԵԱՆ
Արտէմ, դուքնի աշկերտը	Ա. Ա.

1 և 3 գործ. կատարվում է Մազութեանի տանը. իսկ 2 և 4 գործ. Նիկօլի տանը

ԳՈՐԾՈՂ ԱՆՉԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻԻՆՐ

ՄԱՋՈՒԹԵԱՆ, 50 տարեկան, միջին հասակով, տգեղ դէմքով, երեսը ամեկած: Եւրոպական հագուստ՝ սպիտակ շապիկ, ժիլէտ և պանտալօն, սև սերթուկ և գլխարկ—Ֆուրաշկայ. ոսկէ ժամացոյց, թաշկինակ. շարժուածքը և խօսուածքը ծանր:

ԹԱՋԱԳՈՒԼ, 38 տարեկան, գլխի վրայնակ գուգսով՝ չիքիլայ, ճակատի աղլուխ և գոտիկ, շքեղ գունաւոր հագուստ, ժամացոյց, ակնեղէններ. խօսակցութիւնը և շարժուածքը ծանր:

ՆԱՐԳԻԶ, 18 տարեկան, միջին հասակով. եւրոպական հագուստ գլուխը բաց. շարժուածքը և խօսուածքը համեստ:

ԲԼԷՍՈՎ, 30 տարեկան, գեղեցիկ կազմուածքով, հաճելի դէմքով, սև մազերով և կարճ մօրուքով. հագուստը եւրոպական, ձեռնոցներով, գլխարկը—ցիլինդր. շարժուածքը և խօսակցութեան ձևերը սալօնական:

ԵՕՎԱՆԷ, 60 տարեկան, սպիտակ, երկայն մազեր և մօրուք 2-դ և 3-դ գործողութիւնների մէջ, արսորականի կարճ շինել, չէքմէք և ձեռնափայտ. իսկ 4-դ. գործ. մէջ մազերը և մօրուքը մի փոքր կարճ և մի ձեռք քաղքի ընտիր շոր՝ սև կաբայ, արխալուխ, լայն սև մահուդից անդրաւարտիկ, թաշկինակ և կարճ ձեռնափայտ. շարժուածքը և խօսուածքը ծանր և ագնիւ:

ՔԱԼԻ, 45 տարեկան, միջին հասակով, գեղեցիկ դէմքով. վրաց հագուստ՝ գլուխը վրացնակ, հասարակ չիքիլայ, մուգ ճակտի աղլուխ, առանց քորոցի, սև գլխի փաթաթան, մուգ դէլիայ. շարժուածքը ծանր:

ՆԻԿՕԼ, 25 տարեկան, գեղեցիկ դէմքով ու կազմուածքով, փոքր մօրուքով, միջին հասակով, եւրոպական հագուստ. ձևերը համեստ:

- ՎԱՐԹ, 24 տարեկան, միջին հասակով, վայելուչ դեմքով. վրաց-
նակ համեստ հագուստ:
- ՍՏԵՓԱՆ, 40 տարեկան, միջին հասակով, փոքր ինչ յիմար դեմ-
քով, երեսը ածելած. վաճառականի հագուստ՝ սև մա-
հուդից կարայ, արխալուխ մահուդից, լայն անդրավար-
տիկ, մետաքսեայ գոտի, ֆուրաշկայ:
- ՊԵՏՕ, 35 տարեկան, միջին հասակով, երեսը կարմիր ու գեղե-
ցիկ, սև մագեր, բարակ յոնքեր, կարճ մօրուք և բա-
րակ բիսեր. հագին ունի կինուոյի հագուստ՝ կարմիր
շապիկ, կինուոյի սև արխալուխ, սև շալից չոխա և
լայն շալուար, ոտին պաժառնու չստեր, գլխին մորթէ
գտակ, մէջքին գոտիկ արծաթէ կամ մետաքսեայ:
- ՄԱՇՕ, 20 տարեկան, միջին հասակով, գեղեցիկ դեմքով, սև մա-
ղերով. չիթէ դէրիայ, գլուխը բաց:
- ԱՐՏԷՄ, 16 տարեկան, գեղեցիկ տղայ, սև, կարճ մագերով, առանց
մօրուքի. կինուոյի սև արխալուխ, լայն շարուար և
չստեր:



ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ I

Բեմը ներկայացնում է հարուստ կահաւորված դահլիճ Մազու-
թեանի տանը. երեք դռնով մէջտեղը և կողքերին: Աջ կողմը բե-
մից—Նարգիզի սենեակն է, ձախ կողմը—ծնողներինը. վարագոյրը
բարձրանալիս բեմի վրա են ՆԱՐԳԻԶԸ և ՄԱՇՕՆ:

Տ Ե Ս Ի Լ Ի

ՆԱՐԳԻԶ ԵՒ ՄԱՇՕ

ՆԱՐԳԻԶ

(Նստած է դիվանի վրա և թուղթ է բաց անում)

ՄԱՇՕ

(Զեռքերով յենուած է սեղանի վրա և նայում է թղթերին. յան-
կարձ) Կա է, Կա, (ծիծաղում է) Աստուծո՛ւ անիծէ. ինչ ամեն
տիղ դա է ցցվում քո՛ւ.

ՆԱՐԳԻԶ

Ո՞վ Կա, ինչի՞ս ասում:

ՄԱՇՕ

Ո՞վ, քու աղվակատը:

ՆԱՐԳԻԶ

Իմը ինչո՞ւ կը լինի, Կա աչքն էլ կարեմ, ամբ
ի՞նչն ունի Կա նման:

ՄԱՇՕ

Բաս աղուաւի կիկօն ուրիշ ո՞վ կուլի, թէ Կա չէ.

իլաբիմ՝ եփոր փրակ ունէ հագին, տիրն ու տիրը ակռաւի կիկօ է (ծիծաղում է)։

ՆԱՐԳԻԶ

(Զարացած խառնում է թղթերը) Աբա մէկ էլ բաց անենք (բաց է անում) ու թէ էլի էն սև մարդն է դուրս եկել, Աստուած է վկայ, թղթերը բոլորը կը պատռտեմ։

ՄԱՇՈ

(Խօսում է, թղթերին նայելով) Մա ճամփայ է, ով որ վուր գալիս է... սիվիր ունէ հագին... էս կշտին վուր ցցվիլ է, սա էլ ով է... աղջի, փուղ է գալի... ճհ, ճհ, ճհ, ինչքան է... սա էլ ով է թրե գալի... մուլափ, մուլափ (յանկարծ ծիծաղում է) էլի նա է, էլի նա է (ծափ է տալիս և ծիծաղում) սրա աչքն էլ, ի՜նչ ետխալամիշ էլաւ։

ՆԱՐԳԻԶ

(Զարացած խառնում է թղթերը և վեր կենում) Ճիշտ էլ, ինչ քամբաղդութիւն է, միշտ նա է դուս գալի. (Մաշօն ծիծաղում է) դու էլ ի՜նչ ես ղնջրտվում, սիրտս աւելի ես տըրաքեցնում։

ՄԱՇՈ

Վո՛ւնց չը ծիծաղիմ, վուրթէնը վուտը չիս դնում, գիփ նա է առջիվդ կանգնած։ Նալիումը վուր մտիկ ըլիս տալի, հալիլի էգնէն նա է կանգնած, շվաքի պէս էգնէտ ման է գալի. աղջի կո՛ւլի քու սիրան էլ է գնդգնդում. տեսնինք թէ...

ՆԱՐԳԻԶ

(Ժպտալով) Ա՛յ էնէնց օր աւերնայ քիզ էլ ու նրան էլ։

ՄԱՇՈ

Արմնում իմ, ինչկիլի չիմի ի՜նչի ուշացաւ. ամա ջէր 12 սահաթը չը կայ. հիմի զլպտած համեցէք կօնէ։ (Իբր ներս է գալի, նմանեցնելով) Բարեաւ. Ձեզ (մօտենում է Նարգիզին և ձեռք է մեկնում) կասկած չը կայ ողջ առողջ էք։

ՆԱՐԳԻԶ

(Կամենալով գլխին խփել) Լաւ է, մի կատղի թէ չէ ես գիտեմ քոնը...

ՄԱՇՈ

Ոյսօր հիանալի գոյնի էք. Նազելի, քնքոյշ. Ձեր դէմքը հոգւոյ հայելու նման է։

ՆԱՐԳԻԶ

Լաւ է, Մաշօ, թէ չէ մօրս արեւ վկայ, եթէ բռնեցի...

ՄԱՇՈ

Իժում խօ նրա խօսիլը առանց հանգերու եօլա չէ գնում (կանգնում է մէջ տեղը, նմանեցնելով)

«Ես առանց քեզ ոչինչ բանի էլ պէտք չեմ, ինչպէս առանց վարդ մայիսը սքանչելի. (չոքելով Նազ մի անիր, խղճա ինձ, թող պաշպչեմ Գո աչքերը քնքոյշ ու ջերմ զգացմամբ լի^{*)})

ՆԱՐԳԻԶ

(Քաշուելով գէպի Մաշօն)։ Ես քեզ չասի, որ այդ յիմարութիւնները մի ասի ինձ հաց, չուտէք դու էլ ունա էլ, մինչև եդ օրին հասնէք... պաշպչեմ...

ՄԱՇՈ

(Վեր է թռչում ու փախչում)։ Գիմիս, խիստ նազ արա։ Թէ Աստուած կու սիրիս, դրուստ ասա, սրտիդ խօ դո՛ւր է գալի։

ՆԱՐԳԻԶ

Ձեր արեւ դրանից աւել մտածելու բան չունեմ։

ՄԱՇՈ

Էն՝ ես գիդիմ, թէ քիզ պէս աղջկերանցը վունց հիշտ փափկեցնումին։ Շատ բան կի չէ հարկաւուր, օդոնդ ձիզ գովին, ձիզ համա վարդի ու մայիսի, մայիսի ու վարդի

*) Այս պիէսի մէջ եղած ոտանաւորները թարգմանել է Գ. Բարխուդարեանը։

խաղն ասին, դուն էլ խօսուսա բլբուլ կու կարվիս ու մէկ էլ տեսար վուր էս միւր բարիշին իր ձգած աղվա-
կատով թոցնում ին եգեղեցու կուրը փսակուելու...

ՆԱՐԳԻԶ

Ի դուր ես կարծում Մաշօ. էդ օրին երբէք չես հաս-
նի, ումնոր ես սիրում եմ և խօսք եմ տուել դու ինքդ
լաւ գիտես և թէ ապրեցայ կը տեսնես, որ ես նրան չեմ
դաւաճանի:

ՄԱՇՕ

Աստուծ անէ, վուր էտէնց ըլի. ամա 'ես էնդումէն
իմ վախենում, վուր քու հէրն ու մէրը մտքումը դրիլին
ու վայ թէ դուրթ էն աղվակատին կպցնին: Ինչ անիմ
սիրտս մեռնում է, Նիկօլը վուր միտս է գալի. իրիգուն
ինչկլի սահաթի երկուսը քու հէրն ու էն աղվակատը տաք
տաք ինչ որ խօսում էին: Դիւի ինչոր վէքիլնեղու վրա էին
խօսում. լաւ կի չիմացայ, ամա մնամ վուր Նիկօլու ու
Ստեփանի համա էին ասում, թէ նրանք գուրձը էնէնցին
տանում կօսէ, վուր սաղ մաղաղիէն... (Կարում է)

ՆԱՐԳԻԶ

Գիտեմ:

ՏԵՍԻՒ 2.

(Նոյնը և ԹԱԶԱԳՈՒԼ, որը դուրս է գալիս իր սենեակից).
ԹԱԶԱԳՈՒԼ

Վուրթի, Նարգիզ, իմ տէրոգորմէն խօս չի՞ս տեսի.
վուրդի որ դրի ու չիմ կանացի գթնի:

ՆԱՐԳԻԶ

Չը գիտեմ, մայրիկ, ես չեմ տեսել:

ԹԱԶԱԳՈՒԼ

(Նստում է դիվանի վրա) Ինչ լաւ օր է էսօր, մէ մուշ-
տաիդի կուրը անց կենանք, սիրտս ինչոր ծանդր է:

ՆԱՐԳԻԶ

Անց կենանք, մայրիկ, լաւ կը լինի:

ԹԱԶԱԳՈՒԼ

Ասիլ ի՞նչ էկիպաժը լծին:

ՆԱՐԳԻԶ

Չէ:

ԹԱԶԱԳՈՒԼ

Վուրթի, Մաշօ, Նիկիտին ասա էկիպաժը լծէ:

ՄԱՇՕ

Պարունիք. (գնում է դէպի միջի դուռը)

ԹԱԶԱԳՈՒԼ

(Մաշօին) Մուլափ. բջիլքը օթախնիրը սրբումին,
Ինչկլի չը պրծնին չը հիռանաս:

ՄԱՇՕ

Ուրիշ խօս վունչիչ չի՞ք հրամայի:

ԹԱԶԱԳՈՒԼ

Վունչիչ, վուրթի. (Մաշօն դուրս է գնում. Նարգիզին)
Ինչկլի տասերկուսը մուլափ տանք, կուլի էն աղէն դայ
ու իժում գնանք:

ՆԱՐԳԻԶ

Եթէ գնում եմք, իսկոյն գնանք, էլ ինչո՞ւ սպասենք:

ԹԱԶԱԳՈՒԼ

Ս.մութ է վուրթի, իրիգուն խօսք ավինք, վուր տանը
կուլինք, անպատճառ գուքայ:

ՆԱՐԳԻԶ

Իրիգուն նա այստեղ էր:

ԹԱԶԱԳՈՒԼ

Հա, վուրթի, մէքիչ ուշ էկան նա ու քու հէրը:

ՆԱՐԳԻԶ

Չիմա ամեն օր որ չգայ, չի՞ կարելի:

ԹԱԶԱԳՈՒԼ

Ի՞նչիս ասում, վուրթի. վուր գալիս է, առանց գուրձի
խօս չէ՞ գալի, սաղ միլիօնի գուրձ է շինում հօրդ համա:

ՆԱՐԳԻԶ

Ի՞նչ միլիօնի գործ:



4218.78

ԹԱԶԱԳՈՒՆ

Վա՛, Բագուրի նաւթի դաւօղներու գուրձը, մէ պստի
ինչոր փողրաթ վիկալաւ. էստի է ու մաղաղիէրու գուրձն
է խճճած:

ՆԱՐԳԻԶ

Չէ, մայրիկ, այստեղ ուրիշ պատճառ էլ պէտք է լի-
նի, ինձանից ինչո՞ւ ես թագցնում:

ԹԱԶԱԳՈՒՆ

Ի՞նչը պիտիմ թագցնի քիզմէն վո՛ւրթի. 'ես հիմի էն-
դուր տունն էկայ, վուր քիզ հիզ խօսիմ...էն տղէն քիզ
ուզում է...

ՆԱՐԳԻԶ. (կողմը)

Ես վաղուց այդ գիտէի. (նրան) ես պատրաստ եմ:

ԹԱԶԱԳՈՒՆ

'Ես հանաք չիմ անում, վո՛ւրթի... մինք խօսք էլ տուինք:

ՆԱՐԳԻԶ

Յետոյ առանց ինձ հարցնելու:

ԹԱԶԱԳՈՒՆ

Ինչի՞ չինք հարցնի, վուրթի. առաջուայ ժամանակը
խօ չէ՞ վուր զօռով մարթու տանք: Ամա ինչի՞ն իս փուտը
դնում. լաւ ուսում առած, լուսաուրած, աղվակատ, աշ-
խրքի փուղ է վիկալնում... միը օջախի համա խիստ
պէտքական է:

ՆԱՐԳԻԶ

Փողեր է վերցնում, առաջ այդ պէտք է ասէիք:
Բայց ինձ այս բանն է զարմացնում, թէ ո՞ր փաստաբանը
կարող է իմ հօր առաջը կտրել և թէ հայրս ինչո՞ւ է
ցանկացել սեփական փաստաբան ունենալ, այն էլ փեսայ:

ԹԱԶԱԳՈՒՆ

Քիզամա, վուրթի, դի՛ք քիզ ամա, միզ ի՞նչիս մու-
նաթ անում.

ՆԱՐԳԻԶ

Ինձ համար այդ էլ բաւական է, ինչ որ ունենք, եթէ
միայն կարողացայ բարով վայելել:

ԹԱԶԱԳՈՒՆ

Ինչի՞ պիտի չը վայելիս, վո՛ւրթի, ի՞նչիս ասում:

ՆԱՐԳԻԶ

Չեր կարողութիւնը այն ճանապարհով է ճարած, որ...

ԹԱԶԱԳՈՒՆ

Ի՞նչ ճանապարհով, վուրթի, էտ ի՞նչ սրտի իս:

ՆԱՐԳԻԶ. (առաջ է գալիս, չարացած)

Մայրիկ, Աստուած ունեցէք, Աստուած. վերջապէս
բաւական է: Ուզո՞ւմ էք ասեմ ումն է այս տունը, այս
կարողութիւնը, այն մեծ խանութները. մի խեղճ, անտէր
երեխայից խլեցիք, որը այժմս ձեր օրական մշակն է:

ԹԱԶԱԳՈՒՆ

Վուրթի, ինչի՞ր իս ասում, ո՞վ ապաւ քիզ. ոչ ով չի-
մանայ, ամութ է: Ի՞նչ երեխայ, ի՞նչիս ասում:

ՆԱՐԳԻԶ

Ինչ երեխայ ու Նիկօլը:

ԹԱԶԱԳՈՒՆ

Ինչն է՞ Նիկօլինը, վուրթի, դուն ի՞նչ գիդիս բանը:
Վարցքի համա մօրը, քվիրը պահում ինք. նրա փեսէն էլ
ննգիր է մաղաղիումը, իրան էլ լաւ տօնլուղ ինքատալի...

ՆԱՐԳԻԶ

Ապա իրիգուն ինչ վէքսիլների և խանութների մա-
սին էին խօսում հայրս ու էն աղվակատը...

ԹԱԶԱԳՈՒՆ

Պարտին վուրթի, զօռով խօ ոչովիմէն վունչիչ չի՞նք
խլում...

ՆԱՐԳԻԶ

Օ՛հ, այն ես գիտեմ. այժմ այն մարդը պէտք է ճանկա
ընկնի, որ իմ ձեռքերովս խեղտեմ, աչքերը հանեմ, այս-
քան էլ անխղճութիւն (լաց է լինում, լավում է դանդի ձայն):

ԹԱԶԱԳՈՒՆ. (փաթաթվում է)

Սիրտդ հանգստացրու, վուրթի: Էտ մարթը էսօր
միզամա շատ հարկաւուր է: Լաւ ճանչցի վուրթի, ումիկ
ունիմ վուր կու հաւնիս ու կու սիրիս... թէ չէ ու իժում

ԹԱԶԱԳՈՒԼ

դռնն գիդիս... քիզ դիփ սոճա ին ասի, վուրթի: Գլուխդ մի փշացնի, բողազներուս մի դուս կտրի. արի, վուրթի, սուսն ու զուրթը իմաց անիմ (գնում են Թագադուլի սենեակը) արի, վուրթի, մնամ նրանք էլ էկան:

Տ Ե Ս Ի Լ III.

ՄԱԶՈՒԹԵԱՆ և ՔԼԵՍՈՎ (մտնում են միջի դռնից)

ՄԱԶՈՒԹԵԱՆ. (Առաջուց ներս մտնելով այս ու այն կողմն է նայում, մարդ չը կա՞յ արդեօք): Հա, էն իմ ասում է... էս հինգ տարի է, ինչ որ ձեն դուս ննգաւ թէ մեռաւ կօսէ. 'ես կամաց կամաց իմ գուրձս կցեցի, ամա էլի չէի աւետում, վայ թէ... մէ խօսքով, դռն գլխի կու ննգնիս էլի...

ՔԼԵՍՈՎ. (Գլխով նշան է տալի)

Գիտեմ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

էս մէ ամիս կուլի, էն առջի գամը, քիզ հիդ վուր ծանօթացայ, էնդդանց էկած մարթ տեսայ, վուրնոր ասաւ թէ խիզճ Եօվանէն դուրթ մեռաւ կօսէ. վուրթուն էլ ասաւ, մէնակ ինձ կի չէ... էհ, մեռաւ, ինչ անինք, վատ մարթը պիտի վաղ մեռնի, վուր լաւ ըլի: Ինքը խօ մաղբուն էլաւ ու մաղբուն, կինաղամ էն անիծածը ինձ էլ խառնից մուր-տար բանումը... ամա էս բանը վուր պատմիմ, շատ հիւստ կեհայ (մտածում է) 'ես ի՞նչ էի ուզում ասի, գիդիս... հա, էսօր դռն էս օջախի վուրթի իս... ինչուր ճանգներուս կու գցինք քիզ կու մնայ, վուրթի, ու իմ աղջկան... իմ-քին էլի ասիմ թէ... ինքդ գլխի նընգար...

ՔԼԵՍՈՎ

Հասկացայ, պարոն, հասկացայ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

էն մարթը մեռած է... նրա մաղաղիէքը, վուրջ կա-յեանքը, էս տնիւրը իմ ձեռին է. տաս տարի կուլի ինչ էս

հարստութիւնը ինձ մօտ համեցէք էլաւ... 'ես ննգիր էի. նա, նրա վուրթին ու փեսէն իրանց կէսը...

ՔԼԵՍՈՎ

Կերան:

ՄԱԶՈՒԹԵԱՆ. (ձեռքից բռնելով ու փափսալով):

Կե—րան:

ՔԼԵՍՈՎ

Կամ դօկումենտներ, կամ պայմանագրեր չը կային:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ամեն բանն էլ կեր. 'ես ջէր նրա պրիկաշչիկն էի, իժուս ննգիր դառայ... ամեն դօկումենտները ու թղթիւրը մաղաղի կանտօրումն էր... նա մէբաշ թուաւ, չուխէն էլ չը կանաց հազիլ էր, 'ես մնացի մենակ վուրջ կայեանքն էլ ձեռիս...

ՔԼԵՍՈՎ

Յետոյ, կիւնը կամ որդին ոչինչ տեղեկութիւն չունէին:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Կնիկը գիդէր, վուր նրա մարթու հիդ ննգիր էի, ամա թէ ինչ պայմանով, էտու մասին վունչիչ չէր գիդի: Վուր-թին էլ էն չախը տասը տարեկան էր ու չկօլումն էր ման-գալի, արա ի՞նչ կու գիդենէր...

ՔԼԵՍՈՎ

Բայց այն մարդուց յետոյ նրա որդին և փեսան խօ ձեզ մօտ էին, ի՞նչ պայմանով էին:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

էտէլ կօսիմ... Եօվանումէն մնաց կնիկը, մարթու տա-լու աղջիկը ու էտ աղէն-նիկօլը: Մէ հինգ տարի մաղա-ղիէքը 'ես էի բանեցնում մենակ ու դրանցը իրանց փային տալիս էի... կէսը էլի. էտ Աստուծ էլ գիդէ ու մարթն էլ: Իժուս էտ նիկօլուն գուրձի մէջ կանգնեցրի ու ամեն ամիս դադումի կէսը տանում էր, իրա ձեռով դաւթրումը գրած ունէ... չը մոռանաս: Իժուս բուրը մարթու էրիտ ու էտ Ստեփանին, իրա փեսին էլի, ննգիր տուն էրի, ինքը կի պրիկաշչիկ կանգնեցաւ... էս չը մոռանաս, բուրը

մարթու տալու 'երիք հարուր թուման տուի վէքսիլով. էն վէքսիլը հիմի ձեռիս է. էն փեսէն, Ստեփանը, դրանց ապէկունն էր էլի:

ՔԼԷՍՈՎ

Ինչպէ՞ս ապէկուն, օֆիցիալնի:

ՄԱՋՈՒԹԵԱՆ

'Ես էս իմ արմնում թէ աղվակատորթին վունցիս անում... ափիցիալնի ու 'ես հիգս ննգիր շինեցի, գժվիլ իմ... էնէնց, միր հանգի էլի. 'ես ու դրանց հէրը տասն ու հինգ տարի մէտի առեւտուրինք արի...

ՔԼԷՍՈՎ

Մէկ խօսքով, շատ ուր չը խօսենք, ձեր մէջը ոչ մի պայմանագիր, ոչ մի կապ և ոչ մի պարտաւորութիւն չը կայ...

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Ի՞նչ կան, ի՞նչ պարտավորութիւն, վունչիչ չը կայ... Իժում դրանք փողրաթ վիկալան ու էս տունը ինձ մօղ գրաւ դրին... Փողրաթումը տանուլ տվին... ի՞նչ գիղիմ, էլաւ էլի... Իժում, Իժում էլ օջախը, տունը, քէֆիւրը, խաբարները... 'Ես փողը չէի խնայում... Է, էտէնցութենով գրօշիր մօղ էլաւ... Խօ գիղիս, ով որ տարով է մինձանում, պարտքը օրով է մինձանում, էն թագաւորի վուրթու առակինը չըլի. մէ խօսքով դրանց կէսը...

ՔԼԷՍՈՎ

Մոմի նման հանգաւ.

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Վաղուց հանգաւ, ամա ինչկու էն մարթու մեռնելու խաբարը գուքէր, էլի էն մումը միում էր, հիմի կի (հարցնելով նրան) հիմի կի...

ՔԼԷՍՈՎ

Յաւիտեանս յաւիտենից.

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Ամէն:

ՔԼԷՍՈՎ

Հիմա ինչպէ՞ս պէտք է վարուենք, ի՞նչ էք մտադիր անելու:

ՄԱՋՈՒԹԵԱՆ (ծաղրելով)

Պրասա ու նիախուր... ի՞նչիմ մտադիր. աճ, ուրիշ ուտելուն միր կայեանքը մինք ուտինք:

ՔԼԷՍՈՎ

Հասկացայ:

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Վունչիչ էլ չը հասկացար: Մէնակ ուսումը պէտք չէ, չօտք գցիլ էլ պիտի իմանաս: Աշխարքը էսենց է ապրում. ազնիւ մարթը քաղցած է մեռնում: Նամազուլութիւն է էդ ազնուութիւնը, յիմարութիւնէ: Ասածու ու մարթու դուրեկանն էն է, վուր մարթս իրա հունարը, շնուքը բանեցնէ:

ՔԼԷՍՈՎ

Այդ բանում համաձայն եմ:

ՄԱՋՈՒԹԵԱՆ (կողմը)

Փառք Աստծո՛ւ (Նրան) հա, վուր համաձայնիս, էն վէքսիլները ձեռաց պիտի լուս ննգնին:

ՔԼԷՍՈՎ

Ի՞նչ վէքսիլներ.

ՄԱՋՈՒԹԵԱՆ (կոշտ, յօնքերը կիտելով)

Ա՛ մարթ, հանաքիս անում, թէ՞ փորձում իս. հէնց էս է իմ սրտի խորհուրդը վուր քիզ ասի, թէ չէ էդ խօսքի համա միլիօն վուր տաս, տուն չիմ թողնի, չէ թէ իմ աղջիկը տամ:

ՔԼԷՍՈՎ

Ձեռք քաշած վէքսիլները խօ պատրաստ են:

ՄԱՋՈՒԹԵԱՆ (ձեռքից բռնելով, ընդհատում է)

Եօվանու հազար հինգ հարուր թումնի թուղթն էլ խօ էստի է, իր ձեռք քաշածը...

ՔԼԷՍՈՎ

Մի՞թէ վկաներն էլ ձեռք ունեն քաշած.

ՄԱՋՈՒԹԵԱՆ, (աղշած նայում է)

Ախպէր, չիմ կարծում թէ դուն ինձմէն լաւ պտուղ ըլիս, ինչի՞ իս էդ հանգի խօսում: Վկէք չին՝ քու հէրը,

քու մէրը, քու տատը, քու պապը, Գէվուրքը, Զաքարը,
Առաքէլը... տօ, մէ ազգունում գրելու համա վուր տասը
թուման տամ, էտ վուր անխիլքը կուլի վուր ձեռք չը
քաշէ: Տօ, էն մարթը խօ մեռած է, էս տասն ու հինգ
կենդանի վկէքը խօ...

ՔԼԵՍՈՎ

Այժմ բոլորը հասկացայ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Փառք Աստծո՛ւ, (ուրախ) դիմ խօ էտէնց բմբուլի նման
չը պիտիս թռչի օդումը, մէ ներքիվ էլ դեվեր արի է:

ՔԼԵՍՈՎ

Մի վախենաք, այդ տեսակ գործերումը ես խամ չեմ,
միայն ես գործին արմատից պէտք է տեղեակ լինեմ,
որովհետեւ այս գործը վերաբերում է մեզ և մեր սեփա-
կանութեանը:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Աբա, էս օրեթ: էս սալամաթ դօկումենտները քիզ
պահ տամ, գուրծը կցէ ու էս դիմ միզ վրա հաստա-
տինք... տօրգով էլ վուր ծախին, ինչոր իմը պարտին,
նրա կէսն էլ ոչով չի տայ, էլի միզ կու մնա: էս իմ աղ-
ջիկը խօ էստի է ու էստի... իժում ուրիշ բան էլ շատ
ունիմ. աբա, էն թղթերուն մէ էլի մտիկ տանք:

Տ Ե Ս Ի Լ IV.

Նրանք, ԹԱԶԱԳՈՒԼ և ՆԱՐԳԻԶ

ԹԱԶԱԳՈՒԼ (նրա գալով)

Գալուստդ բարի, վուրթի:

ՔԼԵՍՈՎ (ծանր գլուխ տալով, ձեռք է տալիս մօրը, իսկ
յետոյ աղջկան): Ձեր առողջութիւնը:

ՆԱՐԳԻԶ

Ինչպէս տեսնում էք, կանք: (սասում է)

ԹԱԶԱԳՈՒԼ (նստելով գիւնի վրա)

Ի՞նչ բարին հարցնինք, վուրթի:

ՔԼԵՍՈՎ

Ապրում ենք ձեր և Աստծո՛ւ ողորմութեամբ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ (կնոջը)

Քիզ թղթի էի ասի, գթաթ թէ չէ:

ԹԱԶԱԳՈՒԼ

Գթայ, միւր հալիլի հուշըուն է էլի:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Հա՛ա... միւր բանը չարխի հանգը սարքած է, հիմի մէ
պտուտ տալն է պակաս. (ցոյց տալով Քլէսովի վրա) լաւ
պտուտ տվող ուստա էլ գթայ:

ԹԱԶԱԳՈՒԼ

Միթո՞՞մ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ (կնոջ վրա ձեռք դնելով)

Սրա արիւր, ամէն բանը հազիր է:

ՔԼԵՍՈՎ

(հատ ոտի վրա օրօր գալով, նայում է Նարգիզին և մի բան է
ուզում ասել): Եթէ չէք նեղանայ նկատողութեանս համար,
փոքր ինչ տխրած եմ տեսնում ձեզ:

ՆԱՐԳԻԶ

Ո՛չ, ես այնպէս եմ ինչպէս միշտ. ի՞նչ ունեմ տրի-
րելու:

ՔԼԵՍՈՎ (ժպտալով)

Միթէ տխրելու բան էլ պիտի ունենան ձեզպէս եր-
կնքից օժտուածները:

ՄԱԶՈՒԹԵԱՆ (ընդհատելով կնոջը)

Բանը էլ չը պիտինք հիզ գծի. քու ասելուն չըլի
ինչկի թոնգիրը տաք է գունդէն կու բռնէ: (ցածր) Տօ,
մէ ձէն տու էդ տղին էլի... մէ դէս ու դէն արա, դուն
վուր գիդիս... հըմ, էնէնց էլի: (գնում է իւր սենեակը)

ՆԱՐԳԻԶ

(օրի հետ Քլէսովը մինչև հիմայ ծածուկ խօսում էր): Ինձ զար-
մացնում է ձեր այդ տեսակ խօսակցութիւնը. կըթուած
մարդ էք և...

ԹԱԶԱԳՈՒԼ (ընդհատելով Քլէսովին)

Ինչ պիտէի ասի ձիզ, պարուն...

ՔԼԵՍՈՎ (վեր թռչելով)

Հրամայեցէք, խնդրեմ:

ԹԱԶԱԳՈՒՆ

Ինչի՞նք ի՞նչ նիզանում, համեցէք: Թէ ցանկութիւն կու-
նենաք, իրիգնապահին միզ հիդ մէտի էկիպաժով համե-
ցէք սէյրը անելու:

ՔԼԵՍՈՎ

Եթէ այդպէս կերջանկացէք, տիկին...

ԹԱԶԱԳՈՒՆ

Հիմի դուք էլ բան ունիք ու մինք էլ, թէ չէ հիմի
լաւ էր:

ՔԼԵՍՈՎ

Ոչ, տիկին, երեկոյեան էլ վատ չէ. իսկ այժմ աւելի
լաւ է գործերը վերջացնենք (նստում է):

ՆԱՐԳԻԶ (ծաղրելով)

Այո, հոգու գործով էք ղրաղուած:

ՔԼԵՍՈՎ (Նարգիզին)

Ի՞նչ, ի՞նչ հրամայեցիք, օրիորդ:

ԹԱԶԱԳՈՒՆ (աղջկան նկատելով)

Նարգիզ, լիզուդ. (ժպտալով Քլեսովին) ասում է Էլի,
դրա դրողութեանումը 'ես էլ էտէնց էի. (ծիծաղում է)

ՔԼԵՍՈՎ

Ի՞նչ դրութիւն, տիկին:

ԹԱԶԱԳՈՒՆ

Նորահարսութենի վուր պատրաստվում էի... Ախար
անարատ աղջկայ սիրտը դրուստ փրթոնայ ննգած ծովի
նման է, իր ասածի է ու հմպարտ...

ՄԱԶՈՒԹԵԱՆ (կուլիսներից)

Թագազո՛ւլ:

ԹԱԶԱԳՈՒՆ

Համմէ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Մէ նմուտ էստի արի:

ԹԱԶԱԳՈՒՆ

Էս սհաթիս. (վերկենալով, ցածր Նարգիզին) վնւթի,
գենացվալօս դէզէն, իմ խօսքերը միտդ բի, (գնալով Քլե-
սովին) արմրթի չլինք, մէ քիչ վուխտ թողնում իմ:

Տ Ե Ս Ի Ն V.

ՔԼԵՍՈՎ և ՆԱՐԳԻԶ

ՔԼԵՍՈՎ

Ոչինչ, տիկին. (տռանձին) երանի վաղուց էիր հեռա-
ցել. (լուրթիւն. նայելով Նարգիզին) դուք, կարծեմ, ինչ որ
ուզում էիք ասել...

ՆԱՐԳԻԶ (զարմացած նայելով)

Ե՞ս, ոչինչ:

ՔԼԵՍՈՎ

Այնպէս էիք շարժում այդ գեղեցիկ շրթունքները,
եր կարծես, մի գեղեցիկ բան պէտք է ասէիք:

ՆԱՐԳԻԶ

Ի՞նչ գիտէք, թէ գեղեցիկ բան կասէի:

ՔԼԵՍՈՎ

Միթէ ձեր շրթունքները կարող են հասարակ բան
արտասանել, եթէ ոչ վսեմ և գեղեցիկ:

«Ձեր շրթունքները

Նազ վարդ այտերը

Բաղդաւորութիւնս են ինձ դուշակում,

Այս գգացմունքները

Նախագգումները

Նիզակի նման սիրտս են ծակում:»

Ես հասկանում եմ ձեր մտածողութեան և լուրթեան
պատճառը: Ես հաւատացած եմ, որ արդէն հասկացել էք
ձեզ հետ ունեցած զրոյցիս միտքը և պատասխան էք
պատրաստում, բայց մինչ պատասխան տալը աւելի լաւ
մտածեցէք դրա նշանակութեան և ծանրութեան մասին.
ասացէք անկեղծ:

ՆԱՐԳԻԶ (նրան)

Ի՞նչ ասեմ, ես ձեզ այնքան լաւ չեմ ճանաչում, որ
կարողանամ վերջնական պատասխան տալ:

ՔԼԵՍՈՎ (կողմը)

Եթէ աղջկայ սիրտը ուզում ես գրաւել, պէտք է

հետը ընկնես և ամեն բանի մէջ, թէև դա լինի ամենա-
յետին յիմարութիւն, համակրանք ցոյց տաա: (նրան) Դուք
ճիշտն ասացիք, այն մարդուն, որի հետ մտադիր էք յա-
ւիտեան կապուել, պէտք է ամեն կերպ ուսումնասիրէք և
իմանաք նրա բնաւորութիւնը, վարք ու բարքը, յատկու-
թիւնները, ուղղութիւնը, մէկ խօսքով բոլորը:

ՆԱՐԳԻԶ (դիտելով)

Ո՛չ, ձեզ բաւականին ճանաչում եմ:

ՔԼԵՍՈՎ (ուրախ)

Յետոյ, գոհէք:

ՆԱՐԳԻԶ

Այո, դժգոհ չեմ, դուք կարող էիք աւելի լաւը լինել:

ՔԼԵՍՈՎ

Ճիշտ այնպիսին եմ, ինչպէս դուք էք կարծում:

ՆԱՐԳԻԶ

Քիչ առաջ աւելի ուրիշ տեսակ էիք երևում:

ՔԼԵՍՈՎ (ուրախ վեր թռչելով)

Թոյլ տուէք ասել ձեզ առաջին և վերջին խօսքը,
(չոքելով) ես միլիօններ չունեմ, ոչ էլ ուրիշ բան, բացի
ուսումից. ինչ որ տեսնում էք, այս եմ. սիրում եմ, պաշ-
տում եմ ձեզ:

ՆԱՐԳԻԶ (վեր է կենում)

Վեր կացէք. միթէ վայել է մարդուն այդպէս ստո-
րանալ:

ՔԼԵՍՈՎ

Ես ստորութիւն չեմ համարում, երբ ծնկաչոք եմ
կուռքիս առաջ...

ՆԱՐԳԻԶ (յուզուած)

Վեր կացէք, ի սէր Աստուծոյ. չեմ կարող ձեզ վրա
այդպէս նայել:

ՔԼԵՍՈՎ

Չեմ վեր կենայ, մինչև չեմ լսի ձեր համաձայնու-
թիւնը. կարո՞ղ էք իմա լինել, թէ ոչ, ասացէք:

ՆԱՐԳԻԶ

Եթէ կամենում էք ինձանից ճիշտ պատասխանն իմա-
նալ, վեր կացէք:

ՔԼԵՍՈՎ (վեր կենալով)

Հրամայեցէք:

ՆԱՐԳԻԶ

Ասացէք խնդրեմ, իմ փողերն էք աւելի սիրում, թէ՞
ինձ:

ՔԼԵՍՈՎ (կողմը)

Բաս չէ ու քո հօր սիրուց գժվում եմ, (նրան) ի՞նչ
էք հրամայում, էլ ի՞նչ պատասխան տամ. միթէ փողը
լայկե՞ղ է իմ մաքուր զգացմունքին և վերջապէս ի՞նչ է
փողը:

ՆԱՐԳԻԶ

Խնդրում եմ, ճիշտն ասէք:

ՔԼԵՍՈՎ

Այնպէս էլ երեխայ չէք, որ չը հասկանաք թէ լաւ
կեանքը ամենքը սիրում են և որ ամբողջ աշխարհը ձեզ-
տում է դէպի նա. միայն ես ձեզ ասում եմ, որ մեր
միութեան միակ պատճառը իմ սէրն է. դուք լաւ գի-
տէք, որ փող ձեռք բերելու միջոց ունեմ...

ՆԱՐԳԻԶ

Յամենայն դէպս չէք մերժի իմ հարստութիւնը:

ՔԼԵՍՈՎ

Ինչո՞ւ պէտք է մերժեմ, քանի որ կայ:

ՆԱՐԳԻԶ

Նստեցէք, խօսենք. ինչո՞ւ էք ոտքի վրայ կանգնած:

ՔԼԵՍՈՎ

Ամեն մի վայրկեանը այժմ ինձ համար յաւիտենա-
կանութիւն է, մինչև ձեզանից պատասխան չիմանամ:

ՆԱՐԳԻԶ (նստում է)

Դուք ինքներդ ասացիք, որ շտապել հարկաւոր չէ
այսպիսի գործում. ինձանից պատասխան կը ստանաք:

ՔԼԷՍՈՎ (մօտը նստելով)

Ե՞րբ, շուտով, (համբուրում է ձեռքը) խղճացէք իմ երիտասարդութեանը, իմ սիրոյս:

ՆԱՐԳԻԶ (ձեռքը խլելով)

Ես ձեզ համար դեռ օտար եմ:

ՔԼԷՍՈՎ

Ձեր աչքերը ինձ վկայում են, որ դուք օտար չէք: Թոյլ տուէք այս երանելի օրուայ յիշատակին տալ ձեզ մի օրէն է ընծայ:

ՆԱՐԳԻԶ

Աւելորդ կը լինի:

ՔԼԷՍՈՎ

Դուք կը տեսնէք, որ ես չեմ փնտրում ձեր հարըստութիւնը, այլ որ ես ինքս էլ բաւականին ունեմ: Ուրեմն, ասացէք ձեր վերջին խօսքը:

ՆԱՐԳԻԶ

Շուտով կասեմ ձեզ իմ վերջին խօսքը, փոքր ինչ մտածեմ:

ՔԼԷՍՈՎ (ձեռքը համբուրելով)

Ես այսօրուանից ձեզ իմն եմ կարծում. այնպէս չէ, իմ գեղեցիկ, իմ գոհար: Ո՛հ, եթէ իմանաք ինչ լաւ գոյն ունէք... այս բոլէիս, ի՞նչպէս ասեմ... մանուշակի տերեւների գոյնգոյն խաղը, ո՛չ, ո՛չ, վարդը, նարգիզը որ կը բացուի... դարձեալ ո՛չ. երբ փառահեղ լուսինը ծածկւում է նոսր ամպերով, որոնց քամին իսկոյն ցիր ու ցան է անում... ի՞նչ գիտեմ, ո՞ր մէկին համեմատեմ... բնութիւնը բոլոր իր գեղարուեստը ձեզ վրա է շռայլէր: Իմը կը լինէս, այնպէս չէ, անգին իմ մարգարիտ:

ՆԱՐԳԻԶ

Տեսնենք:

ՔԼԷՍՈՎ

Օ՛հ, հազիւ արժանացայ (ձեռքը համբուրում է. կողմը) օ՛հ, Աստուած իմ, հազիւ այս ծէսն էլ վերջացրի:

ՆԱՐԳԻԶ

Ասացէք խնդրեմ, կարելի՞ է կեղծ մուրհակներ շինել:

ՔԼԷՍՈՎ (կողմը)

Էրիհն, այս ինչէր է հարցնում. (նրան) այդ ի՞նչ հարց է:

ՆԱՐԳԻԶ

Այնպէս, ուզում եմ իմանալ:

ՔԼԷՍՈՎ

Աշխարհումը անկարելի ոչինչ չը կայ:

ՆԱՐԳԻԶ

Ծշի՛տ, ուրեմն կարելի՞ է:

ՔԼԷՍՈՎ

Դրան ի՞նչ մեծ գիտութիւն է հարկաւոր, ինչո՞ւ էք հարցնում:

ՆԱՐԳԻԶ

Այնպէս. դուք կարող էք կեղծ մուրհակներ շինել. դուք այնպիսի արհեստի մարդ էք, որ գիտէք թէ ինչպէս կարելի է բանը զուլի բերել:

ՔԼԷՍՈՎ

Ինչո՞ւ չեմ կարող, միայն Աստուած ազատի ինձ այդ տեսակ գործից:

ՆԱՐԳԻԶ

Ուրեմն դուք...

Տ Ե Ս Ի Լ VI.

Նոյնք, ՄԱԶՈՒԹԵԱՆ և ԹԱԶԱԳՈՒԼ

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Իսկպօլիտ Պօլի... Պօլի... էվկուսովիչ. ախպէր, ինչ դժար անումիս ունեցի. արա, գնանք միւր գուրծին տէրութին անինք:

ՔԼԷՍՈՎ (վերցնելով գլխարկը)

Ա՛յ, գնանք. (նարգիզին) ցտեսութիւն, երեկոյեան դարձեալ միասին կը լինենք (համբուրում է ձեռքը):

ՆԱՐԳԻԶ

Գնաք բարեաւ:

ԹԱԶԱԳՈՒԼ (ամուսնուն)

Քա՛, ձեռին էլ է պաշանում:

ՄԱՋՈՒԹԵԱՆ (կնոջը, փսփսալով)
Ի՞նչիս հոգում, թող իր պռօշնիրը խաբէ:
ՔլէՍՈՎ (Թաղազուկին)

Մնաք բարե, տիկին:

ԹԱՋԱԿՈՒԼ

'Ես էլ իմ գալիս (Նարգիզին) ան, վուրթի, էս դուն ու
էս էլ տունը. (Բոլորը դուրս են գնում):

ՆԱՐԳԻԶ (մենակ)

Ջարմանալի է, այս երիտասարդի խօսքերը բոլորո-
վին չեն համապատասխանում իրան գործերին. սակայն
իմ ծնողները ի՞նչ չեն անել տալ մարդուն... կարելի է
իմ սիրուցն է նա այսպէս գործում... (մտածում է) մէկը
երջանկանայ, բարձրանայ, իսկ միւսը աղքատանայ, հողի
հետ հաւասարուի: Ասում են՝ եթէ այս մարդուն տանից
արձակենք, մենք կը կորչենք. ինչո՞ւ: Ի՞նչ մի այնպիսի
գործ ունեն սրանք Քլէսովի հետ: Աստուած իմ, այնպի-
սի ի՞նչ բան մտածեմ, որ ամենքին էլ օգնեմ և ոչոք չը
փաստուի. խեղճ Նիկօլ, բացի նրանից ինձ համար ոչոք
գոյութիւն չունի...

Տ Ե Ս Ի Լ VII.

ՆԱՐԳԻԶ, ՄԱՇՕ, յետոյ ՆԻԿՕԼ:

ՄԱՇՕ (ներս գալով)

Գնացի՛ն. ի՞նչին դուս ու տուն անում. ինչոր դուրթի-
քին քրքրում. ի՞նչ խաբար է:

ՆԱՐԳԻԶ (տխուր նստում է դիւանի վրա)

Ի՞նչ գիտեմ:

ՄԱՇՕ

Քիզ էլ ի՞նչ էլաւ, քան. ի՞նչիս էտէնց քնթված. (ծի-
ծաղելով) քու ակուալի կիկօն չը կանանց ուրախացնի.
զուրթ, էլախտ Նիկօլը անցկացաւ ու հարցրուց մենակ է,
կօսէ, ուզում էր գայ. 'ես ասի զօնադնիր ունինք, բաս
յիզ գուքամ, կօսէ:

ՆԱՐԳԻԶ

Խօ չասացի՞ր թէ ով էր.

ՄԱՇՕ

Չէ (նայելով դրան), հորէն, Նիկօլն էլ գալիս է.

ՆԱՐԳԻԶ

Հոգուդ մեռնեմ Մաշօ, ասա թէ ես էլ ուրիշ տեղ
գնացի.

ՄԱՇՕ (զարմացած)

Ի՞նչ խաբար է միթում, դիւի աղաչանք էիր անում ու...

ՆԱՐԳԻԶ

Գնա՛ շուտ, չը ներս գայ:

ՄԱՇՕ

Նա էկաւ էլ ու:

ՆԻԿՕԼ (ներս գալով)

Բարե, Մաշօ:

ՄԱՇՕ

Ասածու բարին.

ՆԻԿՕԼ

Նարգիզ, բարե (տոնելով ձեռքը նստում է կողքին) լա՛ւ
էք, առողջ էք:

ՆԱՐԳԻԶ (ժպտալով)

Մեզ ի՞նչ կայ, իսկ դո՞ւ, կարծեմ ոտքդ ցաւում էր:

ՆԻԿՕԼ

Լաւ եմ. շունը չուրախութենով կը սատկի... մեր հը-
րէան այսօր նոր ակնեղէն ստացաւ, հիմա տեղաւորում
էին ու այս բանը վերցրի. ինչպէս ես հաւանում (բաց է
անում արկղիկը և ցոյց է տալիս բրօշկան):

ՆԱՐԳԻԶ

Լաւն է, բայց ինչի՞զ էր հարկաւոր:

ՆԻԿՕԼ

Ինչպէ՛ս թէ ինչիս էր հարկաւոր, հրէան էլ չարդ
տանէ ու քրիստոնէան էլ, հոգուդ մեռնեմ, քեզ համար
բերի:

ՆԱՐԳԻԶ

Սա խօ թանգ արժէ, ինչո՞ւ էիր առնում:

ՆԻԿՕԼ

Որքան ուզում է արժենայ:

ՆԱՐԳԻԶ

Ձէ, անա, ռըքան վճարեցիր:

ՆԻԿՈՂ

Մէկ միլիօն, մէ գրօշ, ի՞նչ գիտեմ:

ՆԱՐԳԻԶ

Ինձ թաղես:

ՆԻԿՈՂ

Վա՛հ, միայն դու ապրիր, կասեմ. երեք հարիւր ուրբի:

ՆԱՐԳԻԶ

Բարով վայելես:

ՆԻԿՈՂ

Դու պէտք է վայելես, հոգեակս, ոչ թէ ես, վերցրու պահիր (տալիս է):

ՆԱՐԳԻԶ (չէ վերցնում)

Բայց ինձ հարկաւոր չէ:

ՆԻԿՈՂ (զարմացած)

Սա ի՞նչ բան է. (Նարգիզին) ինչո՞ւ ես էգպէս, սիրելիս, ո՞վ նեղացրեց. մի սպանիր ինձ, ինչ պատահեցաւ:

ՆԱՐԳԻԶ

Ոչինչ:

ՆԻԿՈՂ

Ձէ, դու էլ էն Նարգիզը չես. (Մաշօյին) Մաշիկօ, սէրն Աստուծոյ, անա, էս ի՞նչ խաբար է:

ՄԱՇՕ

Դուն չը մեռնիր, վունչիչ չիմ գիգի:

ՆԻԿՈՂ

Հա՛, հիմա միտս եկաւ. անա էլի, քեզ մարթնու են տալի. ինձ թէն ասին, բայց էս անիծած սրտիս ի՞նչը կը հաւատացնէր. էսէր իմ բախտն է՛լի. ախ Աստուած, աշխարհումը ամեն բան կորցրի, գոնէ սրան մի հիւսացնի ինձանից. (Նարգիզի ձեռքը առնելով մտածողութեան մէջ է ընկնում):

ՆԱՐԳԻԶ (աչքերը թաշկինակով ծածկելով)

Ո՛չ, ո՛չ, Նիկօլ. ես մարդու չեմ գնում և չեմ էլ գնայ երբէք (լաց է լինում):

ՄԱՇՕ

Նիկօլ, աղէն գալիս է, Աստուծու սիրուն, գնա. դա էլ լաց է ընում, վայ թէ բան փիքը անէ...

ՆԻԿՈՂ

Հիմա էլ փիքը անելու ժամանակ չէ. թող նա ինքը տեսնի ու իմ քամբախտութիւնը ինձ երեսիս ասէ:

ՄԱՇՕ

Ես, կի կու հիւանամ ու ինչ գուզիք էն արէք (դուրս է գնում Նարգիզի սենեակը):

Տ Ե Ս Ի Լ VIII.

Նրանք և ՄԱՋՈՒԹԵԱՆ

Մագուլթեան (ներսէ գալիս չարացած) էս ի՞նչ խաբար է. Նարգիզ, ի՞նչիս լաց ըլում. գնա քու օթախը:

ՆԻԿՈՂ

Սա ոչ մի տեղ չի գնայ, ես ուզում եմ ձեզ հեղ խօսել:

ՄԱՋՈՒԹԵԱՆ. (չարացած Նարգիզի ձեռքը բռնելով)

Նարգիզ, գնա քու օթախն ասում իմ:

ՆԻԿՈՂ (առջևը կանգնելով)

Համբերեցէք, պարոն, մի երկու խօսք ասեմ:

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Բանս պօլիցի մի շինի է:

ՆԻԿՈՂ (հեռանալով)

Ի՞նչ անեմ, դոչաղ մարդ էք ու պօլիցիէն էլ ձեզ կը լսէ. (կողմը) քարն էլ ձայն կը հանէ:

ՆԱՐԳԻԶ

Հայր, խղճա ինձ էլ ու սրան էլ:

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Բէհէսաբնամաղուլութիւն է. (Նարգիզի ձեռքից բռնելով տանում է դէպի սենեակը և վեռադառնում է). հիմի մէ դուք հրամանք արէք, ինչի՞ իք տուն ննդի իմ տուն:

ՆԻԿՈԼ

Ես, պարոն տուն չեմ ընդել: Ինչպէս միշտ զալիս էի, հիմա էլ էնպէս եմ եկել, ուզում էի վերջին անգամ հարցնել...

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ի՞նչ պիտէիր հարցնի:

ՆԻԿՈԼ

Ճշմարիտն ասէք, տալիս էք ձեր աղջիկը ինձ, թէ՞ ոչ: ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ի՞նչ աղջիկ, վճար աղջկան:

ՆԻԿՈԼ

Ձեր աղջկան, Նարգիզին:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Դուն էն ասա, վճարդանց էկաւ էդ փիքըրը գլխումդ: ՆԻԿՈԼ

Որտեղից պիտի գար, այսքան ժամանակ է մենք նըշնածի պէս ենք:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Հիմի էլ փիքըր արա, միթո՞ւմ փսակած իք ու էդ փիքըրը հերիք է:

ՆԻԿՈԼ

Ես խնրում եմ, պարոն ճշմարիտն ասէք:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ի՞նչ պիտիմասի: Ի՞նչը փիքըր անիլ էրիտ, թէ՛ 'ես քիզ աղջիկ իմ տալի: Ռեքնեմ տալի: ախար դուն ի՞նչ ունիս:

ՆԻԿՈԼ

Ինչո՞ւ չունեմ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Իմ ճարումադաթ աղջկան, էն հարստութէնի տիրուջը քիզ իմ տալի: Խիլքի արի: վճարթի, ի՞նչիս ասում:

ՆԻԿՈԼ

Դուք ինքներդ ասիք, խոստացաք:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Վա՛հ, ինչ դարդակ իս էլի, տօ ողորմելի: վճար խոստացայ, վարցիկ համա խալիս էի տալի: ուզում էի մարթ էիր դառի, բան էիր ճարի:

ՆԻԿՈԼ

Ինչ որ ունիմ, այն էլ մեզ բաւական է:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Իժու՞մ ի՞նչ ունիս:

ՆԻԿՈԼ

Թէ ասում էք որ էս տունը ձեզ մօտ գրաւ է, լաւ գիտենք թէ ինչպէս էլաւ բանը: Բայց էս մի կողմը կենայ. մաղաղիւններու կէսը խօ ի՞մնէ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ի՞նչ կէսը, վճարողանցի կէսը: Ձեր կէսը ալի կերպ, պրծաւ ու գնաց...

ՆԻԿՈԼ

Էդքանը զրտեղ կերայ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

'Ես ինչ գիդիմ վճարդի կերար, սիրեկներումն ու... բռներով վճար փողդիր էիր տանում ու գուրծին ու աշխատանքին չէիր աւելցնում, ի՞նչ էիր փիքըր անում, գանա ծով էր... չէիր գիդի կու հատնէր:

ՆԻԿՈԼ

Ես այդ փողերը ո՛չ քէֆերումն եմ ծախսել, ո՛չ սիրեկաններին մօտ... Ես ունէի միայն մի սիրեկան, որին իմ գլխիցս լաւ էի հաշուում և որի համար աշխարհը չարի փոխ կանէի. եթէ բան ճարում էի, նրա համար էի տանում... նա ձեր աղջիկն է:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Բաս թամասուք կունենաս ինչոր նրան տուիլ իս:

ՆԻԿՈԼ

Թամասուքը, պարոն, իմ սէրն է, որը գրած է նրա անմեղ սրտի վրա:

ՄԱԶՈՒԹԵԱՆ (ծաղրելով)

Բաս նաղդ է էլի ձեր պարտքը... էդթահար թամասուքը վունց դադաստանն է ընդունում վունց էլ նատարիունն է հաստատում:

ՆԻԿՈԼ

Ինձ համար ճիշտ որ նաղդ է, սրովհետեւ ես յետ չեմ պահանջում:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Մէ սրան թամաշա արէք է. ամեն մէ կինսօքուշեմէն տուն գուբայ ու կօսէ աղջիկ տղւ. (Նիկօլուն) ինչկլի 'ես սաղիմ իմ աղջկայ ձեռին մէ գրօշ չիմ գցի: Տօ, դուն ի՞նչ ունիս վուր քիզ աղջիկ տամ. իմ վուրթին քաղցած մեռնում ըլի ու 'ես արխէին մտիկ տամ. իմ վուրթու թշնամի՞ն իմ: Նիկօլ

Ուրեմն ումն էք տալի ձիր աղջկան:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ոչովին. 'ես իմ աղջկան մարթու չիմ տալի. ի՞նչ կարիք ունէ, էնդդա հարստութէնի տէրը մարթու կհհախ: Թող նստի ու ուտէ, ուրիշ ջափայ խօ չի՞ գայ, ինչկլի իրա վրա հարուստ փեսացու ձարէ, էսէնց է:

Նիկօլ

Նիմա ձեր միտքն ի՞նչ է, ի՞նչ էք ուզում անել:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Վունչիչ. դուն քիզ համա, մինք միզ համա. դուն ինքդ ի՞նչիս ուզում ինձմէն վուրթի, ախպէր. էսդդա վուխտ վարձք իմ արի, պահիլ իմ քիզ, քվիրտերանցդ, մօրդ, փեսիդ...

Նիկօլ (յուզուած)

Ո՞ր մէկը համբերէ մարդ, (նրան) Ո՞ւմն էք պահել պարոն, մենք ողորմութէան կարիք չունէինք. մեր կարողութիւնով մեզ պահեցիք, ոչ, հօրս կարողութիւնը ձեզ պահեց ու աղա շինեց. դուք ինքներդ ի՞նչ ունէիք, հայրս չը վերցրեց ձեզ հազիր հազրաբաշի իրա մօտ պրիկաշչիկ: ՄԱԶՈՒԹԵԱՆ (նեղանալով)

Ի՞նչ նամադուլ իս անում տօ. փիս քամի խօ չէ՞ դիբի քիզ. պրիկաշչիկ կօսէ, դօկումենտնիր կունենաա... Նիկօլ

Ի՞նչ դօկումենտներ. խղճմտանքի դօկումենտ խօ կա՞յ աշխրբի երեսին:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ի՞նչ խղճմտանք. լաւ տարի քիզ էլ գայ քու խղճմըտանքին էլ, ի՞նչ բէհէսաբ իս անում... ամա ինչ խօսեմ

քի հիդ, աբա, դուն հիլ իս: 'ես քու փեսին ապսպրիլ իմ, նրա հիդ հեսար կօսիմ. ամեն բանը հէսաբի բան չէ... էլ չիմ սուզում մուրթայ հաց ուտեցնիմ... թէ բան կուննգնի ստացէք ու ձեռը վրիկալէք. .

Նիկօլ (յուզուած)

Հէսաբ անենք. ի՞նչը հէսաբ անեմ, լաւ գիտէք գործի էութիւնը ու նրա համարէք ոտի տակ տրորում. իմ կարողութիւնը դժւք պէտք է հէսաբ անէք: Ի՞նչ թանխայ էք բերել հօրս մօտ. նա ձեզ իբրեւ հասարակ նօքար է վերցրել, յետոյ պրիկաշչիկ է շինել. միտս չէ, ինչպէս ձեռքիդ խտած տանում բերում էիք ինձ ուսումնարան հիմա մեծ մարթ դարձաք, ինչո՞ւ էտոնք չէք միտը բերում: Աղջկադ վրայ զօռով սիրահարեցրիք. հօրիցս յետոյ ցաւի նման ատում էի բոլորիդ, բայց դուք զօրով բերում էիք ինձ ձեր տուն ու դասիդի մենակ էիք թողնում ձեր աղջկայ հետ. 'ես էլ սիրեցի ու փոշիման էլ չեմ, որովհետեւ նա իմ սիրոյս արժանի է. 'ես գլուխս չարի փոխ կանեմ... Իսկ դուք ինձ ի՞նչ արիք, նոր եմ հասկանում: Ինչ որ հայրս թղթեր ու դաւթարներ ունէր մօրիցս գողանում էի և ձեզ մօտ էի բերում, ո՞ր մէկն ասեմ. այն ժամանակ 'ես ի՞նչ գիտէի. միթէ՞ կարող էի մտածել թէ ձեր օջախից կամ (հառաչելով) ձեր աղջկանից պէտք է հեռոնամ. հիմա ասում էք հէսաբ անենք: Ի՞նչը հէսաբ անեմ, ի՞նչ հիմք ի՞նչ ֆակտ ունեմ. այս բանը մենակ մենք գիտենք ու միակ վկան ինքն Աստուածն է. այսօրուայ օրը մահ ու կեանքի օր է ինձ համար ու այն էլ կը տեսնիմ թէ ինչպէս հէսաբ կանէք... (շտապով դուրս է գնում):

Տ Ե Ս Ի Լ X.

ՄԱԶՈՒԹԵԱՆ (մենակ)

Աղջիկ իրան տուէք. օսկու սինու վրա կու հրամայիս մօդ բերիմ, թէ էրծաթ էլ վուր ըլի հաջադ չէ: Է՛հ, ախ-

պէր, ինչ էրդեն արշին իս ունեցի, 'ես էդ արշինով չիմ չափի իմ կինքը: Պրիկաշիկ էի, կօսէ, բէհէսաբ նամադու է անում, ինչ պրիկաշիկ, 'եփ էի պրիկաշիկ: 'Ես, Տրիփոն Բաղդանիշ Մազուլթեանցը ու պրիկաշիկ, վուշ մէ ժամանակ... (մտածում է) հա, էս դուրթ է, պրիկաշիկ էի, հիմի ինչ անինք. ինքը Միխէյիլ Սիմօնիշ Վարանցոյն էլ մէ վուլսա իւնկեր է էլի, իժոճ. իժում էն վուր էս կինքի սանդուխտի վրա, մարթ էնէնց պիտի դիվիր գնայ, վուր ծունգը չը ծալվի, թէ չէ... (ուրախ) 'ես դիվիր իմ գնացի էս սանդուխտի վրա էնէնց, վուր մէ անգամ էլ սիրտս չէ նիղացի. հիմի վերիւր կանգնած իմ... իմ առջիւր աշխարքը մէ կալ է, խալիս էլ ջիանճվելք... վուտդ գէնը կու դնիս կու ճխլիս, դէս կու դնիս կու ճխլիս. հիմի 'ես ինչ անիմ, ինչ իմ միղնէ, վա, 'ես ինչ միղ ունիմ վուր վուտիս տակնին նսգնում, ճխլէ կօսէ... Էհ, մուքթա խօսելումը շահ չին տալի... 'ես պրիկաշիկ էի, անումս Տիգրան էր... Բա, պրիկաշիկ Տիգրան... հիմի... Տիգրանն Բաղդանիշ Մազուլթեան իմ... հազար պրիկաշիկ ունիմ, իմ պարունիքը իմ պրիկաշիկներ ին, բա, մարթ պիտի էս աշխարքը ճանանչի. Աստուծ վուր մարթուն կինքէտվի չը պիտի անհունար անցկացնի... խօսքը հունարն է, հունարը... հա, հա, հա... (ներս է գնում իր սենեակը):

ՎԱՐԱՊՈՅՐ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ II.

Ինքն ներկայացնում է մաքուր, բայց ոչ հարուստ սենեակ Նիկոլի բնակարանում, դռները՝ մէջ տեղը և ձախ,

Տ Ե Ս Ի Լ.

Վարագոյրը բացուելիս բեմի վրայեն՝ Նիկոլի, ՔԱԼԻՆ և ՎԱՐՕՆ. Նիկոլի աջ կողմը նստած է աթոռի վրա, իսկ ՔԱԼԻՆ և ՎԱՐՕՆ ձախ՝ թախթի վրա.

Նիկոլ (Մտածման մէջ)

Օհ, ինչ ունայն բան է եղել էս կեանքը. ինչ իզուր տեղը խաբում ենք մեր գլուխը. ինչ դառն ծիծաղում ենք մեր կեանքի վրա... եղբայրութիւն, բարեկամութիւն, ընկերութիւն, սէր—այս բոլորը քսան կոպեկի գին չէ ունեցել, բոլոր փուճէ: Կեանքը—փող է, աբասանոց, որով կարող ես ամեն բան ձեռք բերել... մինչև անգամ սէրն էլ. ինչ պէտք է անէ անփող ազնիւ մարդը. ինչպէս ապրի նա այս աշխարհում: Չէ, ազնիւ մարդը՝ այս աշխարհում տեղ չունի, (ձայնը բարձրացնելով) ազնիւ մարդը չը պէտք է ապրի այս աշխարհում: Առանց փողի... Ազնուութիւնը ոչ գրեւորով է ծախվում, ոչ խոտի գին ունի, ինչացո՞ւ է նա այս աշխարհում, քանի որ աշխարհս փող է և կշեռք (մտածում է):

ՎԱՐՕ

Նիկոլ ջան, ինչի՞ իս էտէնց, Ստեփանին խօ չի՞ս տեսի:

ՆԻԿՕԼ (նրան նայելով)

Մէ տղամարդու անուն էլ դուն տուիր, քու Ստեփանը ցանցառներու մէկն է, նա հաւատացած է թէ սաղ աշխարհը արշինի վրայ է պտուտ գալի:

ՎԱՐՕ

Ի՞նչ կայ գէնացվա, խօ վունչիչ բեղամաղ չափաւ:

ՆԻԿՕԼ

Ոչինչ. ինչ պէտք է նեղանամ այն մարդուց, որը աքլարներու կռիւը տեսնելիս ասում է թէ ջրհեղեղի նշան է. մի նեղանար քոյրիկ. էս սահաթիս ողջ մարդկութիւնը մի ինչոր ծիծաղելի բան է երևում աչքիս:

ՔԱԼԻ

Կուլի իմբին տիղդ ցաւում է, վուրթի:

ՆԻԿՕԼ

Ցաւում է, մայրիկ ջան, այո ցաւում է հոգիս ու սիրտս, աբա, էսպէս բան տեսել էք, որ մարդ մայրսի վարդի նման ծաղկած սիրտ ունենայ ու այդ սրտի մէջ դժոխքի տանջանքից բէթար ցաւ ունենայ.

ՎԱՐՕ

Նարգիզիմէն խօ վունչիչ չի՞ս իմացի, Նիկօլ ջան:

ՆԻԿՕԼ (հառաչելով)

Բանն էլ հէնց այդ է, քոյրիկ, որ Նարգիզը ինձ համար փուշ դառաւ. էհ, մախլաս, ի՞նչ դարդի ժամանակ է. հայրս ինչքան ինձանից ազնիւ մարդ էր, բայց, էլի իրա հալալութէնով կորաւ. էհ, ես էլ նրա որդին չեմ...

ՔԱԼԻ (լաց լինելով)

Վուրթի, խղճս միգ, ի՞նչիս ուզում միգմէն, ինչի՞ր իս խօսում:

ՎԱՐՕ (փաթաթուելով)

Չարդ տանէ քուրդ, ինչի՞ չիս ասում քու դարդը, էլ ինձ չիս սիրում:

ՆԻԿՕԼ

Բանն էլ հէնց այդ է իմ քոյր, որ իմ սէրը գեանումը թողեցին. սիրտ մնաց, իմ քոյր, որ սիրեմ: Էհ, ինչ խօսեմ, չէ որ դու էլ կին ես, կին, կարելի՞ բան է, որ մարդ քթոցումը ջուր պահէ:

ՏԵՍԻԼ II.

Նոյնք և ՍՏԵՓԱՆ

ՍՏԵՓԱՆ (յոգնած ներս է գալիս)

Վուր կօսին քամբաղդ մարթը ամեն կրնեմէն քանբաղդ է, դրուտ էնէց է, հազար շարշրվի, հազար գլուխդ քարոքը դու, օձի շապիք հաքի, թէ քանբաղդիս, քամբաղդ էլ կու սատկիս:

ՎԱՐՕ

Ի՞նչ է, ի՞նչ խաբար է:

ՍՏԵՓԱՆ (թախթի վրա նստելով)

Ջահրու ջահանգամ է էս անդէր գլխին (խփելով գլխին), էս օր ձիր տուն քանդողը 'ես իմ, 'ես դուս կտրեցի ձիր բողաղը. ա՛յ, էկէք ինչ ուզում ի՞ք էն արէք.

ՔԱԼԻ (նեղացած)

էս ի՞նչ կրակ վեր ննգաւ 'երգնքեմէն, գենացվալէթ:

ՎԱՐՕ (նեղացած ընկնում է աթոռի վրայ)

Վա՛յմէ, հիմի ի՞նչ անիմ, էս ի՞նչ իմացայ:

ՆԻԿՕԼ (Ստեփանին դառը ժպիտով)

Ի՞նչ է պատահել. թէ՞ ասում էիր փրկիստի մարդ եմ, արշինում մուշտրեմէն մէ շարէք գողնում իմ, կօսէ. հ'ը, ի՞նչն է քեզ նեղը դցել:

ՍՏԵՓԱՆ

Էհ, հէրօխնածի վուրթի, դուն էլ նստիլիս դիվան-բէգի պէս ու տափակ տափակ խօսում իս, մէ աչքդ բաց արա է, էս զուլումը դիփ բիգմէն գիդենանք:

ՆԻԿՕԼ

Սաղ աշխարբը ձեզանից է տանջվում, ի՞նչ կը լինի թէ մէկն էլ ինձնից տանջվի:

ՎԱՐՕ (Ստեփանին)

Ա՛յ մարթ, չիս ասի թէ ինչ խաբար է:

ՍՏԵՓԱՆ

(Տեղից վեր է թռչում և թաշկինակով քրտինքը սրբում):

էլ ի՞նչ խաբար պիտի ըլի, տուն էննգի Տրիփոն Բաղդանիչի մօտ, գուզիս թէ չէ աղջիկդ ինձ տու, թէ չէ կրակ

կուտամ, ջարդու փշուր կօնիմ, կու խիխդիմ, զարբազնե-
րով կու ծակծկիմ կօսէ, էլ ի՞նչ գիղիմ:

ՎԱՐՕ

Ով է տուն ննգի:

ՍՏԵՓԱՆ

Ո՞վ. այ (ցոյց տալով Նիկօլի վրա) միւր պրօկուրօրը...
էրանի գիղենամ ի՞նչ կօնէ Մազութեանի աղջիկը, ի՞նչ միւր
բանն է: Քուչուսը վուր էկիպաժը քշում է, հէնց գիղէ
մի՞նք ջիանձվելէք ինք ու լամիս վուտի տակը հաւար է,
սակի գնում է ու նրամէն աղջիկ է ուզում: Վա՛յմէ, վա՛յ-
մէ խիլը, ինչ լաւ բան իս, տօ մունգրէկ:

ՔԱԼԻ

Վուրթի, ի՞նչ ամուսնութեան է, վուր ուստաբաշի Եօ-
վանու տղէն Տիգրանի աղջիկն ուզէ, թէ չէ խօ ինքն էր
տալի... հիմի ի՞նչ է պատահի:

ՍՏԵՓԱՆ

Ի՞նչ է պատահի... էն, վուր ջիանձվելէն թիւաւուր-
վեցաւ. էհ, դէղիջան, ի՞նչ գիղիմ, աշխարքը պտուտ է
գալի, կօսէ, իմացա՞ր թէ չէ, զանա իր օրումը էլիլ է էս
բանը: Մազութեանի աղջկայ տուրնուրին սաղ խաղինէն
չի գիմնա, ախար նա ի՞նչ միւր բանն է:

ՆԻԿՕԼ (վեր է կենում և ման է գալիս)

Ի՞նչ բո բանն է էդ թահար բաներու վրայ խօսելը,
հազար անգամ ասել եմ իմ գործումը մի խառնուի:

ՍՏԵՓԱՆ

Այ մարթ, վունց թէ իմ բանը չէ, մաղբուն ինք ըլում,
ախպէր. միզ ո՞վ է իրարմէն բաժնի, ինձ ու իմ կնկայ
բողազը ուզումիս էս սահաթիս էեթ դուս կտրէ, քու գէ-
ղին մայինց տիրութիւն չի՞ս անի. այ մարթ, վուղջ կայեանքը
ձեռներեմէս գնում է:

ՔԱԼԻ

Ինչ էր վուրթի, փողրաթի գուրձը խօ փիս չը գնա՞ց:

ՍՏԵՓԱՆ

Ինչ փողրաթ, դէղիջան, քաղցած պիտի մեռնինք ա-
սումիմ: Մազութեանը ապսպրիլ էր, գուզիս թէ չէ, էսօր-
եթ հէսաբը պիտի վիրջանցնինք, կօսէ, իմ կանտօրէն
Բաբու իմ տանում ու 'ես էլ գնում իմ օղլուշաղով, կօսէ:

ՎԱՐՕ

Հա ու հէսաբ արէք, ինչոր վուր ձիւր փայ կուննգնի,
էն խօ չի՞ կանա խիլ:

ՍՏԵՓԱՆ (կնոջը)

Մէ մունջ կաց, հօրդ ողորմի է: Ի՞նչ սիւքարի փայ,
վո՞ւրդիէ փայ: Հինգ հարուր թուման մաղաղիէմէն փուղ
դուս բերի, վուր փողրաթումը գալօգ տուն տարայ: Ումիկ
ունէի հիզը առուտուր կօնիմ հիզը փողրաթին անգաճ
կու դնիմ ասի, հիմի ի՞նչ անինք, մաղաղիէմէն միզ վուն-
չիչ չի ննգի, հինգ հարուր թումանն էլ էնդի պիտի կոր-
չի, հալա պարտք էլ է գնվում վունցոր Մազութեանը հէ-
սաբ է անում. տուններուս կու վիւր գրին, քուչէն դուս
կոծին, քաղցած պիտինք մեռնի. վայմէ, վայմէ ի՞նչ անիմ
(նստում է)

ՔԱԼԻ

Այս Աստուծ, էս ի՞նչ օրին հասայ (Ստեփանին), վուր-
թի, հինգ հարուր թումանի տւել փայ չի՞ ննգնի էնդդայ
մաղաղիէմէն:

ՍՏԵՓԱՆ

Կու ննգնի, ի՞նչ գիղիմ: Թանխէն գիղիմ, գլուխկը
գիղիմ, շահը գիղիմ, ի՞նչ զօռութէնով կու ննգնի. էն գըլ-
խէն խառնած է էս բանը ինչկիլ հիմի էլ կարող էր դուրս
բշի, ի՞նչ զօռ ունինք:

ՎԱՐՕ

Էն խօ հաշա չէ՞ ուտում Մազութեանը՝ վուր վուղջ
կայեանքի կէսը ձիւրն է:

ՍՏԵՓԱՆ

Հիմի ի՞նչ անինք, վուր հաշա չէ ուտում, ջէր էս

աղա զաղէն երկու հազար թուման ունէ կերած, էս հէ-
սաբումը չի նսգնի:

ՆԻԿՕԼ (վճռականապէս)

Քանի որ ես եմ ձեզ կործանել, ինքս էլ պատասխան
կը տամ Մազութեանին (ուզում է դուրս գնալ):

ՎԱՐՕ (հասնելով ձեռքից բռնում է)

Չարդ տանիմ, Նիկոլ ջան, ի՞նչ իս անում:

ՔԱԼԻ (նեղացած մօտ է վազում)

Վուրթի ի՞նչիս ուզում ինձմէն, խղճա՛:

ՆԻԿՕԼ (նրանց)

Օհ, ի՞նչպէս տանջում էք:

ՍՏԵՓԱՆ

Նիկոլ ջան, հոգուդ մեռնիմ, անգաճ արա. էսթահար
բանումը շտապիլ հարկաւոր չէ: Մի՛նք մի՛րը հէսաբ ա-
նինք, դաւթընիւրը քրքրինք. մէրդ ինչոր հին թղթեր ունէ,
անդղինք, կուլի բան գթնինք. վունց գլուխը գիղինք, վունց
տակը:

ՆԻԿՕԼ

Ի՞նչ կը դուս գայ, եղբայր, մեր բոլոր թղթերը այն
վիշապի ձեռին է. ես ինքս եմ տարել, մի՛թէ նա ցոյց կը
տայ:

ՍՏԵՓԱՆ

Նո մաղբուն արի ձիգ, 'ես. էն հինգ հարուր թու-
մանը ձեռիս էր էլի, էլ ի՞նչ գուղէինք:

ՆԻԿՕԼ (նստելով)

էհ, կուժը ջրի ճամփին կու կոտրվի. ինչ կըլինի
կըլինի. տղամարթուն կնգայ պէս վայ տալ չի սազ գայ...

ՍՏԵՓԱՆ

Նիկոլ, գնանք մաղաղիէն, հէսաբ անինք, ան էն դը-
ժուխքէմէն խնդրինք քիչ մուլափ տայ, մաղբուն չանէ:
հոգուդ մեռնիմ քաղցը խօսի, էգէբա իմքին դուս գայ:

ՆԻԿՕԼ

Գնանք, վերջացնենք գործը կամ լաւ կամ վատ:

ՍՏԵՓԱՆ

Դէգի ջան, դուն էլ գնա դիգիդէգինց տուն, էնդի
ինչ որ թղթիւր ունիք ողորմած հոգի անիրուշս, դէվե-
բի, կուլի բան գթնինք:

ՔԱԼԻ (վարօին)

Գնա վուրթի, ծածկելուս դուս բի (վարօն ներս է գը-
նում սենեակը և ծածկոցը դուրս է բերում): Տունը մենակ
թողնիմ, կուլի օքմին հարցնէ:

ՍՏԵՓԱՆ

Հիմիսկեվէտ մի՛ր գիժը գուքայ, էլախտ ասի:

ՆԻԿՕԼ

Թէ գնում ենք, գնանք, թէ չէ սիրտս տեղը չէ:

ՍՏԵՓԱՆ

էն բիջը գայ է, էլախտ էլ ովոր վուր հարցրիլ է:

Տ Ե Ս Ի Լ III

Նոյնք և ՊԵՏՕՆ

ՊԵՏՕ

(Ներս է գալի, քիչ խմած է, բոլորին տնդողում է). Բա-
րի աջողում. վահ, ի՞նչ խելօք էք, հաղորդվիլու խօ չի՞ք
հաղբվում, հը, թէ կարտօչկա հանելու իք հաղբվում:
Ստեփան Մակարիչ արի մէլօթիանա փաթրէթդ հանէ, ինչ
զօրբա սըփաթ ունիս:

ՍՏԵՓԱՆ

Ի՞նչ վուխտի էտ է, տօ:

ՊԵՏՕ

Հա, աշխրբի համա լաւ է. ինչ գիղիմ, մարթինք,
կուլի մէբաշ մեռնում իս:

ՍՏԵՓԱՆ

Տօ, դուն խիտ հարփած իս...

ՊԵՏՕ

Հա, կամ էլի, էնէնց թաթարիեախնի:

ՍՏԵՓԱՆ

Բան պիտէի ասի...

ՊԵՏՕ

Վահ, բաս Պետօի ումբըր խաւրի, թէ հարբած կի չէ,
մեռած էլ ըլիմ թէ քիզմէն շատ բան չը շինեմ, ասա էլի:

ՍՏԵՓԱՆ (չարացած)

Արի ու կարիքի վուխտը սրա ումիկն ունեցի: Էս գիժն էլ ի՞նչ էսօր է հարբի:

ՊԵՏՕ (Քալիին և Վարօին)

Դէղի ջան, 'ես ու իմ Աստուծը բաղդաւորիք, վուր էսթահար փեսայ ունիք—էլ խօլերէն չի մօդ գայ ձիգ-ՔԱԼԻ

Լսէ, վուրթի, իմքին պիտի ասի:

ՊԵՏՕ

Հետտի բան կօսէ վուր... Ստեփան Մակարիչ, արած մէ լօթիանա լաց ըլի:

ՍՏԵՓԱՆ

Տօ, գժվեցար թէ ինչ Աստուծ խոովեցաւ:

ՆԻԿՕԼ

Պետօ, Պետօ, մէ անգաճ դի, հոգուդ մեռնում, բան ունենք:

ՊԵՏՕ (գնում է դէպի Նիկօլը)

Ասա, գենացվալէ:

ՆԻԿՕԼ

Մենք հիմա ուրիշ տեղ ենք գնում ու դուն էստի կաց, քեզ հետ խօսելու բան ունեմ...

ՊԵՏՕ

Մէ նմուտ դեմեր արի դուքանը, երկու դարաշուխալու տղայ ունիմ դոնադ, մէ ստաբան գինի խմէ...

ՆԻԿՕԼ

Հիմա դրա համար պարտալ չեմ, հոգուդ մեռնեմ. Մագուլթեանը հէսաբ է ուզում ու չեմ իմանում թէ գործը ինչով կըվերջանայ:

ՊԵՏՕ

հա...ա...

ՆԻԿՕԼ

Խիստ հաթաթա է տալի, մտկումը դրել է մեզ բաթմիշ անէ ու կանի էլ, ամեն բանը նրա ձեռին է. նա կարող է առանց թիքայ հացի թողնել մեզ. դու խօ գիդեա բանը ինչուսն է:

ՊԵՏՕ

Էդ խօ գիդիմ, ամա թռչիլ էլ սովորում է...

ՆԻԿՕԼ

Ի՞նչպէս թէ թռչել:

ՊԵՏՕ (սպառնալով)

Բաս էլ չէ՞ ուզում վուր գեղնի վրա ման գայ:

ՍՏԵՓԱՆ

Գնանք, գնանք, Նիկօլ ջան, ուշանում ինք (գնում են. ՔԱԼԻՆ և ՎԱՐՕՆ առաջ են դուրս գնում):

ՊԵՏՕ

Վայմէ, վայմէ, բաս էտ է էլի:

ՆԻԿՕԼ (դուրս գնալով)

Ես շուտով կը գամ, դու մի քիչ քնի, խմած ես:

ՊԵՏՕ (մենակ)

Էլ ի՞նչ խմած, էս մունդրէկ գինին էլ վուր չէ հարբեցնում, արի հիմի արուն խմիլ կցինք, կուլի նրանով մայրնց հարբինք. (նստում է թախթի վրա, մտածում է և հետը չիբուխը կպցնում): Մի խմի, կօսէ. բաս ուշիար մարթը վոնց մտիկ տայ էս աշխարքի անդէրութէնին. սիրտ չը պիտի: Ինչ օջախ էր ու վունց է բաթմիշ ըլում, քիչ ըլի վոնց է յիգու յիգ գնում (մտածում է) օհ Մագուլթեան, մէ քու գլուխը ձեռս ննգնի. իմ օրումը Նիկօլուն էսէնց դարդուտ չիմ տեսի, ափսոս չէ. սիրտս կտուր կտուր է ըլում: Էհ, (վեր է թռչում տեղից) 'ես էլ ինչ իմ մունդրէկի պէս խօսում տօ, մէ մարթ չի՞մ, կնիկս է լաց ըլում, թէ՞ վուրթիքս: Վան, Նիկօլը մաղբուն ըլի... տօ, էն Մագուլթեանին տարեմուտվայ խուզի պէս կու մորթիմ... պրծաւ ու գնաց... ջահանգամը իմ գլուխը: Նարգիզը Նիկօլուն սիրում է, կու փսակուին, տղէն էլի վուտի վրա կու կանգնի: Էն Մաշօի ջիգըը սրտումս մնաց, մէ նրան ուզում էի ցիմ ցիմ թոցնի, ամա ջահանգամը երկուսի գլուխն էլ, Նիկօլի չարի փուխ ըլի...

Տ Ե Ս Ի Լ IV.

(Նոյնը, դուքնի բիջը և ՍԻՖԻՐԱԿԱՆԸ խօսում են կուլիսների յետևը:)

ՍԻՖԻՐԱԿԱՆ

է՞ս տունն է:

ԱՐՏԵՄ

Հա, էս էլ էլի. Սիբիրական Վանօի տունը չի՞ս հարցնում:
ՍԻՖԻՐԱԿԱՆ,

Հա, Սիբիրական Վանօի տունը...

ԱՐՏԵՄ

Այ, ուստաբաշի Եօվանէ վուր կանչում էին:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Հա, նրա տունն իմ ուղղում:

ԱՐՏԵՄ

Էս է, ամա տանը վուր ոչով չը կայ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Հաջաթ չէ, կու մուլափ տամ, 'ես նրանց ճանանչն իմ. մի վախենա, վունչիչ չիմ գողնայ. դուն գնա դուք-նին մտիկ արա. (դուռը բաց անելով) բա է՞ս է Սիբիրա-կան Վանօի տունը (տնդղում է տունը)
ՊԵՏՕ

Ումնիս ուղղում, բիձա ջան, տանը ոչով չը կայ. Աս-տուծ տայ (Չիբիցը փող է հանում ողորմութիւն տալու)
ՍԻՖԻՐԱԿԱՆ (դիտելով)

Օղորմութիւն 'ես ինքս իմ տալի ու ոչովիմէն չիմ ուղղում. 'ես զոնաղ իմ:

ՊԵՏՕ

Վահ, բախշեցէք, համեցէք քու հոգուն մեռնիմ, դո-նաղը Աստուծունն է. տանը կի ոչով չը կայ ու...
ՍԻՖԻՐԱԿԱՆ

Վանց թէ ոչով չը կայ, բա դուն մարթ չի՞ս:

ՊԵՏՕ (կողմը)

Վահ, էս ի՞նչ կտրուկ պառաւ է. (նրան) վանց չէ մարթիմ, բա ի՞նչ իմ. (ցոյց տալով թախթի վրա) Այ, հա-մեցէք նստի, հոգուտ մատաղ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Էդ բացըութէնի վրա չիմ կանայ նստի, վուտնիրս

ցաւում է թէ ցածը սկամի ունիք, էն տուէք:

ՊԵՏՕ

Հիմիսկեթ, քու հոգուն մեռնիմ. (դնում է բամի մէջ տեղը մի ցածը աթոռ. կողմը) ուհ, ինչ եպիսկոպոսի միրուք ունէ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

(Նստում է և այս ու այն կողմն է նայում) Էս ում տունն է:

ՊԵՏՕ (զարմացած նայում է)

Էս տունը մէ առուտուրականի է:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Մէջն ում է կենում:

ՊԵՏՕ

Վահ, թէ չի՞ս գիդի ում է կենում, բա էլ ում մօդ էկար:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

'Ես Եօվանու օղլուշաղին էի պտրտում. վուրդի առաջ կենում էին, էլ էնդի չին կենում. ինձ սովբեցրին թէ էս-տի ին կենում:

ՊԵՏՕ

Հա, ուստաբաշի Եօվանու օղլուշաղը էստի է կենում
ՍԻՖԻՐԱԿԱՆ

Էլ ոչով միտը չունէ ուստաբաշի Եօվանուն, դիփու-նանքը սիբիրական Վանօին կանչում:

ՊԵՏՕ

Հա, նրամէն դէսը ինչոր էն ողորմած հոգուն Սիբիր դրգեցին, խալիս սիբիրական Վանօի տուն է ասում: Ջիա ջան, Եօվանուն ճանչնում էիր:

ՍԻՖԻՐԱԿԱՆ (հառաչելով)

Ճանչնում էի, վուրթի, ճանչնում էի... օղլուշաղ ի՞նչ մնաց, ամենք սաղ ին. (կողմ) Տէր Աստուծ, քամ-բաղտութիւն իմաց չը տաս:

ՊԵՏՕ

Օղլուշաղը ովքիր կէին էլի նրանք ին էլի՝ կնիկը, նիկօլը, մարթու տուած աղջիկը ու փեսէն. դիփ մետի էս տաննին ապրում:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Փառք Աստուծուն, վուր էլի արժանի կուլիմ նրանց
տէսութէնին:

ՊԵՏՕ

Դուն ո՞վ իս, ձիա ջան:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Նա, վուրթի, դրանց հօր—Եօվանու—մօտիկ բարե-
կամիմ:

ՊԵՏՕ (ուրախացած)

Բաս կուլի իմքին քոմագ անիս, հոգուդ մեռնիմ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Ինչո՞ւմը պիտիմ քոմագ անի

ՊԵՏՕ

Կուլի իմացիլ ըլիս Մագութեանի, Տրիփոն Բաղդա-
նիչի, անումը էն անիծածը էս նաչար խալիսին մաղբուն
է անում. (սպառնալով) Ծհ, նա սաղսալամաթ ձեռնեմէս չի
պըծնի: Կուլի էն խիղճ Եօվանու կարողութէնի մասին
բան գիղեհնամ. տնիրը ձեռնեմէն առաւ, հիմի մաղաղիէքն
էլ է խլում...

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Բաս դըճուտ է. էս երկու օրէ ինձամեն բանը խաբար
տուին: Եօվանու կարողութիւնը 'ես լաւ գիղեմ... 'ես
վկայութիւն կանամ տայ նրա օղլուշաղի համա, վուր վուխջ
կայեանքը նրանցն է, Մագութեանը սուտ է ասում:

ՊԵՏՕ (ուրախացած)

Ղուրթ. վահ, ձիա ջան, էդ սիպտակ միրուքիդ մեռ-
նիմ. (համբուրում է) էդ ի՞նչ ասիր. մէ բան օտկէ, արնե-
մէն ազատէ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Վո՞ւրդի ին:

ՊԵՏՕ

Բանի գնացին:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Դուն նրանցն ո՞վիս, վուր էտենց սիրադ էրվումէ:

ՊԵՏՕ

Ո՞վիմ. ջէր էս վուր քրիստոնայ իմ, վրա երկուն էլ էս
օջախի վուրթի ու ախպէր իմ: Նիկօլուն իմ գլխին լաւա-
շիմ, վուր գիղեհնամ ի՞նչ տղայ է:

ՍԻՖԻՐԱԿԱՆ (հառաչելով)

Հէրն էլ լաւն ունէր, միղք էլ կուլէր, վուր նրա վուր-
թին լաւը չէր դուս էկի: Աշխրթի համա լաւն էր ուղում,
ճշմարտութիւնը սիրում էր, վեր դիպածին վուտի կու
կանգնեցնէր ու նիղացածին կու օտկէր, ամա էս հալալ
ճամփի վրա նրա համա դժուխք լուս գցեցին: Էհ, վուր-
թի, մախլաս... ինչոր նա տանջանք կրից, ամեն քրիս-
տոնէին ինքն Աստուծ փրկէ ու ազատէ. (արտասուքը խեղ-
տում է) Աստուծ կու սիրիս մէ ջուր խմեցրու (գլուխը
քաշ է գցում):

ՊԵՏՕ

Էս սհաթիս, հոգուդ մեռնիմ, գինի կու բերիմ. (վա-
ղում է դէպի միջի դուռը, բաց է անում դուռը և կանչում է)
Տօ, Արտէմ, ձեռաց մէ խելաղա գինի գիվիր բի, մէքիչ
էլ զակուսկայ. դէ, պըծի, չուստ արա (յետ է դառնում):

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Դուն ո՞ւմ վուրթին իս:

ՊԵՏՕ

Ի՞նչ գիղիմ ում վուրթի իմ. Աստծու վուրթի իմ,
երգնքեմէն դէվէր ննգած:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Ամենքս էլ Աստծու վուրթի ինք, վուրթի. դուն էլ
էստի իս ապրում:

ՊԵՏՕ

Հրամիլիս. ա՛յ, էստիէվէտ միկիտնի դուքան ունիմ
ու 'ես էլ մէ թիքայ հաց իմ ուտում:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Քաղքցի՞ իս:

ՊԵՏՕ

Բաս չէ Տրապիզոնցի կուլիմ: Թէ Եօվանուն ճանչ-

նում էիր իմ հօրն էլ կու ճանչնենաս. ինձ նման մէ խիղճ մարթ էր, միկիտան Դաւիթ կօսէին:

ՍԻՖԻՐԱԿԱՆ (զարմացած նայում է)

Դուն Դաւիթի վնւրթինիս, իմ Դաւիթի. արի, փաթըթվի (համբուրում է) իժոճւմ, խիղճը չը կա՞յ:

ՊԵՏՕ

Վաղուց չը կայ. նա էլ գնաց սէհր անելու ի վերին Երուսաղէմ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Իմը լաւ բարեկամ էր, վուրթի: Եօվանէն խօ էդ Դաւիթին ախպուրմէն չէր ջոգում. բաս էս օջախի համա դուն եադ չիս էլի, դուն Եօվանու կնքածնիս:

ՊԵՏՕ

Նրամանքիս, դէդէս ինձ աօիլ է (դուքնի բիջը ներս է բերում գինի գաւով և զակուկայ): Բի էստի... (ձեռքից առնում է և յատակի վրա ծալապատիկ նստում Սիբիրականի մօտ, ծառան դուրս է գնում. բաժակի մէջ գինի է ածում և տալիս) աբա, բաս էս Աստուծ ողորմի իմ հօր հոգուն:

ՍԻՖԻՐԱԿԱՆ (բաժակ առնելով)

Աստուծ ողորմի ամեն արդար մարթուն: (խմում է)

ՊԵՏՕ (գինին ածում է և խմում)

Ա՛մէն. ձիա ջան, թէ չիս հաւնում ուրիշ գինի կու բերիլ տամ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Հաջաթ չէ, լաւն է. դիւի մէկ է, համը միտս էլ չէ:

ՊԵՏՕ

Վո՛ւնց թէ միտդ չէ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Շատ վուխտ է չիմ խմի:

ՊԵՏՕ

Վա՛, ասումիս քրիստոնայ իմ, բաղքի վուրթի ու գինի չի՞ս խմի:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Ասած ունէի, վուրթի:

ՊԵՏՕ

Հա՛, էտ ուրիշ է (նորից դինի է տալիս) աբա՛, մէկ էլ. դաթրած իս էրևում, գինին դուաթ կուտայ. հիմի խօ էլ ասած չո՛ւնիս...

ՍԻՖԻՐԱԿԱՆ (բաժակը առնելով)

Չէ:

ՊԵՏՕ

Մէ օրհնէ, ձիա ջան, սուս ու փուս գինի մի խմի. քու օրհնանքը առաջնուրդի օրհնանքին բարեբար է:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Աստուծ օրհնէ, վուրթի, Աստուծ քու հօր հալալութիւնը քեզ տայ ու ուրիշ բաղտավուրութիւն չիս ուզի: (խմում է)

ՊԵՏՕ

Ի՞նչ գիդիմ, հալալութիւնը վո՛ւրն է: Ախպէր տղի համա գլուխս յիդ կու գնիմ, խղճին կու օտկիմ, ճշմարտութիւնին չիմ դալատ անի... կուլի էն չըլի հալալութիւն, վուր խանդիսխան գեսետնիկներուն ծեծումիմ, (խմում է) ձիա ջան, հիմի գիդեմիսիս գալի:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Չէ, վուրթի, հիռու ճամփեմէնիմ գալի, Սիբիրեմէն:

ՊԵՏՕ (զարմացած)

Ի-ի-ի՛նչ. Սիբիրեմէն, վո՛ւտով:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Վուտով:

ՊԵՏՕ

Վադէթ թամամ արիր. շատ վո՛ւխտ է էնդի իս:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Վադէս թամամ արի, վուրթի: Քէզ պէս ջահէլ, դարդիմանդ էի 'եփօր գնացի ու հիմի խօ տե՛սնում իս ինչի նմանիմ... 'Ես ու Եօվանէն մէտի էինք:

ՊԵՏՕ

Բաս ամեն բանը կու գիդենաս. կո՛ւլի մէ բան օտ-կիս էս խիղճ օջախին:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Ումիկ ունիմ վուր քիչ մայինց օտկիմ:

ՊԵՏՕ (վեր է թռչում և համբուրում է մերուքը)

Վայ, մեռնիմ քու փառաց հոգուն. էս ինչ իմ իմանում. մէ պատմէ չարդ տանիմ, ինչի էիր ղրգած, ես Եօվանուն վոլդի ուստ էկար: (մօտը նստելով)

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Ասիլը ջէր հարկաւուր չէ:

ՊԵՏՕ

Ձէ, հոգուդ մեռնիմ, ասա, թէ չէ լամիս գժվիմ: Ինչիս ասում, Նիկօլը վուր իր մուլքը յիդ ստանայ... վայ... գիդիս ինչ լաւութիւն է արի ինձ... (բաժակով գինի է տալիս)

ՍԻՖԻՐԱԿԱՆ (բաժակը առնելով)

Բաս կօսիմ, ամա ոչովումօդ վունչիչ չը գիդենաս. (խմում է) Մէ ժամանակ 'ես մինձ օջախի ու կարողութէնի տէր մարթ էի. ունէի լաւ տներ ու մաղաղիք. խալխի մէջն էլ լաւ մարթու անում ունէի... Մի ջանէլ աղայ մինձացրի, առաջ տանա նոքար էր. իժում տարայ մաղաղիւմս կանգնեցրի, վերջը ննդիր էլ շինեցի, մենակ դադումումը. նրան էնէնց մալայ էի, վունցոր վուրթուս ան ախպուրս. ինչ կու քաշվէի, ուր կեհէր: Նա փուղիր ճարից ու շինքը հաստացրուց, հառամութիւն տեսայ ու մէ անգամ իրան ասի՝ քիդ համա 'եաքա լաւ մաղաղիա կու բաց անիմ, Աստուծ բարի տայ, ինձմէն կի հիւացի ասի. նա սրա վրա վունչիչն չասաւ: Մէ շաբաթ գիշիր մաղաղիւմը հէսաբ ունէինք. խիստ ուշացանք, բոլ առուտուր էինք արի: 'ես ու իմ ննդիրը էնդիւեթ մնացինք, իրիգնահաց կերանք ու լաւ էլ խմեցինք... 'ես էնէնց հարբած իմ օրումը չիմ էլի:

ՊԵՏՕ

Հա, խիստ կու կպչէր. ջէր մէկ վուր դաթրած կուէիր ու մէկ էլ ուրախութենեմէն, էլի, չունքի լաւ դախլիք ունեցի:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Հա... 'ես էնդիւեթ մաղաղիւմ քնեցայ, իմ ննդիրը կի տուն գնաց: Մէկէլ տեսնիմ, կուլէր առաւուսուայ սահաթի հինգը դռն թիկուց իմացայ, կանչեցի դուքնի բջին, դուռը բաց արաւ. պօլիցիէն գլխիս կանգնեցաւ, ձեռնիրս կապեցին ու ջիբիրս քրքրեցին: 'ես գլխի չը ննգայ, իրա օրում էտթահար բանը ով կու համարձակուէր ինձ մօտ: Զիբերեմէս, ծուցեմէս, լափշիքներու ճկտկերեմէն դաստայ-դաստայ դալը բիլէթ հանեցին: Հարցըին ումն է. 'ես շշկլած էի, հէնց գիդէի միր դախլի փուղն է, իմն է ասի, հալա օրթում էլ կերայ. էնէր ու էնէր ինձ թոցրին...

ՊԵՏՕ

Մախլան:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Դուշան աղլամաս: *)

ՊԵՏՕ

Իժում, չիմացար թէ էտ բանը ով արաւ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Վոնց չիմացայ, էն մարթուն էլ քրքրեցին մագրամ հատ փուղ էլ չը գլթան, էստու դէնը ինչով կանէի գլուխս արդարացի:

ՊԵՏՕ

Իժում էն մարթն ով էր, վայ, 'ես նրա...

ՍԻՖԻՐԱԿԱՆ

էտ մենակ 'ես ու իմ ննդիրը գիդինք, թէ ուստ գուքայ ուրուքմին...

ՊԵՏՕ

Իժում տմրան էլի:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Տարան, օղլուշաղիս էլ չը շանց տուին. ամա Աստուծու

*) Վայքը ընկածը չի լաց լինի:

դադաստանը մինձ է ու թաքաւուրն ողորմած. Աստուծո
նրան զօրացնէ, հիմի մայինց ազատից:

ՊԵՏՕ

Իժուժ կնիկդ. վուրթիքդ էլի սաղին:

ՍԻՅԻՐԱԿԱՆ (յուզուած, բարձր ձայնով)

Իմ վուրթիքը չի՞ն նիկօլն ու Վարօն, իմ կնիկը չէ՞
Քալին: Ես իմ էն սիրերական Վանօն, վուրն էլ սաղ
բաղքումը մասխարայ իմ դարի: (լաց է լինում)

ՊԵՏՕ (վրայ է ընկնում և փաթաթվում է)

Մամա ջան, ձիա ջան, կնքաուր ջան, դունիս. էս
ի՞նչիմ իմանում, Աստուծո. նիկօլու մամէն դո՞ւնիս.
(գնալով սենեակի այս ու այն կողմը): Ո՞վ կաք էստի, խալիս,
էկէք: Ակի մեռաւ ասում է, էս ի՞նչ խաբար է:

ՍԻՅԻՐԱԿԱՆ

Վուրթի, մուլափ ջէր ինչ ասիմ...

ՊԵՏՕ

Մաշ քունը ու էս օջախի մաղբուն անողը Մաղու-
թեանն է: Օ՜հ, Մաղութեան, բաս Պետօն մեռնի, թէ էս
բանը քիզ էժան նստեցնէ. (ձեռքը ձեռքին խփելով). վա՛յ.
վա՛յ, դէդի ջան, էս ի՞նչ խաբար է:

ՍԻՅԻՐԱԿԱՆ

Ջէր դուն մուլափ տու, վուրթի. ինչոր ասիմ էն
լսէ: Մաղութեանի օյիննիքը էնդիւեթ ասին...

ՊԵՏՕ (դայրացած)

Վա՛յմէ, վա՛յմէ, ի՞նչիս ասում, ձիա ջան, վո՞ւնց մունջ
կենամ. գի՞դիս հիմի 'ես ինչիմ, ասլան, դափլան, աշ-
խարք կուտիմ, վուղջ քաղաքը շուռ կուտամ (բղաւում է)
վա՛յ, 'ես ձիր... արա ո՞վ որ աղամարթ է թող առչիւս
կանգնի, էսէ ձիր դադաստանը...

ՍԻՅԻՐԱԿԱՆ

Անգաճ արա. ջէր դուն ոչովի մօղ ձէն մի հանի. դուն
իմացի 'եփի՞ն հէսաբ անում ու ինձ էլ էնդի տար վուրդի
կուլին. ուզումիմ վրա հասու ըլիմ էնէնց, վուր ոչով չի-
մանայ թէ ով իմ:

ՊԵՏՕ

Մաղութեանի տանը կուլին էլի, քու մինձ տանը.
բաս 'ես կենամ ու կուլ իմանամ 'եփ կունենան հէսաբը:
ՍԻՅԻՐԱԿԱՆ

Լաւ, արի ու ինձ տար:

Տ Ե Ս Ի Լ V.

Նոյնք, ՔԱԼԻ և ՎԱՐՕ

ՔԱԼԻ (ներս գալով)

Աստուծո, էնէնց աջողութին տու Մաղութեանին,
վունցոր նա էմարթլէբօդէս իմ խիղճ մարթու օջախին:

ՊԵՏՕ

Դէդի ջան, հիմի էլ փիքը մի անի, մէ լաւ ագվա-
կատ իմ ճարի...

ՔԱԼԻ

Ո՞ւմը, գենացվալէ (ցոյց տալով Եօվանու վրա) սա ո՞վ է:
ՍԻՅԻՐԱԿԱՆ (յուզուած գողում է)

Սիրտս նիղանում է (բարձր) Քալի, քու մարթը գե-
րեզմեմէն յարութին առաւ, վուր քիզ քոմագ անէ:

ՔԱԼԻ (կանգնում է դէմ առ դէմ ու նայում)

Ի՞նչիք հրամանք անում, գենացվա՛ն:

ՍԻՅԻՐԱԿԱՆ

Արի, արի փաթըթվի քու անժամանակ ծիրացած
Եօվանուն, քու մարթուն...

ՔԱԼԻ (խեղապարի նման)

Հօը, իմ մարթուն (ձնում է) Եօվանէ, դո՞ւնիս, գենաց-
վալէ:

ՍԻՅԻՐԱԿԱՆ

Արի, փաթըթվի:

ՔԱԼԻ (լաց լինելով, ընկնում է գիրկը)

Եօվանէ, գենացվալէ...

ՎԱՐՕ (ճչալով)

Մամի ջան, մամի (ընկնում է գիրկը և փաթաթվում)
չարդ տանիմ, մամի ջան: (լաց է լինում)

ՍԻՖԻՐԱԿԱՆ (երկուսին էլ գիրկն առնելով, համբուրում է)

Վուրթի, Վարօ ջան... սիրտս նիղանում է, աչքերս մթնում է, փաթթվեցէք... (աչքերը դեպի վեր բարձրացնելով) գոհանամ Քիզ, ողորմած Արարիչ, վուր էլի արժանացրիր իմ օղլուշաղիս տեսութէնին, հիմի էլ ինձ հաջող չէ... Բաղդավուր ապրեցէք, իմ տանջանքը հերիք է:

ՊԵՏՕ (յուզուած)

Էրվեցայ, էրվեցայ (գլխարկը վերցնելով և վեր նայելով) փառք Քու անումին, Աստուծ:

Պ ա տ ի կ ն ը

Վարագոյրը իջնում է կամաց կամաց:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ III.

Բեմը ներկայացնում է առաջին գործողութեան տեսարանը, միայն ձախ կողմը (բեմից նայելով) դրած է զրասեղան իրա պարագաներով. Մազութեանի կարինէտը

§ Ե Ս Ի Լ I.

Վարագոյրը բացուելիս Մաշօն բեմի վրա է, ձեռին բռնած ունէ բմբլէ աւել, սրբում է կարասիքը և երգում է մի որևէ սիրոյ հղանակ:

ՄԱՇՕ (մենակ)

Նս էստի խաղ իմ ասում էնգի, կի Նարգիզը աչքերը լացով ուռցնում է: Էհ, ի՞նչ անիմ վունչիչ չը կանացի օտկիլ էի իմ քարոզներով. Նիկօլուն սիրում է, ամա Քլէսովին պիտի ուզէ. ի՞նչ անիմ հօրն ու մօր խաթրը չիմ կանայ կտորի, կօսէ. դրուստ խիլքի տոպրակ է էլի: Արմենելու բան է խաչը գիգենայ, վուր հարուստ մարթու խիլքը անպատճառ պակաս պիտի ըլի, հա Աստուծ գիգենայ. լաւ կի է սագեցրած, խիլքն էլ ու դովլաթն էլ վուր մէտի նրանք ունենան, միզ խղճերուս էլ ի՞նչ կու մնէր: Նարգիզը, էնքան կարողութէնի տէրը, չէ կանացի ասի հօրն ու մօրը, թէ էս մարթը ինձ դուր չէ գալի ու չիմ ուզի: Ո՞վ կանայ ինձ զօռով մարթու տայ, աչքի պիպիկը կու հանիմ: Նս պիտիմ ըլի դրա տիղը վուր ու մնոր հաւնիմ տուն բերիմ ու կշտիս նստեցնիմ, Սրա վրա էլ անխիլքութիւն տեսիլիք, մարթ սող աշխրբի կարողութիւն ունենայ ու չը կանենայ վայելէ: Հոգով ու

մարմնով վուր կորչելու ըլիմ, մայինց էս բանը մօշլա կօ-
նիմ. ափսոսա նիկօլ:

Տ Ե Ս Ի Լ II.

Նոյնը և ՆԱՐԳԻԶ

(Ներս է գալիս տխուր չքեղ է հագնուած տանից դուրս
գնալու համար):

ՄԱՇՈ (ծաղրելով, գլուխ է տալիս)

Պառլէզա Խամփերի բարով, թուռնիրդ վոնցին,
բատոնոյ ջան:

ՆԱՐԳԻԶ

Երանի քո սիրտն ունենամ, Մաշօ:

ՄԱՇՈ

Իժում ի՞նչ կօնիս. էսդդա կարողութիւնը չիս կանա-
ցի վայելի, իմ սիրտը ի՞նչիդ պէտք դուքայ, կէս գրվան-
քայ չի էլ դուս գայ ու...

ՆԱՐԳԻԶ (հառաչելով)

Է՛հ, դուն էլ: (նստում է)

ՄԱՇՈ

Հը, ի՞նչ էր. հացդ խօ չէ՞ հատի, Խամփերի: Ի՞նչիս
թիւիւրդ վեր թողի կարկտեմէն ծեծած աղաւաի պէս. ի՞նչ
խաբար է:

ՆԱՐԳԻԶ

Ձը գիտեմ թէ ի՞նչ անեմ, ո՞ր կողմը ընկնեմ. գլուխս
սպանեմ:

ՄԱՇՈ (ծաղրելով)

Շատ էլ լաւ կօնիս, հիմի գլուխ սպանիւր մօղա է,
դուն խօ առանց մօղա չի՞ս կանա ժաժ գայ...

ՆԱՐԳԻԶ

Բաս ի՞նչ անեմ, ասա...

ՄԱՇՈ

Վոնց թէ ի՞նչ անիս. չիս ուզում էտ անիծած մար-
թուն, մի ուզի. ո՞վ կանայ զօռ բանեցնէ:

ՆԱՐԳԻԶ

Նիկօլու հետ փսակուելը ինձ համար անկարելի է

դառնում. հայրս ոչինչ չի տայ, Նիկօլն էլ ոչինչ չունի.
այդպիսով կը տանջեմ իմ գլուխն էլ նրան էլ, մանաւանդ
նրանը, որը կեանքիցս թանգ է:

ՄԱՇՈ (ծաղրելով)

Ի՞նչիք հրամայում քա. էդ խաբարը կարաբաղինում
խօ չի՞ք կարդացի: Ի՞նչ տնիմ ինչ խիստիս կատղի մարթ
ուզելու համա. իսկի էլ մարթ մի ուզի, տանը նստի. օխ-
նած մէ թիքայ հացը խօ չէ՞ կտրվի:

ՆԱՐԳԻԶ

Այդ էլ որ չի կարելի: Ծնողներս այդ մարդուն են
հաւանում... Աստուած է վկայ որ Նիկօլուն էս միշտ կը
յիշեմ և կաշխատեմ ազատել նրան չքաւորութիւնից...
պսակված լինելով աւելի կարող եմ այդ բանը գլուխ բե-
րել: Մէկ էլ մտածում եմ, որ այս մարդը ինձ խիստ է
սիրում, կարելի է մի կերպ հանգիստ ապրեմ: Դարդս ի-
մացիր թէ ի՞նչ է, անպատճ առ ինձ պէտք է մարդու տան,
բայց ոչ իմ ուզած Նիկօլուն:

ՄԱՇՈ

Աղջի, էս մարթը սիրում էլա պիտի ըլի քիզ. վա՛հ,
Աստուած չը կա՞յ, քիպէս կնգան մարթ կանայ չը սիրէ:

ՆԱՐԳԻԶ

Ի՞նչպէս թէ չը սիրէ. նա ինձ խիստ է սիրում:

ՄԱՇՈ

Դիմիս, մէկ Թոփչիունց Շուշանին է սիրում, մէկ էլ
քիզ. քիզ գրուստն ասիմ, հոգի ջան, քիզ կի չէ, քու դով-
լաթն է սիրում... սալախանայ է աղջի:

ՆԱՐԳԻԶ

Էդ ինչպէս կարելի է, որ սիրելիս չը լինի:

ՄԱՇՈ

Բաս գրազ գանք, վուր քիզ վրա աւել ինձ ըլի սի-
րում. ուզումիս աշքարայ ջանց տամ:

ՆԱՐԳԻԶ

Այդ երբէք չեմ հաւատայ:

ՄԱՇՈ

Մի աւտայ ի. ամա ինչկլի քի մօղ տուն գուքայ մէ

սահաթ ջէր ինձ հիդ է խօսում պերեդնումը:

ՆԱՐԳԻԶ

Ի՞նչ կայ որ:

ՄԱՇՈ

Պրասա ու նիսիս... Նիկոլու վրա պիտիս փոխի էդ փիշխուլին (պատուհանից նայելով) բաղդի վրա հորէն նա էլ վոտանիբը թրեկելով գալիս է. դուն գնա քու օթախը ու էնդղանց թամաշա արա. տիս թէ ինչ միբղայեա ու ուղունդարա խաղցնիմ:

ՆԱՐԳԻԶ

Ճիշտ: Դու լաւ գիտես, որ դրա վրա սիրտս չէ քաշում, բայց սաստիկ ցանկանում եմ տեսնել դրա երեսպաշտութիւնը. գոնէ առիթ կունենամ մերժելու:

ՄԱՇՈ

Լաւ է, գնա. ա՛յ, դռանը մօտկացաւ:

ՆԱՐԳԻԶ

Բաս ես սենեակիցս կը նայեմ, մի լաւ փորձիր (գնում է իւր սենեակը):

ՄԱՇՈ

Բաս 'եա աղջիկ չիմ ըլի, թէ Նիկոլուն չը փախցնիլ տամ Նարգիզին. Պետոն էստի չէ, աւտաս իրան Տրիփոն Բաղդանիչին էլ գողնայ, չէ թէ Նարգիզին:

ՏԵՍԻՒԼ III.

Նոյնը և Քլէսոն

Քլէսոն (ներս է գալիս ժպտալով)

Իմ աննման ծաղիկ, բարեաւ:

ՄԱՇՈ (կողմը)

Հիմի կի դրուստ ճանգս նընգաւ:

Քլէսոն (մօտենալով)

Ի՞նչ բարին հարցնիմ, աղջիկ պարնի հաւատարիմ:

ՄԱՇՈ

Սաղ սալամաթ իմ, պարնի անհաւատարիմ:

Քլէսոն

Ինչու վրա էք ասում այդ:

ՄԱՇՈ

Հէնց էնէնց ասի, դուք ինչի՞ վրա ասիք:

Քլէսոն (կողմը)

Սատանայ է էս անիծածը, բայց լաւն է (նրան) իմ բարեից իս չը նեղացա՛ք:

ՄԱՇՈ

Ի՞նչի պարուն. ամեն մէ ծառայ իր սիրուջը հաւատարիմ պիտի ըլի:

Քլէսոն (կողմը)

Երանի Նարգիզը սրա չափ խելը ունենայ. (ժպտալով նրան) ուրիշ, ի՞նչ բարին հարցնենք. իմ փարշէվանգը ո՛ւր է:

ՄԱՇՈ

Ձիր փարշէվանգը թռչիլ սովորեցաւ, էլ մէ նմուտ տանը չէ մնում:

Քլէսոն

Մի՞թէ. ուրեմն թեկըր պէտք է կտրատենք:

ՄԱՇՈ

Ձիր անհամբերութենի թիւրը վուր կտրտիք ուփրօ լաւ կուլի. նա էստի մօտիկ հարեանի մօդ է, հորէս գուքայ:

Քլէսոն

(նստում ու ձգում է բազկաթոռի մէջ և հաճոյքով նայում է ՄԱՇՈ-ի վրա)

Ուրեմն տանը չէ՞... հա... ա՛, այդ ուրիշ բան է... (կողմը) էս անիծածը շատ լաւն է... (նրան) ողջ մէկէ, դուք իս տաննէք, կարծեմ չէ՞ք ձանձրացնի...

ՄԱՇՈ (կեղծելով)

Ինչո՞վ կարողիմ ժամանակ անկացնիլ տամ. 'եա ի՞նչ արժանի իմ ձիգ հիդ մասլահաթ անելու...

Քլէսոն (ժպտալով)

Երեւակայեցէք, որ դուք աւելի արժանի էք, քան մէկ ուրիշը... դուք ամենագեղեցիկ արարածն էք:

ՄԱՇՈ (իբրև ամաչելով)

Ինչի՞ իք վրէս ծիծաղում պարուն, 'եա մէ խիղճ աղջիկ իմ...

ՔԼԷՍՈՎ

Դուք խեղճ չէք... ոչ թէ խեղճ, այլ ձեր աղջիկ պարնից բաղաւոր էք... ճիշտ է, նա իմ կինս է, բայց... խօսքը մեզ հետ ապրելու, նարգիզին մենակ խօսք թողնի:

ՄԱՇՈ (բաղբիւրով)

Ո՞վ կարժանացնի էն բաղբաւորութիւնն, վուր ձեր տանը կենամ ու դիմի ձիւ մտիկ տամ...

ՔԼԷՍՈՎ

Երեւակայեցէք, որ ձեր բաղբաւորութիւնը ուրիշին աւելի կը բաղբաւորեցնէ: (վեր է կենում, յուզուած) Երեւակայեցէք, որ էս բաղբաւորութիւնը ձեր համաձայնութիւնից է կախուած...

ՄԱՇՈ (յետ քաշուելով)

Ի՞նչ համաձայնութիւն, էդ 'ես չիմ հասկանում:

ՔՍԷԼՈՎ (քիչ քիչ մօտենալով)

Բանն էլ էն է, որ չէք հասկանում. բանը նրանումն է, որ ձեր զլխի արժէքը չը գիտէք, որ ձեր գեղեցկութեան արժանաւորութիւնը չէք գիտում կնոջ անունը կին է, բայց ձերը... (մօտ քաշուելով):

ՄԱՇՈ (յետ քաշուելով)

'Ես ծառայ իմ... (նարգիզը գոնից նայում է):

ՔԼԷՍՈՎ

Այո, ծառայ էք, այնպիսի ծառայ, որին պէտք է ծառայեն քո աղջիկ պարնի նման երեսունը... սրանում դուք շուտով կը համոզուէք...

ՄԱՇՈ

Դուք կին ունէք...

ՔԼԷՍՈՎ

Ամուսնութեանը մարդկանցից հնարած յիմարութիւնն է. իսկական բաղբաւորութիւնը և ճշմարտութիւնը միակ սէրն է և այս միակ սուրբ զգացմունքը նուիրում եմ ձեզ (ձեռքը փաթաթում է մէջքին և ուզում է համբուրել):

ՄԱՇՈ (ձեռքից սլքուելով, զգացուած)

Ձեմ կարո՞ղ, 'ես արժանի չիմ, կու մեռնիմ...

ՔԼԷՍՈՎ (իբր յուզուած)

Մաշօ, մաշիկօ (չոքելով) ես քո յոյսով եմ ապրում, քեզ համար եմ ամուսնանում նրա վրա խղճա... (համբուրում է ձեռքը):

ՄԱՇՈ (կողմը)

Վե՛րջ քոռանամ 'ես. ինչ ուղտի պէս չոքից, մնամ քիչ չափն անցկացրի...

Տ Ե Ս Ի Լ IV.

Նոյնք և ՆԱՐԳԻԶ (ներսէ գալիս)

Մաշօ (ՆԱՐԳԻԶին տեսնելով ճշում և փախչում է) վե՛րջ:

ՆԱՐԳԻԶ (Մաշօին)

Շարունակեցէք. շարունակեցէք, մի՛ք ամաչի՛ր...

ՔԼԷՍՈՎ (վեր կենալով)

Էս անիծածը ի՞նչ արաւ, թէ՞ ասում էր տան չէ:

ՆԱՐԳԻԶ (դառնութեամբ)

Ինչո՞ւ էք վեր կենում պարոն, հանգիստ եղէք. հիանալի դրութեան մէջ էք...

ՔԼԷՍՈՎ (կեղծ ժպիտով)

Ծիծաղելի բան է էս ձեր աղախի՛նը. պատմեցէք, ասում է, թէ նարգիզից առաջի անգամ ի՞նչ ձևով խնդրեցիք ձեռքը ու էլ չը հեռացաւ և երեւակայեցէք, որ այս հառակի մարդուս հետը գցեց... ճիշտն ասած, ես էլ շատ եմ սիրում ուրախ սրտի մարդիկ. (ծիծաղում է) ինչ հանաքչի է եղել, ինչքան ծիծաղացրեց ի՛նչև ձեր գալը... թէև ասում են ծառաների հետ մարդ գլուխ չը պիտի դնի... Բայց ես յիմարութիւն եմ համարում այդ, ի՞նչու չը պէտք է. (կողմը) թէ հիմա ազատուեցի, յետոյ էլ փախ չը կայ. ի՞նչ արաւ էն անիծածը...

ՆԱՐԳԻԶ (կողմը)

Այս մարդը արժանաւորութիւնից միանգամայն գուրկ է եղել. (նրան դիտելով) ուրիշ, էլի ի՞նչ կը հրամայէք:

ՔԼԷՍՈՎ (ձեռքերը տրորելով)

Մեր գործերը հիանալի են գնում, բոլորը վերջացրինք.

միայն մի բան է մնում—մտածել հարսանիքի մասին: Ճիշտ, ես ձեզ համար մեր սովորութեան համեմատ նշան բերի. (զրպանից հանում է մի փոքրիկ արկղ) խնդրեմ յիշատակ ունեցէք... (ծիծաղում է):

ՆԱՐԳԻԶ

Տուէք իմ աղախնին, թէպէտ դուք նրան էլ արժանի չէք:

ՔԼԵՍՈՎ (շփոթուած)

Ի՞նչպէս թէ աղախնին. դուք հիւանդ խօս չէք:

ՆԱՐԳԻԶ

Միայն հիմա եմ ողջ ու առողջ և միայն հիմա բաց արի ես աչքերս: Իմ առաջի նախազգացումը արդարացի էր, թէպէտ ես նրա վրա ուշադրութիւն չը դարձրի և հտնգամանքներին հետևեցի:

ՔԼԵՍՈՎ

Չեմ կարծում, որ այդ հանգամանքներին հետևելով տանուլ տուած լինէք կամ տանուլ տաք միջբան... ձեր բաղդաւորութեան համար...

ՆԱՐԳԻԶ

Ո՞ր բաղդաւորութեան: Այո, շատ երջանկացրիք, որ դուք ցանկացաք լինել իմ ամուսինը. կարելի է անշուք էք ասում:

ՔԼԵՍՈՎ

Այդպէս էլ որ լինի:

ՆԱՐԳԻԶ

Շատ երջանկացրիք: Արժանի չեմ և այդ պատճառով ես խոնարհաբար խնդրում եմ այսօրուանից ձեր այցելութիւններից մեք զրկէք: (ուզում է գնալ)

ՔԼԵՍՈՎ

Սպասեցէք, յայտնեցէք ձեր վերջին վճիռը, միտք և պատճառ պէտք է ունենաք թէ ոչ... Եթէ ես հանաք էի անում ձեր աղախնի հետ, որովհետեւ նա ձերն է, դա դեռ իբր ապացոյց բաւական չէ... Երեխայութիւն կը լինի ձեր կողմից:

ՆԱՐԳԻԶ (կանգ է առնում և խիստ)

Այսօրուանից իմ անունը չը յիշէք... Ես այդ պահանջում եմ: Պահանջում եմ, որովհետեւ խղճմտանքով ձեզանից բարձր եմ կանգնած. և ո՞ր մէկն ասեմ, լեզուս չի գոռում: Ի դուր էք կարծում թէ ես մի առանձին ուշադրութիւն դարձրի աղախնիս հետ քաջքշկելուն, որովհետեւ այդ ամենը տղամարդու թուլութիւնն է: Ո՛չ, ցոյց տուէք ձեր մէջ մի որև է արժանաւորութիւն, որի համար ես կարողանայի ձեզ հետ խօսել անգամ ոչ թէ ամուսնանալ...

ՔԼԵՍՈՎ (յուզուած)

Խիստ էք դատում, ամեն բան չի ասուի:

ՆԱՐԳԻԶ

Ճշմարտութիւնը միշտ կասկածի. չը նայելով ես մեծ ուսում չունեմ և տանն եմ կրթուած, բայց ինչպէս տեսնում եմ ուրիշներից պակաս խելք չունեմ և կարծեմ անագնիւ էլ չեմ: Ես շատ անգամ դիտել եմ ձեր վարքը և անագնութիւնից դուրս բան չեմ տեսել, միք սարսափի. ես հարուստ եմ, շատ հարուստ և (դառը ժպտով) չեմ կարծում, որ այս խօսքերը ձեզ վերա մի որև է ազդեցութիւն ունենան... այո՛ չի ունենալ...

ՔԼԵՍՈՎ (զայրացած)

Օ՛րիորդ, չափը անցկացրիք և խնդրում եմ... զգուշացէք, ձեր ծնողները կը կորչեն...

ՆԱՐԳԻԶ (խիստ զայրացած)

Դուք էլ, իմ ծնողներն էլ կախաղանի արժանի էք. եթէ աղջիկ եմ... (սիրտը գնում է և ընկնում է բազկաթոռի մէջ ու բարկութիւնից դողում):

Տ Ե Ս Ի Լ V.

Նրանք և ԹԱԶԱԳՈՒԼ (ներս է գալիս)

ՔԼԵՍՈՎ

(գլխարկը վերցնելով, ՆԱՐԳԻԶԻՆ) Ուրեմն ինչ որ ձեզ հետ պատահի, ես մեղաւոր չեմ (շաապով դուրս է գնում)

ԹԱԶԱԳՈՒԼ. (վախեցած)

Քան, գինացվալէթ, էս ի՞նչ խաբար է. (Նարգիզի վրա ընկնելով). քան, վուրթի, Նարգիզ, ի՞նչ պատահեցաւ. Մանօ, Մանօ, էս ի՞նչ Աստուծ է խռովի գլխիս. (Մաշօն ներս է գալիս) շուտ, ասա դօխտուր բերին...

ՆԱՐԳԻԶ.

Թողէք ինձ, ոչինչ չեմ ուզում:

ԹԱԶԱԳՈՒԼ.

Վճենց թէ չիս ուզում. (Մաշօյին) ի՞նչիս կանգնի, դու- խիքը մայինց դուս բի, աղջիկը դիւի դողում է. (Մաշօն ներս է վազում սենեակը և դուրս է բերում սրուակ ու տալիս է հօտ առնելու). ի՞նչ էր, վուրթի, Նարգիզ ջան:

ՆԱՐԳԻԶ.

Ի՞նչէք ուզում ինձանից, հեռացրէք այդ մարդուն:

ԹԱԶԱԳՈՒԼ.

Ի՞նչ պատահից, չի՞ս ասի. Մաշօ, դուն մայինց ասա:

ՄԱՇՕ.

Նա վունչիչ էլ չիմ տեսի, ի՞նչ ասիմ. սրանք էստի նստած էին ու խօսում էին...

ԹԱԶԱԳՈՒԼ.

Իմքին ասաւ, վուրթի, բեղամաղ ըլիւր:

ՆԱՐԳԻԶ.

Ի՞նչէք ուզում ինձանից, գլուխս խօ չէ՞ք սպանել տայ: Չեմ ուզում ձեր հարստութիւնը, կերթամ աղախին կը կանգնեմ և գոնէ ազատ կ'ապրեմ...

ԹԱԶԱԳՈՒԼ.

Ինչի՞ր իս ասում, վուրթի, անդէր էլ մնայ վուխչ հարստութիւնը, քիզ համար չինք ուզում, քիզ աւել ո՞վ ունինք: Սիրտդ հանգստացրու, գէնացվալէ, թէ կի քիզ չիմ ունենայ էդ մարթու աչքն էլ կարիմ: Հէրն ու մէրը, վուրթի, քիզ համա ին ասլուում, ուրիշ ի՞նչ է մնացի. վի- կաց քիչ անցկենանք, դիւի դողումիս. սիրտդ ինչի՞ իս տրաքեցնում:

ՆԱՐԳԻԶ. (վեր կենալով)

Չեմ կարող, իմ սենեակը կերթամ.

ԹԱԶԱԳՈՒԼ.

Լաւ է, չարդ տանէ դէգէդ... էկիպաժը սպասում է, քիչ անցկենանք ու յիդ գանք. խիստ լաւ օդ է...

ՄԱՇՕ.

Աբա, տանը ի՞նչ պիտիք շինի, գնացէք սէհր անելու:

ԹԱԶԱԳՈՒԼ.

Գնանք, վուրթի (գնում են) դէգէդ մեռնի, ինչի՞ իս սիրտդ տրաքեցնում. գնանք, քիչ սիրտդ յիդ գտաքայ (դուրս են գնում):

Տ Ե Ս Ի Լ VI

ՄԱՇՕ մենակ, յետոյ ՊԵՏՕ

ՄԱՇՕ.

Ղալմաղալը ննգաւ. տեսնինք իմ աղաւկատութիւնը ուփրո կու կտրէ, թէ դրանը: Մէ պիտիմ Պետօին տես- նի, վուր էս գիշիբեթ սրանց գովաթը կրիլ տամ ու Նարգիզին էլ փախցնիլ տամ. տեսնինք, վունց կու խլին Նիկօլումէն, 'եփոր նա կու փսակվի: Էգէբա քուչումը օք- մին տեսնիմ, ղրգիմ Նիկօլուն կանչիլ տամ... (գնում է դէ- պի միջի դուռը):

ՊԵՏՕ.

(նես է գալի, յանկարծ կանգնում է ու շուարուած նա- յումեն իրար — լուրթիւն)

ՄԱՇՕ.

Խաբար

ՊԵՏՕ (առանձին)

Էլ ի՞նչ խաբար, լիզուս փուրս ննգաւ, գլուխս մեռաւ

ՄԱՇՕ.

Օքմին քիզ ղրգից.

ՊԵՏՕ (առանձին)

Վա, էս ի՞նչ է գալի ինձ. 'ես հէնց գիդէի սաղ տունը կու շալկիմ ու կու տանիմ...

ՄԱՇՕ.

Բարով...

ՊԵՏՕ (ապշած նայում է, գլուխը շարժելով)
Շէն գեհացավալէ.

ՄԱՇՕ

Իմքին բան ունէիր.

ՊԵՏՕ (ճակատին խփելով, առանձին)

Վա, ինչ անշնուք ջորու պէս ցից էլայ, տօ՛ւ. (նրան)
բանն աւել ի՞նչ ունիմ, ամա վուր էլ միտս չէ (նայում է)
չէնի ճիրիմէ.

ՄԱՇՕ

Նիկօլը խօ վունչիչ չէ՞ ապսպրի.

ՊԵՏՕ (Սիրտը կտրած)

Ինչի՞ իս սպանում, չէնի ճիրիմէ. ի՞նչ իմ արի քիզ:
Ի՞նչիս հոգում վուր 'ես էլ ապրիմ, բեբադդ մայինց
թրև գամ աշխրբի երեսին...

ՄԱՇՕ (զարմացած)

Էս էլ ի՞նչ խաբար է, 'ես ինչ դավի ունիմ քի մօտ.

ՊԵՏՕ

Դուն ունիս, ինչոր ունիս... բաս ո՞վ ունէ:

«Է՛հ ի՞նչ անինք, վուր դուն էտէնց սիրուն իս,
Սրտի դամդա, իմ աղունակ, ցուցունի.

Ղուրթ է, վարդից, մանուշակից էլ նազիս,
Աստուծ վկայ, Պետօն էլ կի փուտ չունի»:

«Ի՞նչ կուլի, մէ ծիծաղիս իմ էրեսին
Ու համաշա մտիկ չտաս ինձ ջգրած.
Առանց կրակ ի՞նչիս էրում իմ հոգին,
Բրօլ կրծքումդ քաթէ, թէ սիրտ է դրած»:

«Նփ խիթում իս, էս ասլանս չալա իմ,
Զգրվելուն, ի՞նչ անիմ, վուր չիմ սովոր,—
'Նփ ժպտում իս, ձեռաց ուժովանում իմ,
Էն սհաթին դե իմ դառնում 'ես ինչոր»:

«Ի՞նչ հրամայիս ինձ, վուր 'ես չկատարիմ,
Ի՞նչ բան ասիս, վուր էս իմ մաջին դիմնայ...

Յոնցունի ջան, քանի օր պաս կու պահիմ,
Թէ կուտեցնիս պոօշդ, վուր սիրտս հոփնայ:

'Նս մեռնիմ ու դուն ապրի, գեհացվա քիզ
Անիծէ ինձ, թէ չիմ գալի քու միղբը.
Վունց վուր գառը, էնէնց մեռնիմ առջիւղ 'ես,
Օղոնդ քաղցր մտիկ տայ ինձ քու աչքը:

Մէ բան խնդրիմ, արի՛ դուն ինձ մի ջոգի
Գլուխ հաւնող ախպէր տղերանց համբրումը.
Թող երեսս խաչակնքիմ, իմ հոգի,
Ու համբուրիմ քաղցր սրտիդ դաւթումը:

«Իժում... իժում արա, ինչ վուր կամենաս...
Ղաբուլ իմ, վուր դուն համաշա ինձ տանջիս.
Մայինց կօսիմ, սրտիս խանջալ էլ դէմ տաս,
Մատաղ ըլիմ էդ քու կօկօր հոգուն 'ես:

(Կողմը) Սիրեկանը, օհ, ինչ մոգոնելու է
Ագռաւ ըլի, դուն ըլբուլ կու գիղենաս.
Է՛հ, ով Պետօն, ախպէր, ով սիրեկնիւրը.
Վայ ինձ, վայ ինձ, քոռանան իմ աչքիւրը:

(նրան) Հիմի ան սպանէ, ան ապրեցրու, էլ
Աւելի չիմ կարայ, էրկաթ խօ չիմ, տօ,
Աստուծ օրհնած:

ՄԱՇՕ

'Նս չիմ իմանում՝ թէ ինձմէն ի՞նչիս ուզում.

ՊԵՏՕ

Ի՞նչ իմ ուզում... ի՞նչ իմ ուզում... տօ, մէ անիծէ,
խփէ իմքին... մեռնիմ էդ հոգուդ կօլովումը:

ՄԱՇՕ

Թողնինք էտունք, 'ես քիմէն Նիկօլու խաբարը պի-
տիմ հարցնի:

ՊԵՏՕ (հպարտութեամբ)

Ի՞նչը պիտիմ թողնի. ովոր տղամարթէ թող գայ թող-
նիլ տայ, քիզ մտիկ տամ ու ուրիշի՞ վրա խօսիմ: Ուզում
իս ձեռաց էս տունը քարուքանդ անիմ, քու Մազութա-
նին վառկի պէս կէս անիմ, վուղջ աշխարքը շուռ տամ,
օղոնդ դուն կի հրամայ է... 'ես խօցիւրկի մասխարայ չի՞մ
տօ աղբաթիխէր, չի՞ս տեսնում ինչի՞ր իմ անում, ինչի՞
նման իմ: Տաք տաք շամփրներով վուր դաղին, ես տուած
կալրի մէջ վուր նստեցնին, լիւթութեամբումս վուր տաք
տաք արծիճ ածին—թերթերունքս չիմ ժաժ տայ, հաւա-
արս վկայ, օղոնդ քիզ կի դուր գայ. ախար, քիչ էլ դուն
պիտիս խղճայ թէ չէ, տօ, դրախտի հրիշտակ:

ՄԱՇՕ

Էդ քու միտքը 'ես վաղուց գիդիմ, ամա էս ասա,
ինչի՞դ իմ հարկավուր: Դուն ջահէլ, գլուխդ սիրող, դա-
դող, դարդիմանդ տղայ իս—'ես կի մէ վուրբ աղջիկ իմ,
ուրիշի ձեռին մտիկ տուող, դուլուղչի, իմացար, դուլուղ
չի իմ...

ՊԵՏՕ (սիրտը կոտրած)

Օ՜հ, գենացվալէ էդ լիզուրիդ դամարներումը... (խօսե-
լուն նմանացնելով) տա, տա, տա, տա... տա, տա, տա,
տա, տա, ո՛ւհ շէնի ճիւղիմէ, շէնի. դուլուղչի կօսէ... ի-
ժում 'ես վո՛ւր դուբերնատօրն իմ, սէրը դուլուղչի կու
հարցնէ:

ՄԱՇՕ (հանդարտ)

'ես ի՞նչ սիրելու իմ:

ՊԵՏՕ

Բաս չէ ու քու Տրիփոն Բաղդանիչն է սիրելու. դուն
պարնի ու աղջիկ պարնի վրա խելօք իս, նրանց վրա քա-
ղաքավարի ու սիրուն իս. (զգուելով) քաղցր լիզու էլ վուր
ունիս, պլօշնի՛րը... բաս ուրիշ ումը պիտիմ սիրի: Թէ
կարողութին կօսիս, թէ էս մաջէս սաղ է, համաշա հա-
լալ թիքայ կուտեցնէ... ձեռիս գուլի վրա կու նստեց-

նիմ ու դիփ էնէնց ման կօծիմ. թող գան ու պարծենան
ովոր հարուստ է: Աբա նրանք չը գողնան, թէ քաղցած
չը մեռնին, չունքի Աստուծ նրանցը շուք ու հունար չէ
տվի հալալ թիքայ ճարելու: 'ես կի մէ ձեռս ժաժ տամ,
քրտինքս սրբիմ, փուղը ծղարօյի պէս գուքայ. իժում
ինչ քաղցր թիքայ, ի՞նչ հալալ թիքայ... վա՛, էն կի՛նք է,
թիքայ ըլիս ուտում ու հիղը վախենում ըլիս, վուր ոչով
չը ճանչնայ ու բերնեմէս չը խլէ...

ՄԱՇՕ (ընդմիջելով)

Ովոր վուր գալիս է (պատուհանից նայելով) շուղաբը
իժում կու տամ (գնում է)

ՊԵՏՕ (առաջը կտրելով)

Էս է էլի, սպանեցի՛ր էլի. սրտումս դա՛նակ
խփիմ էլի:

ՄԱՇՕ (շտապելով)

Օղոնդ Նիկօլու ու Նարգիզի բանը լաւ պրծնի, ի-
ժում 'ես քիզմէն սավայի ոչովին չիմ ուզի, 'ես քիզ
ուփրօ իմ սիրում... Իրիգնապահը անպատճառ ինձ տիս
(վազում է դէպի ձախ-սենեակը):

ՊԵՏՕ (մենակ, յուզուած)

Կենդանացմայ, լուսացմա... վա՛, էս ի՞նչ տեսայ...
(նայում է այն դրանը ուր մտաւ Մաշօն. ձախ ձեռքը բաց ու-
նի, իսկ աջը կրծքի վրա դրած—զգացմունքով) ո՛ւհ, շէնի կի
ճիւղիմէ, շէնի. մակարօնի պէս վուր կոտրտվում իս մէջ-
քումդ...

Տ Ե Ս Ի Լ VII.

Նոյնը և ՄԱԶՈՒԹԵԱՆԸ

ՄԱԶՈՒԹԵԱՆ

(ներս է գալի և հագում է. Պետօն չի նայում. Մազու-
թեանը ուսին ձեռք է խփում, իսկ Պետօն ձախ ձեռքը յետ է աա-
նում և բռնում է Մազութեանին) էս վո՛ւր սատանին իս
մտիկ տալի:

ՊԵՏՕ

(Յանկարծ յետ է դռնում և գլխարկը վերցնելով գլուխ է
տալիս, բարի աջողում, աղա.

ՄԱԶՈՒԹԵԱՆ.

Ի՞նչ խաբար է:

ՊԵՏՕ

Ստեփանն ու Նիկոլը ղրգեցին, հետաքրքիր կուլի, կօսէ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Վա՛, էս քանի ջէր իմ առի, գան էլի հիմի էլ նրանցըն իմ մնում:

ՊԵՏՕ (կողմը)

Ա՛յ, քաղցած գէլն ուտէ քիզ, գէլը (նրան) բաս գնամ ասիմ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Գնա՛. աբա՛. վինձլօ դուն էլ նրանց պէս լօթութենումը փշացնիս դուքանդ. էդքան լօթութիւթին կուլի, ի՞նչ Աստուծ է խռովի:

ՊԵՏՕ

Թուրքն ասիլ է՝ «դունեա բէշ գիւն դըր, բէշի դա դարայ»: *) Սկուչնութին է, աղա ջան, բաս ի՞նչ անինք:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ինչոր քիզ լաւութին իմ արի, քու հօր խաթրի չուն է էլի. հախ Աստուծ դուն էլ կարուկ տղայ իս, վուր լօթութին չը գիդենաս: Էդ դուքանը խօբաց արի, գլխովէս ուղ ըլի, Աստուծ ամենքիդ բարի տայ:

ՊԵՏՕ (կողմը)

Ի՞նչ կու ուղ ըլի՞մ, ինչկլի քելէխդ չիմ ուտի. մէ իմ պառաւին էստի ղրգիմ. (նրան) լաւութենի համա շնորհակալ իմ (գնալով—դրան մէջ) իշի պէս բանեցնում էր ու իմ ամագը ինձ ևեթ մունաթ է անում. ա՛յ, գենացվալէ էդ դարդիմանդ հոգումդ (դուրս է գնում):

ՄԱԶՈՒԹԵԱՆ (կարծելով թէ Պետոն այնտեղէ)

Հիմի նրանք ճամբին ուստ դուքան, մէ թահար դաբուլ անիլ տու, առանց դավիդարաբի դիփ ինձ վրա հաստատին ու երկու հարուր թուման կու բախշիմ, թէ չէ դիփ մէտի բաթմիշ կուլին, իմացա՞ր. քիզ էլ էլի ինձ մօդ

*) Կենքը հինգ օր է հինգնէլ սե

կու բերիմ, կարուկ տղայիս... (յես է նայում, տեսնում է ոչոք չը կայ) ա՛յ, ջահրու ջահանդամը գնաք, ը՛հը. ո՞վ կաք տանը, դիփ կոտորվուեցա՞ք:

ՄԱՇՕ. (Ներս գալով)

Ի՞նչիք կամենում:

ՄԱԶՈՒԹԵԱՆ. (կոպիտ)

Իմ տանը էս ի՞նչ աչքախուփ իք խաղում:

ՄԱՇՕ.

Ո՞վ, պարոն:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Դուն ու էդ տղէն, ո՞վ.

ՄԱՇՕ.

Նա ձիդ մօտ էկաւ:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Էտունք չըլի. 'ես ուրիշի համա ոչովին հաց չիմ ուտեցնի. ինչոր իմ տանն է, իմը պիտի ըլի...

Ո՞ւր ին:

ՄԱՇՕ.

Սէ՛ր անելու գնացին (դուրս է գնում միջի դռնից)

ՄԱԶՈՒԹԵԱՆ (մենակ)

Էսդգամ էլ սէ՛ր անիլը ի՞նչ Աստու պատիժէ. սպանեցին էն անդէր ձիաներուն: Զուրս քսան թուման փուղ իմտուի, հանաք բան կի չէ. իժում էդ կուչերն էլ մէ հարբած իմքին է, հէնց գիտէնաս սկաչկա է դուս տանում, էնէնց է վազեցնում: Գիժէ, դուս պիտիմ անի, ուտելով տրաքեցրուց ձիաներուն, էսքան կերակուր ի՞նչ կօնին. ի՞նչ ապրանք իմ կրիլ տալի, էրկու կնիկարմատ պիտին թրևի, սրտին 'եղ է գալի՝ գժվումին: Մէ օր օղուշաղիս ուրուքմին ջարդ ու փշուր կօնին... իմանում ի՞նչ թէ չէ, թէ իմքին փիքը իս անում էն տղի վրա, սրտեմէդ հանէ. ինչկլի կենդանիմ, էս տանմէն ոչով չիս գնայ. 'ես ձիդ ինչոր մալում իմ անում, (կողմը) անտուն անտէրին քարտուն թումնով առիլ իմ, աղջիկ իմ մինձացրի... Գիժ իմ...

Տ Ե Ս Ի Լ VIII

Նոյնը, ՄԱՇՕ, ՍՏԵՓԱՆ և ՆԻԿՕԼ.

ՄԱՇՕ (ներս գալով)

Ստեփանը ու Նիկոլը էկան

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Թող տուն դան, գուն կի հիռացի.

ՄԱՇՕ

(Մէջտեղի դուռը բաց է անում, հրաւիրում է և ինքը դուրս է գնում) Համեցէք.

ՄԱԶՈՒԹԵԱՆ.

(Ոտքի կանգնելով, Նիկոլուն) Դուք ի՞նչ հաթաթէքիք ապսպրում. քու գլուխը դուն բաթմիշ անիս. ու ուրիշի՞մէն ըլիս անբաւակոյն, պարտ ըլիս ու քիքս ըլլի՞ս գալի: Դուն չիս գիտի՞, վուր կուհանգցնիմ, հուղի հիդ կու հաւարիմ. էն օրուայ բանը ասիլ իմ գուբերնատօրին, վուր տուն ննգար ինձ մօդ. թէ գանգատէիր արի, ցիմբիր կու կորցնէի, կօսէ...

ՍՏԵՓԱՆ (ծոմովելով)

Տրիփոն Բաղդանիչ, գէթաղված, դուք էդ չիք լայիդ անի, լուսավուրած մարթիք. էրէխին պիտիք բախշի, ի՞նչ անինք, սխալ ննգաւ, բէհեսաբ արաւ, վո՞ւնց կանայնա ձիդ բեղամաղ անէ:

ՆԻԿՕԼ (կողմը)

Տէր Աստուած, մի կորցնի, համբերութեանս թելը կտրվում է...

ՄԱԶՈՒԹԵԱՆ

'Ես փիս մարթ չիմ...

ՍՏԵՓԱՆ.

Վայմէ, վայմէ, գանա չիմ գիտի՞, վուր դուք Աստուածասէր մարթիք. միւր մաղբուն անիլը դուք չիք ուզի, օղլուշաղներուս չիք վուրբացնի... բախշեցէք...

ՄԱԶՈՒԹԵԱՆ.

'Ես ուզում իմ բանը տանավարի քուլթան ունինք, մէտի հէսաբ անինք: Դիփ հաստատած դօկումենտները ու-

նիմ, ի հարկէ, հիմի կու տեսնիք. ձիւր փային պարտքի վրա 'իւրիք փայն էլ չի ծածկի, ամա ի՞նչ անիմ. էս հաստատեցէք. իմ հոգու համա մէ երկու հարուր թուման էլ կու բախշիմ պիւրիքիթ. սրա վրա էլ աւելի վարցք գո՞ղիք. վուր տանիմ դադաստանը օղլուշաղով կու կորչիք: Դուք խօ գիղիք ի՞նչ փայ էլ ունէիք, ինչ ածէր. էլի գին դնիլ տանք, տեսնինք իմ պարտքի վրա 'երիք մասը կու ծածկէ՞ թէ չէ. ուրիշ ի՞նչ անիմ...

ՍՏԵՓԱՆ (շնորհակալութիւն է անում)

Աստուած էտէնց ազնիւ կինք տայ օղլուշաղիդ, պարքը նէտավի գիփ ի՞նչքան կուլի:

ՄԱԶՈՒԹԵԱՆ.

Էս սհաթիս. 'ես դիփ մէտի դուս գրած ունիմ ու դօկումենտներն էլ էստի է, էստումը խօ սուտ չի՞ կարելի. վեքսիլնիւր է ու բարաթնիւր, թէ 'եփ ի՞նչ իք տարի. (սեղանի վրա դրուած ունի գրած հաշիւ, կարդում է և հաշուում է համարիչի վրա, որը ձեռքին ունի բռնած) քիմէն կցինք, Ստեփան, մէկ տարիլ իս հինգ հարուր թուման...

ՍՏԵՓԱՆ

Հրամանքիդ, ճշմարիտ է

Տ Ե Ս Ի Լ IX.

Նոյնը ՄԱՇՕ, յետոյ ՍԻՔԻՐԱԿԱՆ.

ՄԱՇՕ, (Ներս գնալով)

Մէ ինչոր մարթ է

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ի՞նչ մարթ է. ասա պարտալ չիմ.

ՄԱՇՕ.

Ասի ամա էլի գալիս է

ՄԱԶՈՒԹԵԱՆ (կողիտ)

Հիռացի, ասի... (Մաշօն դուրս է գնում) խառնից էն անիծածը, զլխեմէն կցինք... (հէսաբ է անում, Սիքիրականը ներս է գալիս. Նիկոլուն) քու հօր թամասուրքը դուն չը

թագաացրիր. Էնչախը Եօվանու պարտքն էր հազար հինգ հարուր թուման, ութ տարուայ շահն էլ վրէն գանք, կօնէ երկու հարուր թուման... (տեսնելով Սիրիբականին) դուն ո՞վ իս, վուր առանց հարցնելու տունիս գալի. աղքատին 'ես բազումս իմ տեսի, չէ թէ տանը:

ՍՏԵՓԱՆ

Գնա, մամի ջան, ի՞նչիս տուն ննգնում:

ՍԻՐԻԲԱԿԱՆ (առաջ գալով)

'ես ողորմութենի համա չիմ էկի...ամա ձերը պարտ էի, եկայ պարտքը տալու...

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Հիմի պարապ չիմ, իժում արի թէ խնդրելու բան ունիս:

ՍԻՐԻԲԱԿԱՆ

'ես կեհամ, ամա դուք էլ էգնէս կուլիք. բաս արի, էլի էստի մանք:

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Վա, բջիբը կոտորվիլին, թէ ի՞նչ խաբար է:

ՍԻՐԻԲԱԿԱՆ

'եփոր ամեն բան կարողիք, չունքի հարուստ մարթիք, մարթուն հիշտ չը պիտիք զիմիշ անի: Դուք կանաք հրամայի, վուր բջիբը ինձ թրեւելով դուս տանին, դուք կանաք պօլիցիա կանչիլ տա ու բռնիլ տաք, դուք կանաք էստիէվէտ խիզիք, ո՞վ ինչ կու իմանայ, մէ անդէր մարթիմ. ամա էս մարթութին չի ըլի, մարթութինը դալը փուղ կարիլն է ու իժում ուրիշին միղ գնիլը...

ՄԱՋՈՒԹԵԱՆ (շփոթուած կողմը)

Կօսիս մէ տիղ տեսիլ իմ էս մարթուն. . (Ստեփանին) Տօ, մէ բջերուն կանչէ, է:

ՍՏԵՓԱՆ (վազելով)

Էս սհաթիս:

ՍԻՐԻԲԱԿԱՆ (կոնից բռնելով)

Մուլափ, տօ ողորմելի հաւ. քանա ամեն հրամանը պիտի կատարվի. (կանգնում է բեմի մէջ տեղը և նայում է

չորս կողմը) Սիրուն տուն իբ ունեցի. 'ես ինքս դուս կեհէի, ամա սիրտս վուր չէ թողնում. օղոնց միք դուս թրեի, էլի 'ես կեհամ...

ՄԱՋՈՒԹԵԱՆ (կողմը)

Ինչ սարսափելի ձէն ունէ...

ՍԻՐԻԲԱԿԱՆ

Մենակ հիմիէ միտս գալի իմ ջահելութինը, հիմի իմ իմանում կեանքի քաղցրութինը: Մէ ժամանակ էս էլ ունէի էս թահար տնիր, սիրում էի քէֆ ու ժամանակ անցկացնիլ. պատուական մարթ էլ էին կանչում, աշխարքն էլ էր ճանչնում, հրաման էլ էի տալի... (ձայնը բարձրացնելով) առջիւս բջիբը դողում էին... մէկ վուր ձէն կուտէի եարսուն պրիկաշիկ ու բիջ էին դուս վազում. վուր կու կանչէի՝ ա՛յ, աղա Տիգրան...

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Եօվանէ. (համբիշը ընկնում է ձեռից, երկու ձեռքով ընդունում է մազերը. Ստեփանը ահից կուչ է գալիս):

ՆԻԿՕԼ (ձգալով)

Հայր (ապշած մնում է, իսկ Սիրիբականը դառը ծիծաղում է):

Պ ա տ կ ն ը

Վարագոյրը իջնում է կամաց:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ IV

Բեմը ներկայացնում է երկրորդ գործողութեան սենեակը—Նի-
կոլոի տանը

Տ Ե Ս Ի Լ 1

ՔԱԼԻ (մենակ տան մէջը փափսում է)
Էրազմիւրը բեղրեցրին. էսէնց էլ չի ըլի, գեշերը մէկ
է ու հազար թահար երազը հիղը. ինչի՞ր չէի տեսնում
խանդիսխան, ամա (ձեռքերը բարձրացնելով գէպի երկինք) գու-
հանամք զքի Աստուծ. համաշա ումիկ ունէի, վուր հալալ
մարթուն գուն չիս կորցնի. (նստում է) էս առջի գամը մէ
արմնելու էրազ տեսայ. հէնց միւր տան գլխին մէ խիստ
գոռուցք էլաւ ու սիւ ամբիրը աշխարքը մթնեցրին, տան
օճորքը բաց էլաւ ու մինձ սելաւ վրա էրիդ ու տունս
լքցուեցաւ... իմ Նիկոլն ու Ստեփանը ինչկու. բողազը
լիդ էին տալի ջրումը ու օտկող ոչով չը կէր. 'ես ու իմ
Վարօն էլ միթո՞մ ջրի երեսին տվտվող տախթի վրա նըս-
տած էինք ու դառը լաց էինք ըլում: Մէ կունեմէն էլ
միթո՞մ տեսնում էինք վուր սաղ քաղըումը շատ սիրուն
օր էր, էնէնց վուր քուչեքումը թող էր վիկենում. մինք
օտկող ոչով չունէինք, էս վուխտը մէ պստի նաւ էրեաց,
մէջը նստած էր մէ սիպտայ միրքով մարթ (վեր է կենում
ու երեսը խաչ է հանում) ու միւր կուրն էր գալի նաւով.
հէնց վուր մօտկացաւ թէ չէ առջի գամը Նիկոլուն ու
Ստեփանին նստեցրուց նաւը, իժում ինձ ու Վարօին.
տան վրա խաչակնքից ու միթո՞մ մէբաշ ջուրը կարուե-
ցաւ... էս վուխտը զարթեցայ, վիկացայ ու իմ սուր Գէ-

վուրքի համա մում վառեցի. ջէր վուրգեղերանցս վունչիչ
չիմ ասի, ամա տիս վունց դրուստ կատարվեցաւ... Մեռ-
նիմ քու անումին ու գորութէնին իմ զինաւուր սուր Գէ-
վուրք, (ձեռքերը վեր բարձրացնելով, երեսը խաչ է հանում.
մտնում է Վարօն ձեռքին թղթի մէջ փաթաթած իրերով):

Տ Ե Ս Ի Լ II

Նոյնը և ՎԱՐՕՆ

ՎԱՐՕ (ներս գալով միջի դռնից)

Դէգի ջան, մնամ դուն աղօթքի աւել վունչիչ չիս
շինում. մտքումը խօ չոնիս կուս դառնաս (գնած իրերը
դարսում է և վերադուն վերցնում):

ՔԱԼԻ

Ի՞նչ անկարգ խօսիլ գիղիս, վուրթի: Գանայ կու-
սութին վուր չըլի, միթո՞մ մինք պարտական չի՞նք Աստ-
ծուն փառաբանութին տալու. փուխեհամ նրա անումին,
(երեսը խաչ է հանում):

ՎԱՐՕ

Վոնց պարտական չինք, դէգի ջան. մենակ մինք
կի չէ, վուղջ քաղաքն է միգ համա աղօթք անում ու միգ
օրհնում: Վուր գիղենաս, թէ ի՞նչ խաբար է. մամէն վոնց
է, դէգի ջան, տուն գնամ տեսնիմ:

ՔԱԼԻ

Չէ, վուրթի, մէ քիչ մուլափ, քնած է. ինքը լաւ է,
ամա մէ քիչ ծնգնիրը ցաւեցնում է:

ՎԱՐՕ

(Կամաց մօտենում է դռանը և ձեղքից նայում է). Մամէս,
իմ սիրած մամէս, վունց հանդարտ է քնած իր օճորքի տակը.
(յետ է դառնում և լաց է լիում):

ՔԱԼԻ

Օհ, վուրթի, թէ գիղենաս սրտիս վունց մէբաշ էլ-
դա գիբաւ, դուն վուր հօրդ դէմ էկար, (լաց է լինում):

ՎԱՐՕ (արտասուած աչքերով)

Օհ, սուրբ Աստուծածին... քսան ու չուրս տարեկան աղջիկ իմ ու էսօր, մենակ հէնց էսօր առջի գամը «հօր» անուամբ իմ տալի ու սրտումս առջի գամը հօր սէրը զարթնում, օրհնելի քու դադաստանը: Աստուծ 'եարաբ ի՞նչ միղքի համա զրկից էսէնց միգ: Ախար էս ազնիւ, հրիշտակի պէս մարթը էսէնց ի՞նչ միղանչից Քիզ, վուր իր ջէնէլութիւնը ու տղամարթութիւնը անպատմելի տանջանքումը անկացրուց: ի՞նչ միղանչից սրա ողորմելի օջախը, վուր քսան ու չուրս տարի դառն արտասուենքով անցկացրուց ու մէ պայծառ օր չը տեսաւ: Օհ, ողորմելի մամա, ժհ 'երգնուց դադաստան:

ՔԱԼԻ (արտասուքով)

Մուղայիթ կաց, վուրթի, Ասածու հակառակ բան չասիս...

ՎԱՐՕ (արտասուքով)

Օհ, դէղի ջան... (աչքերը սրբում է):

Տ Ե Ս Ի Լ III.

Նրանք, ՆԻԿՕԼԸ և ՍՏԵՓԱՆԸ (ներս են գալի)

ՆԻԿՕԼ (վախեցած)

Ի՞նչ էր, դէղի ջան, ի՞նչ պատահեց:

ՔԱԼԻՆ (աչքեր սրբելով)

Վունչինչ վուրթի:

ՆԻԿՕԼ

Հայրս ի՞նչպէս է:

ՔԱԼԻ

Լաւ է, վուրթի, բնած է:

ՍՏԵՓԱՆ (կնոջը)

Հիմի չի՞ս ասի ինչ խաբար է, հը...

ՎԱՐՕ (աչքերը սրբելով)

Մազութին, վունչիչ:

ՍՏԵՓԱՆ

Բաս ի՞նչ դուրուկ իք սարքի, ի՞նչիք լաց բլում:

ՔԱԼԻ

Միր անցկացրած օրերը մաներուս էկաւ...

ՍՏԵՓԱՆ (կնոջ)

Մամէն վոնցէ...

ՎԱՐՕ (ժպտալով)

Բա ուճիրս, խիստ լաւէ, վենացվալ է նրան:

ՍՏԵՓԱՆ (անբաւական շուռ էգալիս)

Սիրտս տրաքեցրիք, ձիր քօքն էլ կտրվի, կնիկարմարտը... (պուխը շարժելով ու ծաղրելով) ուհ, ձիր քաղցր լիգուն մեռնիմ:

ՔԱԼԻ (Նիկօլուն)

Վուրթի, հօրդ վոնց ճանչըցար, դուն խօ վունչիչ չէիր գիդի:

ՆԻԿՕԼ

Ի՞նչ գիտէի, դէղիջան, բայց մարդս Ասածեմէն տուած էնպիսի շնորհք ունի, որ գլխին գալու բանը նրա սիրտը վաղօրօք իմանում է, հայրս որ Մազութեանի մօտ ներս մտաւ իր հին շինելով, սիրտս էն սէթին զողաց, կարծես իմացաւ, որ այս մարդը ինձ համար մի ինչոր պ'տք է ա-նէ, թէն քսան ու չորս տարի հօրս չէի տէսել. կամ ի՞նչ կարող էի մտածել նրա տեսնելը, բանի որ հաւատացած էի թէ նա էլ չը կայ աշխարքի երեսին, բայց մէ երկու նըշանով խօսք որ ասաց, արի տես որ հոգին իրենը ճանաչեց:

ՍՏԵՓԱՆ

Տօ, դուք իմն ասիք... կանգնած իմ Մազութեանի առջիւր վունցոր միղավուրը Քրիստոսի առաջ ու զողում իմ: Մտքումս ասում իմ՝ ա՛յ, հիմի կու բերին բուխանիւրը ու 'ես ու իմ Նիկօլը պաղրուչկով մէտէխի կուրը սէհր անելու կեհանք: Մէբաշ իմ անիւրը տուն է գալի. մտիկ տուի սիրտս դնդղնգաց, մէ ուրիշ թահար էրեաց: Իժում, 'եփոր համարձակ խօսիլ կցից Տրիփոն Բաղդանիչի հիդ, էնչախը կի ահը ինձ տարաւ ու սաղ ջանս կուչ էկաւ. վա՛հ,

արի ու մի վախենայ. Տրիփոն Բաղդանիչին, էս աշխարհի տիրուջը, մարթ դայիմ խօսք անէ, էն էլ իրա տանը... դիփ միանայ փուլ եկայ...

Տ Ե Ս Ի Լ VI.

Նրանք և ՊԵՏՕ

ՊԵՏՕ (Ներս է գալի երգելով)

«Սաղվարէլօ մշվիդօբիթ, շօրս միվդիվար, մշվիդօբիթ, աղարա դամշթէնիա, շօրիս զգա դամիւօցէ, կիդէվ գնախօ մշվիդօբիթ»... Վինց մօվիդա գառամարջոս:

ՍՏԵՓԱՆ

Գառամարջոս, գառամարջոս:

ՊԵՏՕ (Ստեփանին)

Գնա, տօ աղքատ դադօ, քէցիւն:

ՍՏԵՓԱՆ

Հը, հը, վիւր թողիւր. խիստ բէգամաղ կուլէինք քու արիւը, վուր էսօր էլ չէիր հարբի, այ.

ՊԵՏՕ

Թէ հարբած չէ ուշիար վոճնց տուն գուքամ քի մօդ, խօ սիրտս նիդացաւ: (Շնքից լոնկելով) այ, քու փաթրէթը, ինչ մարթ իս գուլ (թափտալով):

ՍՏԵՓԱՆ

Լաւ է մէ, շնքիս դամարնիրը մի կտրտի. տօ, անիւծած էրկաթի ձեռնիր ունիւ:

ՊԵՏՕ

Բաս չէ ու Ստեփանը կուլիմ, գդալ չիս կանացի վիքաշի վուր թիքէդ բերանը դնիս, էգ դիփ քու միդքի պատիժն է, հա:

ՍՏԵՓԱՆ

Լաւ է, լաւ, դուն էլ մի պարծենայ, վունց էլ թէ դունիս:

ՊԵՏՕ

Ստեփան Մակարիչ, վոճնց էր, օրթաճալումը ինձ դէ նիկօլուն վուր ծեծում էին ու դուն լաց էիր ըլում:

ՍՏԵՓԱՆ

Վա, էնդդա կէտին աղբաթիւէր էշ կու սպանէր, բաս լաց չէի էլի, վախեցայ...

ՊԵՏՕ

Էհ, ինչիք հրամայում. վախեցար կի չէ, հանաք էիր անում, չէ, նիկօլ ջան.

ՆԻԿՕԼ

Հա, էնէլ հանաք էր, ջուրը որ ընկաւ մինչև բողաղը. (ծիծաղում է)

ՍՏԵՓԱՆ

Հանաք կի չէի անում, աչքերս խառնուեցաւ՝ էն նիդ կաղմնջի վրայ անցկենալ կոճի, հինգ տախտկի աւել չէ դարսած. իժում մէջ տիղը վուր հասայ, էս անիւծաճը (ցոյց տալով Պետօի վրա) տախտկնիրը ժաժ էրիտ, արի ու մի դէվէր ննգնի. (ծիծաղում են)

ՊԵՏՕ (վզիցը բռնելով)

Լաւ է, լաւ, շատ մի խօսի. շուտ դրստվի հիդս,

ՍՏԵՓԱՆ (կուչ էկած)

Հը, խիլքիդ վրայ վոճնցիս, վերի թաղումը խօ չի՞ն նիդացնում (ցոյց տալով ճակատի վրայ).

ՊԵՏՕ

Դրստվի ասում իմ, թէ չէ հոգիդ հանեցի. մէտեխը գի՞ղիս:

ՍՏԵՓԱՆ (կամենում է ձեռքը հեռացնել)

Ի՞նչնէ գժվեցրի, տօ, խիլքի արի. ինչո՞ւմը պիտիմ դրստվի, գժվիլիւ:

ՊԵՏՕ (ձեռքը վերցնելով)

Քու սիրունութէնեմէն գժվեցայ, բա, (երգում է) «էս արիս չէմի վէզրեբա, գուլի սձուխս...» (ծոցից թղթեր հանելով) էս ի՞նչէ, տօ, քոռացած, մէ էստի մտիկ տու է:

ՆԻԿՕԼ (վերկենալով)

Ի՞նչէ, Պետօ ջան, ի՞նչէ մի ցոյց տուր է.

ՊԵՏՕ

Զի ըլի.

ՄՏԵՓԱՆ

Շէն գեհացվալէ, մէ տեսնիմ. էդ ի՞նչ թղթիւր է.

ՊԵՏՕ

Դէնը՝ թէ չէ եկաւ զլիսումդ (թղթերը բաց անելով) հա-
զար հինգ հարուր թուման մէկ, 'երիք հարուր թուման
— երկու, հինգ հարուր թուման — 'երեք, ութ հարուր թու-
ման — չուրս... խաղինա է էլի:

ՆԱԿՕԼ

Պետօ ջան, էդ ի՞նչ ես արել, ով տուեց քեզ այդ թղ-
թերը. եթէ զողացել ես, այդ տղամարդու թիւն չէ.

ՊԵՏՕ (նեղանալով)

Դուն էսօր իս ճանչնում ինձ, թէ էրեզ, 'ես ու նա-
մարդ բան բռնիմ: Չէ, ինձ վրայ խղճմտանքով ոչով էլ
չիք. արի, հէսաք արա, էս է ձեր պարտքը:

ՆԻԿՕԼ

Այդ ի՞նչ է, Մազուլեանի վէքսիլներն է.

ՊԵՏՕ

Հա, Աստուծ էրիտ, զնա ու գանդատ անէ.
զլուխս վուր կտրիս չիմ տայ, կրակումը պիտիմ էրի.

ՆԻԿՕԼ

Չէ, չարդ տանեմ, պէտք է եզ տանք. դա աննա-
խուսութիւն է:

ՄՏԵՓԱՆ (զայրոյթով)

Ի՞նչը պիտինք յիդ տայ, ի՞նչիս ասում. էստի տուէք.

ՆԻԿՕԼ

Հիմա դրանք էլ հարկաւոր են. հայրս էդ վէքսիլներու
վրա մեզ համար աւելի լաւ է. յետոյ ի՞նչպէս ճարեցիր:

ՊԵՏՕ

Նարզիզը էրիտ վուր քիզ տամ:

ՆԻԿՕԼ

Իսկ Նարզիզին ո՞վ տուեց, գողացաւ

ՊԵՏՕ

Չիէն վուր Մազուլեանեմէն դուս եկաւ, 'ես քու-
չումը մնում էի. դուք իս էլի էնզի մնացիք: 'Եփօր եկայ

դուքանը, Մաշօն էդնէս հասաւ ու անզը ճումս փսփսաց,
Նարզիզը ասաւ թէ, էս սահաթիս էստի արի, կօսէ. ձիւն
բերի տուն ու 'ես զնացի, Մտիկ տամ, միւր Տրիփօն,
Բաղդանիչի սիրտը նիղացիլ է ու զօխտուրնիւրը յիզին
բերում, կինաղամ դամբլայ էր ննգի: 'Ես էնէնց գնացի,
միթոմ վունչիչ չիմ գիզի ու սուտ լաց էլա էլ: Նարզիզը
դուս կանչից էստի օթախը ու ասաւ՝ էն խառնակութե-
նումը Նիկօլու վէքսիլները գիփ մէտի ստօլի վրայ էր մնա-
ցի, կօսէ, ու ինձ էրիտ, տար իրան տու, հիմի էլ չը վա-
խենան, կօսէ:

ՆԻԿՕԼ

Ա՛խ, " Աստուծ միթէ աշխարքումը Նարզիզիցն
էլ բարի ու սիրող աղջիկ կը լինի. ափսոս, որ յաւիտե-
նական հեռացանք իրարից:

ՊԵՏՕ

Մէ մուլափ տուէք, ինչ բանիւր յիդ ասիմ է (Բալիին)
ձիւն վննց է:

ՔԱԼԻ

Լաւ է, վուրթի. քնած է:

ՊԵՏՕ

Հաջադ չէ, կու զարթեցնիմ, խիստ հարկաւոր բան
ունիմ. շուրիւրը բերին:

ՔԱԼԻ

Բերին:

ՊԵՏՕ

Բաւ տուն կեհամ, Տրիփօն Բաղդանիչիմէն մօցիքուլ
իմ զրգսծ, ինքն էլ հիմիսկեվէթ գուքայ, պատրաստ կա-
ցէք. (Ներս է գնում Սիւրիւրականի սենեակը):

ՔԱԼԻ

Գոհանամ զքի Աստուծ, էս օրին էլ արժանացայ,
վուր Մազուլեանը իրա վուտով համէցէք է անում իմ
տուն:

ՄՏԵՓԱՆ

Դէզի ջան, դուն պիտի տեսիլ էիր, թէ ինչ խաբար

էր նրա տանը. մէքաշ էս մարթը շուռննդաւ, տուն թրեկ-
ցինք սպախէն. հայ ջուր, հայ դմէսի, հայ կապլիք, իժոււմ
դօխտուրնիր բերին ու մինք էլ դուս եկանք:

ՎԱՐՕ

Դուն էն ասիս, վուր միր Պետօն վեքսիւները դիմ
ճանգիլ է:

ՍՏԵՓԱՆ

Բանն էլ էտէ է. սաղ դավիդարաբէն էդ թղթերուն
է: Հիմի համ վունչիչ պարտ չինք, համ մաղաղիէրու կէսը
միրն է ու համէլ ինչ որ հօրէսիդէնը խաբի, էնչախը
պարծենայ:

ՔԱԼԻ

Դուք ի՞նչ շինեցիր, ռւր էիք:

ՍՏԵՓԱՆ

Տօ, էլ ի՞նչ իս ուզում. միր սրտի դարդը էս թղթերը
չէ. էս էլ խօ միր ձեռին է, սրա վրա բաղդաւուր օր միդ-
ամայ կու լուսանայ: Դէդի ջան, ինչոր էս քսանուշուրս
տարումը տանջուեցար ու արտօնեք թափեցիր, հիմի
գլուխդ պիտի ջահէլացնիս ու ուրախանաս: Վան, խալիս,
քրիստոնէք, իմանումիք ի՞նչ խաբար է. վա՛, վուր չիք ի-
մանում. մէ գրօշ պարտ չինք չէ, չէ, իմացա՛ք. հալա մի-
լիօնի կէսն էլ միրն է (գլխարկը վերցնելով) Տէր Ամենակալ
Աստուած Աբրահամու, Իսակայ և Յակոբայ. (Բոլորը ե-
րեսները խաչեն հանում, բացի Նիկօլը) ովոր վուր գալիս է, կուլի
նա՛ է:

Տ Ե Ս Ի Լ V.

Նրանք և ՄԱԶՈՒԹԵԱՆ, իսկոյն ՊԵՏՕ և ՍԻՖԻՐԱԿԱՆ.

ՄԱԶՈՒԹԵԱՆ. (ներս գալով)

Բարի աջողում.

ՍՏԵՓԱՆ.

Աստծու բարին.

ՆԻԿՕԼ (չարանալով Ստեփանի վրայ)

Ա՛խ, դու...

ՄԱԶՈՒԹԵԱՆ

(կանգնած է դրան մօտ).

Մամէն ռւր է.

ՍԻՖԻՐԱԿԱՆ

(Ներս է գալի. հաղին ունի՝ սև մահուդէ կարայ և անտրա-
վարտիկ, սև ատլասէ արխալուխ, մուրուքը և մագերը կարճա-
ցրած է, ունի ձեռնափայտ՝ փոքր ինչ կաղում է, դուրս գալիս
խօսում է Պետօի հետ, որը հետեւում է) իմ բանը, վուրթի,
դադաստանն է... (յանկարձ կանգ է առնում ցոյց տալով Մա-
զութեանի վրայ) սա ռվ է (դիտելով և խիստ) ի՞նչիք կամե-
նում. (ցոյց տալով դէպի դուռը) համեցէք, էս սհաթիս և եթ
դուս գնա՛, թէ չիս ուզում գլուխդ սպանիլ տայ.

ՔԱԼԻ.

Եօվանէ:

ՎԱՐՕ (փաթաթում է)

Մամա ջան,

ՍԻՖԻՐԱԿԱՆ (երկուսին-խիստ)

Գնացէք ձիր օթախը. (Քալին և Վարօն ներս են գնում
սենեակը) համեցէք (Մազութեանին ցոյց է տալի դուռը)

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Եօվանէ:

ՍԻՖԻՐԱԿԱՆ.

Համեցէք, ասում իմ.

ՄԱԶՈՒԹԵԱՆ (ձեռքերը խաչած)

Ա՛յ, սպանէ...

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Ի՞նչիս կամենում, ինչի համա իս էկի, էս հոգու ա-
ւել խօ վունչիչ չը թողիր, էս էլ իս ուզում հանի...

ՄԱԶՈՒԹԵԱՆ

'Ես... 'Ես... խիստ...

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Թէ տուն վիր գրելու ու թախելու էկար. էլ վուր
վունչիչ չունի՞նք. վիր գրէ էս կոտրտած սկամիքը, իմ շի-
նեղն էլ դուս բերէք. հանէ, վուրթի, էդ սերթուկդ, իրան

տո՛ւ. հոգով պայծառ մարթոն ցուրտը վունչիչ չի պակ-
սեցնի... վերջացրու ցանկութիւնդ, բողազներս դուս կարէ,
ամա հոգեհանը մտին չի կանայ դիպչի... ուրիշ էլ ի՞նչ մնաց:
ՄԱԶՈՒԹԵԱՆ

Եօվանէ, դիպ սուտ ին ասի քիզ...
ՍԻՖԻՐԱԿԱՆ

Արճիճ պիտի ածուի սուտ մարթոն բերանը վուր լաւ
ըլի... իմ օղլուշաղը քունը ինչքան է պարտ:
ՄԱԶՈՒԹԵԱՆ

Վունչիչ, ո՞վ ասաւ:
ՍԻՖԻՐԱԿԱՆ (սաստիկ չարացած)

Այ, աննամուս, կիդտուտ մարթ. ինչի՞ չիս ասում վուր
'ես էլ իմ պարտ քունը:
ՄԱԶՈՒԹԵԱՆ

Ի՞նչ պիտի պարտ ըլիս, Եօվանէ ջան:
ՍԻՖԻՐԱԿԱՆ

(ծոցից թղթեր է հանում և շարտում երեսին)

Բաս էս ի՞նչէ, ի՞նչէ ասում իմ, թիբայ-թիբայ կօ-
նիմ, տօ, անիծած. հաշա էլ իս ուտում (վրայ քաշուելով)
ՆԻԿՕԼ (բռնելով)

Հայրիկ ջան, հայրիկ ջան (Պետօն թղթերը հաւաքում ու
տալիս է Սիրիւրականին)

ՄԱԶՈՒԹԵԱՆ. (մազեր քաշելով)

Էս իմ թղթերն է, էստի ո՞վ էբի. հիմի կի ջլիսդան
մաղբուն էլայ...

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Մէ ջուղար տո՛ւ, էս ի՞նչ վեքսիլնիր է, հէսաբ արա:
ՄԱԶՈՒԹԵԱՆ

Էդ վունչիչ... էնէնց...

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Չէ մի վախենա, էս թղթիւրը 'ես չիմ պատուի, վունց
էլ կու թագցնիմ, քիզ կու տամ... 'ես քունը պարտիմ,
ձեռք էլ ունիմ քաշած, հաշա վունց կուտիմ: 'ես ինքս
կու տանիմ դատաստանատուն, վուր էս թղթերու գօրու-
թէնով ինձ վճարիլ տան... մենակ ուզում իմ հաստատ ի-

մանամ թէ 'էփ ինք վիկալի էս պարտքը ես, ես, ես իմ
օղլուշաղը... իժում ումմէն, քիզմէն պարուն պարուն
սովդագար:

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Հաջադ չէ, էդ, թղթիւրը պատրուեցէք, բողազս դուս
կարեցէք Աստծու սիրուն բախշեցէք...

ՍԻՖԻՐԱԿԱՆ (դողալով)

Ի՞նչ բախշինք. ի՞նչ պիտի՞ք բախշի. ջէր գուրձը չիմ
սկսի ու բախշիմ, չէ, 'ես էդէնց բարիհոգի մարթ չիմ,
ես Աստուծ չիմ, 'ես էլ միղաւուր մարթ իմ... հալա դուն
էլ քաշէ էն օրը, ինչոր 'ես քաշեցի ու իժում հիդս խօսի...
ՄԱԶՈՒԹԵԱՆ (յուզուած)

Վուխ էլ իմ կարողութիւնը քու չարի փուխ ըլի, ձե-
ռացադիր կու տամ...

ՍԻՖԻՐԱԿԱՆ, (խառութեամբ)

Ի՞նչ կարողութիւն, ո՞ւմ կարողութիւնը... Գուշումը դը-
թածին, տան ու գեադին, իմ հացով մինձացրածին ո՞վ
էրիտ կարողութիւն. լաւութիւնս է՞տէնց վճարեցիր: Չէ, հալա
մինք շատ բանումնինք դրսուելու. հալա մի շտապի, բանը
գլխեմէն պիտինք կցի...

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Եօվանէ ջան, էսօր էլ քու ճուրտնիմ... բախշէ, սատա-
նէն խաբից...

ՍԻՖԻՐԱԿԱՆ. (դառը ժպիտով)

Հա, հա, հա... սատանէն քիզ կի չը խաբից, դուն խա-
բեցիր սատանին, վուր Աստծու առջիւր գոռոզութիւն կցից-
ինչուր դուն ինձ ու իմ օջախին բան անիր, լիզուով յիդ
չի ասվի: Մինք Աստծու ու խալխի դագաստանի առջիւր
պիտինք դրսավի, թող ամենքը իմանան սուտն ու գուրթը.
Ջէր մէ դուն էլ գնա, ուր որ 'ես էի ու իժում կու խօ-
սիս: Դուն վունցիս համարձակում ինձ մօդ դաս ու իմ
երեսը տեսնիս. դուն, վուրին քուշումը գլխայ, մինձաց-
րի, ցրտեմէն ու քաղցածութեմէն ազատեցի, մարթ

շինեցի. դուն կի լաւութենի մագիար Յիմբեր զըզիլ տւիր՝
օղլուշաղիս վուրբացրիր, հազար սիւ օր քաշիլ տւիր ու
աշխրքի կարողութիւնը խլեցիր... ու էստուէդնէն գալիս-
իս ու աչքումս երևում... դնա, հիռացի, ուղի ըլի
իմ հոգեհան, իմ օսկրտանքի ուտող, իմ սիրեկան օղլու-
շաղի բողազ դուս կարող... (դողում է) վուրթի, Նիկօլ, գըլ-
խեմէս ուղի արա... հիռացրու, էլ աւել չիմ կանայ (հազիւ
էտի վրա կանգնած):

Նիկօլ (վազելով դէպի հայրը և բռնելով)

Հայրիկ ջան, գնանք քո օթախը, հանգստացիր... պա-
տասխանը ես կը տամ... (ներս է տանում և յետէ գալիս):

ՄԱՋՈՒԹԵԱՆ (յուզուած)

Աստուծ, ինչի՞ հոգիս չիս հանում (Եօվանու յետեից կան-
չելով) քու բեբախտութենումը՝ ես միղաւուր չիմ, միղաւուրը
սատանէն է, չար հոգին է. ա՛յ, Աստուծ անիծ է նրան:

Նիկօլ (Մագութեանին)

Հիմա ինչէք կամենում, հօրս պատասխանը խօ իմա-
ցած. չը կարծէք թէ մենք լայեղ կանէինք, որ ձեր վեք-
սիլները գողանանք... չէ, նրանք իրանք եկան, մեզ մօտ
ուղարկեցին. մի վախենաք, յետ կը դարձնենք, միայն դա-
դաստանով:

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Ձէ, չէ, վուրթի, Նիկօլ. պատուտէ, պատուտէ գենացվա:
Նիկօլ

Ի՞նչպէս թէ պատուտէ. բաս ի՞նչ էիք դավի տալի,
ի՞նչի էիք մեզ տանջում, ի՞նչի էիք չոք է չոք աղաչել
տալի,— ուրեմն էս թղթերը սնւտ են...

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Սուտին, սուտ. մամէմէն գողցի, պատուտէ... էդ վեքսիլ-
ներ 'ես շինեցի... ուզում էի քիզ վախեցնի... լաւ ճամբի
էիր կանգնի, չունքի աղջիկս քիզ սիրում էր փեսացու էի
ուզում... հիմի դադաստանը խօ էստունք չի փերը անի,
ինձմէն կու պահանջէ վուր հաստատիմ, 'ես ինչ պիտիմ
անի՝ հօրդ մագիէր ուրիշին ձեռ քաշիլ տուի:

Նիկօլ

Ո՞ւմ հետ էք խօսում այդպէս. ի՞նչ անփորձ ու յի-
մար ինձ տեսաք. չէ, գուր ինձ հետ մի խօսէք... ա՛յ հայ-
րս, հիմա դուք երկուսդ էլ գործը գիտէք, ինչպէս ու-
զում էք բարիշեցէք:

ՄԱՋՈՒԹԵԱՆ (ձեռքը փաթաթելով)

Դուն խելօք տղայ իս, վուրթի, թէ բողաւուրու-
թին գուզիս, կու լսիս ինձ. իմ Նարգիզը քիզ սրտանց սի-
րում է, քի աւել ոչովին չէ ուզում, ուզէ վուրթի, տար
իմ վուխը կարողութիւնը, օղոնգ աշխրքումը բողազս միք
դուս կաշի...

Նիկօլ (հեռանալով)

Ասի որ գուր էք խօսում, իմ եարէն ա՛յնքան խորն
է գնացել սիրտս, որ նրա համար լաւանալ չըկայ... ա-
ռանց իմ հօր կամքի ոտքս էլ չեմ փոխի:

ՄԱՋՈՒԹԵԱՆ. (Ստեփանին)

Ստեփան Մակարիչ, դուն մայինց կտորէ վուր Նար-
գիզի վրա փսակվի, վուղջ իմ կարողութիւնը էսօրէւթ
կու հաստատիմ... օտկէ ու քիզ առաջի սովորաբար կու
շինեմ...

ՍՏԵՓԱՆ

Է՛հ, Տրիփոն Բաղդանիչ, հինգ ջէր մահու քրտնքումը
փղցրիր. քու մէ տեսնելեմէն կուճիս ու պօլօճիկներս
դուս էր թափւում. ա՛յ, հիմի էլ, խօլերեմէն էնէնց չիմ
վախենում, վունցոր քիմէն, Աստուծ սիրուն ձեռը վիկալ
(անցնելով) հիմի 'ես Մագութեանին իմ ու դուն Ստեփանը,
դուքնումը աշկերտ էլ չիմ վիկալնի քիզ, հիմի կի տես-
նում իմ ինչ որ պարտինք էի քուհը...

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Ստեփան Մակարիչ...

ՍՏԵՓԱՆ

Ձէ, չէ, հօրդ ողորմի ձեռը վիկալ. 'ես օտար վուրթի
իմ տուն եկած էս օջախումը, վունցոր կու հրամային է-
նէնց էլ կու ժափգամ:

ՄԱՋՈՒԹԵԱՆ

(Պէտօի թեկնք բռնելով և կողմը քաշելով) դուն մայինց միտդ կու պահիս իմ ամազը... օտկէ իմքին, հիմիսկեպէտ էրկու հարուր թուման կուտամ, գլուխս միք կտրի աշքաւայ. մէ թահր դաբուլ անիլ տու:

ՊԵՏՕ (խիթելով)

Ալպէր աղին երկու հարուր թումնով կու ծախիմ: էրկու հարուր թուման կի չէ, գանա սաղ քաղքումը կու գթնվի էնդդայ փուդ, վուր էս օջախին մուխանաթութին անիմ. ինչիս ասում, ինչ. խօ ասում էի թէ փուշը ծակիլ գիտէ, չէիր աւտում, չը լսեցիր ու դուս էկաւ գէլէն-կիկօ, փուղի մագիար հազիր Մաշօին էիր խոստացի, հաստի պէս վուր դարառլութին իս անում...
ՄԱՋՈՒԹԵԱՆ

Տօ, ջանեներուդ դուս դայ քունն էլ ու էն Մաշօինն էլ. տար, երիք հարուր թուման էլ կուտամ, օղոնց էս փորձանքեմէն ազատէ. քիզ կու լսին...
ՊԵՏՕ

Հիմի էլ քու ողորմութիւնը չիմ ուզում, առանց դատուրի էլ լաւ կուբերիմ. դուն քու կաշուն տիրութիւն արա, ո՞վ կանայ առջիւս կանգնի... Գնա, գնա էստղանց, թէ չէ ամբում է, փիս կարկուտ գուքայ, գլխիդ ճար արա ասում իմ... քիզպէս լաւութիւն ցանողին էտէնց գուքայ (հեռանում է):

ՄԱՋՈՒԹԵԱՆ (կողմը)

Վո՛ւր ջուրը ննգնիմ, ինչ դարման անիմ գլխիս, ումն ասիմ. աշխրքումս գլուխս կարուեցաւ, քարգուրձ անելու դառայ, օղուշաղս բաթմիշ էլաւ. օհ ազահութին, ինչ փիս բանիս էլի (գլխին խփելով շուտով դուրս է գնում):
ՊԵՏՕ (ծիծաղելով)

Ստեփան Մաքարիչ, ինչի՞ քու աղին ճամփա չիս գցում, գնա, կալօշնիրը մօդ տար:

ՍՏԵՓԱՆ

Ջհանդամը քու գլուխն էլ ու դրանն էլ. ջանը կու

հանիմ, հալա նրա էկիպաժումը ձգվիմ, աիս քուշումը ինչ շիկով իմ անցկենում:

ՊԵՏՕ

Տօ, տուտուց, խօ բշիքքը ղիթինայ տուլին... էա կի չէ ու, նիկօլ ջան, արի էն քոճերուն թուցնինք. ա՛յ մարթ, սաղ կարողութիւնը նարգիզինէ տալի...

ՆԻԿՕԼ

Թէ ինձ սիրում ես, էլ միտս մի բերի:

ՍՏԵՓԱՆ. (Պետօին)

Քու արիւր, մինձ շաղաւաթ կուլի աշխրքին, թէ բոճերուն թուցրիր ու սարսաղներուն ու լօթերուն շատացրիր. քու վուրթիքն էլ քիզպէս հօպօպաձէէք կուլին...

ՊԵՏՕ

Բաս չէ՞ ու քու արիւր քիզ պէս վախուկնիր կուլին. (ծիծաղելով) տօ, գոմշի կուղքին չիս կանացի անցկենայ, կծիլ գիտ է, կօսէ. դէնը կորի է. լաւ, սուս կանց, պապէն գալիս է:

Տ Ե Ս Ի Լ VI

Նրարք, ՍիբիրԱԿԱՆ, ՔԱԼԻ և ՎԱՐՕ (նրա են գալիս)

ՍԻԲԻՐԱԿԱՆ.

Գնացի՞լ է. Աստծու սիրուն էլ տուն չը թողնիր. ինչ անիմ կու խաբէ, կու փափկեցնէ... Պետօ, վուրթի, մէ սկամի տու:

ՊԵՏՕ (ցածր աթոռը դնում է բեմի մէջ տեղը)

Համեցէք, ձիա ջան.

ՍԻԲԻՐԱԿԱՆ. (նստում է)

Մէ քիչ խիալումն էլ իմ. գանա իմ աղուհացը ինձ և եթ մուխանաթութին արաւ ու էնէլ էսէնց անողո՞րմ... կուլի ուրիշ օմքին էր: Չէ, չէ, նա էր, նա. նրա աւիլ կուղքի ոչով չունէի, նիկօլ, վուրթի, գնացի՞ր ուր որ ղրգեցի.

ՆԻԿՕԼ.

Գնացի, հայրիկ. բոլոր թղթերը պատրաստել տուի:

ՍԻՖԻՐԱԿԱՆ.

Այ, վուրթի, առնուեհան գնանք դատաստանատուն
ու տեսնինք թէ ով կու դառնայ Սիբիրի արժանի
ՍՏԵՓԱՆ

Մամի ջան, վուրջ իր կարողութիւնը աղջկայ վրա
է հաստատում:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Ո՞վ.

ՍՏԵՓԱՆ

Մագուլթեանը.

ՍԻՖԻՐԱԿԱՆ.

Իժնւմ

ՍՏԵՓԱՆ

Էն աղջկան էս միւր (Նիկոլու վրա ցոյց տալով) աղա-
ղաղէն սիրում է:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Աստուծ հիւռու պահէ, էլ մի ասի:

ՆԻԿՕԼ

Հայրիկ ջան, քեզ անդուրեկան բան չեմ բռնի.

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Նրա կարողութիւնը մայինց քուռն է, վուրթի, ու աղ
ջիկ ինչքան գուզիս կու ճարիս... 'ես ուզում իմ մենակ
իմ տանջանքի համա հատուցում ստանայ... ան ինչ պի-
տի ըլի Տիգրանի աղջիկը. հօր վուրթին չիւրլի:

ՍՏԵՓԱՆ

Օ՛հ, աղջիկը հրիշտակ է.

ՔԱԼԻ

Շատ աստուծապաշտ է:

ՎԱՐՕ

Նա միզմէն աւելի անբաւական է իր հօրմէն:

ՊԵՏՕ

Վա՛ն, Նիկոլու համա, նա ի՞նչ չի տնի. վէքսիլնիրը
նա չը գողցան:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Էգ վունչիչ, շանմէն դառը ո՞վ է տեսի:

ՏԵՍԻԼ VII

Նրանք, ՄԱԶՈՒԹԵԱՆ, ԹԱԶԱԳՈՒԼ և ՆԱՐԳԻԶԸ. (ներս են գալի)

ՄԱԶՈՒԹԵԱՆ. (կնոջը և աղջկանը)

Էկէք, չ'ոքեցէք, էստիէէս գլուխնիրդ սպանեցէք.

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Էլի, հիւռացրէք. (անհանգիստ է)

ՄԱԶՈՒԹԵԱՆ

Մէ խօսք ու իժում թէգուզ էստի էէս կախ արա:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Քու ձէնը ինձ համա մահադիղ է. մինք էգուց կու
ղրստովինք, հիմի կի հիւռացի:

ԹԱԶԱԳՈՒԼ (յուզուած)

Աղա ջան, միղքդ բի, ձիր առջիւը գլուխնիրս կու
սպանինք, բախշեցէք...

ՍԻՖԻՐԱԿԱՆ

'ես ձիգ ըմս գէմարթլէբի. 'ես մենակ ուզում իմ
պարաքանտիրուջը պարաքը վճարիմ,

ՆԱՐԳԻԶ. (լաց լինելով Նիկոլուն)

Նիկժլ, Նիկժլ, չէ՞ս յիշում այլ ես քո Նարգիզին. ես
խօ քեզ չեմ դաւաճանել, իմամաժմունքի առարական միշտ
դու ես եղել. ինչո՞ւ չեա օգնում. խնդրիր հօրդ, որ մեզ կեն-
դանի չը թաղի. մեր աճբողջ կարողութիւնը խօ այժմ
ձե՛րն է. ծնողներիս ներեցէք, այնպէս խեղճ թըն կը գանք.
մեզ համար սա էլ մեծ պատիժ է, մեղքին թողութիւն է
հարկաւոր, երբ որ զղջում են...

ՆԻԿՕԼ (յուզուած)

Ես չի՛նչ չեմ կարող (հեռանալով—կողմ) օ՛հ, այս ի՛նչ
ցաւի մէջ ընկայ:

ՆԱՐԳԻԶ

(մօտենում է Սիբիրականին, ծնկաչոք) Ագնիւ հայր, իմ
բողազը դուս կտրեցէք, միայն սրանց ներեցէք: Ձեր մե-
ծահոգութեամբ ներողամիտ եղէք դէպի մեղանչողները:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

Վիկաց, վուրթի. (Վեր է կացնում) անմիղ է քու խընդիրքը. (կողմ) էլի փորձանքի մէջ գցից Աստուծ. զանա էս անմիղ աղջիկը էս գազանի վուրթին է:

ՊԵՏՕ (կողմ)

Մնամ էստի բանը լաւ կեհայ. (Նիկոլու աւանջին փրսփում է ու շուտով դուրս է գնում)

ՄԱՋՈՒԹԵԱՆ

Նովանէ, էսօրէլէս իմ վուղչ կայեանքը աղջկաս վըրա իմ հաստատում, քու տղէն ուզէ. ինձ ու իմ կնգան թէգուզ տանեմէն դուս անին, օղոնդ քաղքումը ու սաղ խալխումը գլուխս մի կարի.

ՔԱԼԻ (Մաղութեանին)

Էտունք ինչի՞ էնչախը չէիր փիքը անում, պարուն, 'եփոր ջահիլ, անփորձ աղջկամէն հիռացրիր սիրած մարթուն. էնչախը ինչէր իմ հալը՝ էրկու էրկու ծծի երեխայ ձեռիս ունէի բռնած, վունց մէ կոնեմէն ապրելու ճար չունէի ու իմ մարթու անասելի հարստութեանեմէն էրկու դրօշ էիր շարտում ողորմութէնի պէս. ամեն բանը դուն խեցիր, գլխներուս օճորք էլ չը մնաց: Երկու երեխով, քաղցած, ծաքաւ, աղիւր ու չփլախ, խան մէ բարեկամի դռանէի կանգնում ու խան մէկէլինը: Քանի ջէր բոբլիկ վուտով իմ անցկացի քուչումը, 'եփոր էս քու պատուական կնիկը կալասկով էր սէհը անում, վուրնոր իմ մարթու փուղերով էր առած: Ի՞նչ հալումն էի 'ես էնչախը, ջահիլ օրով քաղքի մասխարա դարած... քանի—քանի անպատիւ խօսք իմ իմացի անգճովս քուչի բջերեմէն... շատ էլ զոյրում էի, շատ էլ կարմրում էի, ամա ո՞վ ունէի տէր ու տիրական. վո՞ւր մէկն ասիմ... թող քու օղուշաղն էլ էստունք փորձէ ու էն չախը կուլի խղճըմտանքը զարթնի...

ՆԱՐԳԻԶ (Քալին)

Մայրիկ, մայրիկ, Աստծուն յայտնի է, որ ձեզ ծնողներիցս պակաս չեմ սիրում. ձեր սիրելի որդոց հա-

մար ներողամիտ եղեք, ներեցէք ինձ. . ես սիրում եմ Նիկոլուն (համբուրում է ձեռքը)

ՔԱԼԻ

Քու հակառակ ի՞նչ ունիմ, վուրթի

ՆԱՐԳԻԶ

Նիկոլ, միթէ քո ազնիւ ու բարի սիրտը չի զգացուի իմ դառն արտասուներէրից. երդում եմ մեր անմեղ սիրով, որ այստեղից դուրս ինձ կենդանի չես տեսնի, կամ ինչ կեանք կը լինի:

ՆԻԿՕԼ. (յուզուած)

Հայրիկ ջան, էլ չեմ կարող. առաջի ու վերջին խընդիրքս է—ինձ էլ սրանց հետ մատաղ արա:

ՍԻՖԻՐԱԿԱՆ.

Նիկոլ, վուրթի, ի՞նչ էլաւ քիզ:

ՆԱՐԳԻԶ.

Ազնիւ հայր, որդիքը ինչու պէտք է պատասխանատու լինեն ծնողների մեղքերի համար, նրանք ինչ մեղ ունեն. համարեա հինգ տարեկան հասակից միմեանց սիրում ենը: Օրհնէցէք, բարի, հայր. երդվում եմ ազնուութեամբս, որ ես, որդի լինելով, ձեզանից պակաս չէի պախարակում ծնողներին անիրաւութիւնը:

ՍԻՖԻՐԱԿԱՆ

(ձեռքը փաթաթելով Նարգիզին) Օ՛հ, վուրթի, դուրթ էլ աստուածավախ աղջիկիս էլի, քու կորցնիլը ափսոս է, մեղք էլ է: Միտքս խառնուեցաւ, էլ վունչիչ չիմ հասկանում... Նիկոլուն սիրում իս...

ՎԱՐՕ.

Օրհնէ, մամա ջան, օրհնէ.

ՍՏԵՓԱՆ.

Բախշէ, իմ հէր, խիղճ աղջիկը հալվում է. հերը խօսոտանում է, վուր վուր լայեանքը դրանցն է տալի:

ՄԱՋՈՒԹԵԱՆ

էսօր էւէտ. հիմիսկէւէտ կեհամ նատարիուսի մօդ:
ՍԻՔԻՐԱԿԱՆ

Հսւրթ իս ասում, վուրթի. ասած է՝ «արունը արնով
չի լուացվի» (ինքն իրան մտածելով) բաս Նիկօլուն սիրում իս:

ՆԻԿՕԼ

Հայրիկ ջան, էլ քո կամքին չը հակառակեցայ, թէ
չէ կամ դրա հետ պէտք է պսակուէի կամ գլուխս սպանէի:

Տ Ե Ս Ի Լ VIII.

Նրանք, Պետո և Մաշօ (սերս են գալիս թեք թեք տուած)

ՊԵՏՕ

Չիա ջան, սա իմ գուշիկէն է, օրհնէ. թէ չէ էլ
աւելի չիմ կանայ համբերի:

ՍԻՔԻՐԱԿԱՆ

Աստուծ օրհնէ, վուրթի. հալալ մարթու վուրթի իս
ու հալալ էլ ծիրացնէ Աստուծ.

ՊԵՏՕ

(Ցոյց տալով Նիկօլու ու Նարգիզի վրայ) Սրանցը՝ վան,
սրանցն էլ օրհնէ, է.

ՍՏԵՓԱՆ

Եկէք էլի ամենքդ, աղանչաք արէք.

Բ Ո Լ Ո Ր Ը

Օրհնէ, օրհնէ...

ՍԻՔԻՐԱԿԱՆ

Նա էդ բանին հակառակ չիմ ու շատ էլ ուրախ իմ,
վուր էրկուսդ էլ լաւն իք ու մէկուսմէկու սիրում իք:
Աստուծ բաղդաւուրէ ձիդ ու ճշմարիտ ճանապարհը չը
մոռացնիլ տայ. Աստուծմէն վախեցէք ու մարթումէն բա-
շուեցէք. ինձ էլ մէ քունջ տէք ուրուքմին, վուր քնացած
օրիւս հանգիստ անցկացնիմ: Մահս շատ էլ հիտու չէ, ու-

դում իմ կատարի Աստուծու պատւիրանքը. Նա ինքը թող
ամենքին օրհնէ ու թողուի ին տայ:

(Չեռքերը դնում է Նիկօլու ու Նարգիզի վրա, աչքերը բարձ-
րացնելով դէպի երկինք)

Բ Ո Լ Ո Ր Ը

Աստուծ բաղդաւուրէ, Եօվանէ, Աստուծ էրգար կինք
տանջ...

վարագոյր:

ՎԵՐՋ



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	տող	գրուած է	պէտք է լինի
Բ.	12 վ.	կըգար զանայ	կըգարզանայ.
10	4. ն.	աղջիկը	աղախինը
15	17 վ.	ինձ հաց,	ինձ, հաց
16	8 վ.	դավաճանի	դաւաճանի
22	1 վ.	աալու	տալուս
25	7 ն.	հիմայ	հիմա
»	3 ն.	ասի	ասէի
32	10 վ.	սակյան	սակայն
36	21 վ.	խնրոում իմ	խնդրում եմ
43	5 վ.	դու	տու
74	21 վ.	դամարներումը	դամարներումը
75	6 ն.	ատնում	տանում
77	10 ն.	գիտէնաս	գիտենաս
78	6 վ.	գուն	դուն
78	2 ն.	ունինք	անենք
87	13 վ.	անիծածը	անիծածը
89	1 վ.	անգը ճումս	անգըճումս
93	17 վ.	տան ու	տանու
96	16 ն.	(հեռանում է.)	(հեռանում է):

ՀՀ Ազգային գրադարան



NL0376763

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԷԿ

Յանկացողները կարող են դիմել Թիֆլիսի զբախա-
նութներին և Թարգմանչին—Ներսիսեան դպրոց:

Թարգմանչից դուժարով պահանջողներին 20⁰/₀ գի-
ջում:

Ապառիկ ոչ ոքի չի ուղարկւում: